Հ.Յ.Դ Պատմական

ԴՐՕՇԱԿ



Հանրահավաք
2008 թ. սեպտեմբերի 2

Սեպտեմբեր-Հոկտեմբեր 2008
N 9-10 (1600-1601)

ԴՐՕՇԱԿ

Հանրահավաք

2008 թ. սեպտեմբերի 2

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12 / 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

12 / 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Սեպտեմբերեան տօներ,
սեպտեմբերեան խոհեր... 2

Հանրահավաք

2008 թ. սեպտեմբերի 2 4

Տարածաշրջան

Սամցխե-Ջավախք-Ծալկան մոռացության գրկում

Հայաստանի Հանրապետություն – Վրաստան մաքսային, ճանապարհատրանսպորտային և օդային հաղորդակցության ոլորտի հարաբերությունների հետխորհրդային ընթացքը 10

Իրավագիտություն

Ղարաբաղյան հակամարտությունը
իրավական և քաղաքական
փաստարկների դիտակետից 16

Հայ դաս

Ժան Ժորես
Պետք է փրկել հայերին 25

Նորահայտ վկայություն

Դաշնակցական բեմ

ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները և որոշ համեմատություններ Սոցիներնի անդամ այլ կուսակցությունների արժեքային հասկացությունների հետ 32

Տեղեկանք

Մի քանի նկատառումներ
հայերի մահմեդականացման հարցի շուրջ 37

Նամականի

Նամակներ առ Հայաստան 41

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Տեղատուութիւն 48

Նոր գրքեր

Սև քառակուսի կարմիր անապատում 50

Պատկերասրահ

Սերգեյ Նարազյան 52

Digitized by ARF PR Office

Սեպտեմբերեան օրեր, սեպտեմբերեան խոհեր...

Հայոց պատմութեան արդիական էջերի առանցքը անկախութեան գաղափարն է Գաղափար, որը բոլոր ազգերի եւ յատկապէս հայութեան դէպքում կենդանի, յարաճուն եւ տարածաշրջանային յարափոփոխ քաղաքական միջավայրում ձեւաւորուած հայրենիքին է առնչւում Գաղափար, որի շուրջ ամենօրեայ խորհելու, իրերի դրութեան լոյսի տակ, այդ գաղափարը թարմացնելու, սպառազինելու եւ այդ գաղափարով մըշտապէս ապրելու պարտաւորութեան ու յանձնառութեան առջեւ ենք կանգնած:

Անկախութեան գաղափարի վերսին իրականացումից ահա 17 տարի անց ո՞ւր ենք հասել ազգովին. ներքաղաքական վերջին վայրիվերումները, իշխանութիւն-ընդդիմութիւն կոշտ առճակատումները, բարիկադների եւ տեւից քաղաքական հարցեր լուծելու կողմերի տրամադրութիւնները ապացուցեցին, որ մեր նորածիլ անկախութիւնը բաւականին խոցելի է եւ անպաշտպան, որ ներքաղաքական ցանկացած ուժ ի վիճակի է, եւրամիջավայրերում իր սեփական քաղաքական օրակարգն արծարծելով, փաստօրէն «ներս հրաւիրել» օտարին եւ նրա միջամտութիւնը, իրաւարարութիւնը խնդրել ներքին տարակարծութիւններում եւ այդ ճամբով ազդեցութիւն բանեցնել ներքաղաքական կեանքի վրայ «Այն, ինչ չես կարողանում անել ներսում, անել դրսից»,– ահա թէ որտեղից կարելի է հեշտութեամբ խարխլել անկախութեան հիմքերը:

Մեր հարեւանութեան մէջ տեղի ունեցած վրաց-օսական պատերազմը իր բոլոր արգասիքներով ու դեռ ապագայում դրսեւորուելիք հետեւանքներով, ապացուցեց, որ մենք դեռ չենք հասցրել մեր անկախ գոյութեան համար ստեղծել վստահելի երաշխիքներ Հայաստանի «քթից բռնելու» այս տխուր իրավիճակը կրկնուելու է, քանի դեռ շարունակում է այսպիսին մնալ Հայաստանը... Կամուրջների հասարակ պայթիւններով, բենզինի տագնապներով դիւրութեամբ հնարաւոր է հարուածել մեր անկախութեանը:

Արցախի հիմնահարցի կապակցութեամբ այսօրուայ Ռուսաստանը չի արծարծում հայանպաստ միանշանակ դիրքորոշում եւ դեռ խօսքը Լաւրովի բերանից հազիւ դուրս եկած, մէկ էլ լսում ես տատամսկոս ու ադրբեջանանպաստ յայտարարութիւններ, որոնք աջուձախ կրկնւում են հայաստանեան քաղաքական դաշտում Կայացած պետութիւններն իրենց դիրքորոշումների հարցում առաջինը նկատի են առնում սեփական ազգային շահերը, իսկ մենք՝ միւս բոլոր հարեւանների շահերը, եւ այդպիսով թուլացնում ենք մեր անկախութեան գաղափարը:

Անկախութեան գաղափարի դիտանկիւնից հայ-թուրքական յարաբերութիւնների վերջին քայլերը ռազմավարական նշանակութիւն ունեն Նախագահ Գիւլի ֆուտբոլային այցը լուրջ նախաքայլ է ուղղուած հայ-թուրքական յարաբերութիւնների բնականոնացմանը: Դրա անհրաժեշտութիւնը գիտակցում են բոլորը Խօսքը հէնց այն դիւանագիտական ստանդարտ յարաբերութիւնների մասին է, որ ունեն Ռուսաստանն ու Չինաստանը, որոնք միաժամանակ չեն հրաժարւում միմեանց նկատմամբ տարածքային պահանջներից Յարաբերութիւնների բնականոնացում նշանակում է հէնց այն դրացիականութեան կարգավիճակը, որի մէջ են գտնւում Յունաստանն ու Թուրքիան, երբ վերջինս բռնագրաւել է առաջինի ռազմավարական ամենատերտ բարեկամ երկրի տարածքների մի մասը:

ԴՐՈՇԱԿ

Խմբագրական

Մենք կողմ ենք հայ-թուրքական միջպետական յարաբերութիւնների բնականոնացմանը, դիւանագիտական յարաբերութիւնների եւ բարիդրացիականութեան կարգավիճակի գոյացմանը, սակայն այն պայմանով, որ դրանք չիրականացուեն Հայոց Ցեղասպանութեան եւ Արցախեան հարցերում մեր արտաքին քաղաքականութեան դիրքերի թուլացման հաշուին Եթէ միջպետական նոր փոխյարաբերութիւնները չնպաստեն մեր պետականութեան հզօրացմանը, եթէ դրանք միայն մարտավարական նշանակութեամբ քարոզչական հնարքներ են Թուրքիայի կողմից, ապա այդ դէպքում մեծապէս վտանգուելու է մեր անկախութիւնը Այլ խօսքով՝ երբ հայ-թուրքական յարաբերութիւնները միջոց են դառնում միայն Թուրքիայի գերակայ դիրքերն Եւրոպայում եւ Կովկասում ապահովելու համար, դա նշանակում է, որ Հայաստանը դառնում է տարածաշրջանային մեծ բեմադրութեան երրորդական դերակատարը:

Իրք մենք այսօր կանգնած ենք անկախութեան գաղափարի շուրջ խորհելու պարտաւորութեան առջեւ Կարծում ենք, որ անկախութեան գաղափարի փայփայման եւ մեր անկախ պետականութեան պահպանման համար անհրաժեշտ են հետեւեալները.

–Իրաւական պետութեան սահմանադրական սկզբունքների իրական կիրառման, քաղաքացիական հիմնարար իրաւունքների լիարժէք յարգման, քաղաքական դաշտի ժողովրդավարացման եւ հասարակական կեանքի առողջացման ճամբով պիտի վերացնել «օտարի հետ յոյսեր կապելու» անիծեալ ենթահողը եւ ենթակայական տրամադրութիւնները:

–Դիւանագիտական ամենայաստակ լեզուով Վրաստանի ղեկավարութեանը յիշեցնել, որ Հայաստան-Վրաստան հաղորդակցական կապը փոխադարձ է եւ երկկողմանի, որ այդ կապը շատ հեռու է ռազմավարական ճնշամիջոց ծառայելուց Եւ որ ամենաէականն է՝ որեւէ պետութեան շնչերակի փակումը բնական իրաւունք է ընձեռում տուեալ պետութեանը՝ սեփական միջոցներով վերաբացելու փակուածը:

–Անկախ որոշ պետութիւնների տեսակէտից, Արցախեան հարցում բանակցային գործընթացին առընթեր, միջազգային ոլորտներում լայնամասշտաբ քարոզչութեան թեմա դարձնել այն գաղափարը, որ Արցախը երբեք էլ չի եղել Ադրբեջան կոչուող հանրապետութեան կազմում, եւ, որ Արցախի հիմնահարցի հայանպաստ լուծումը Հայաստանի անկախութեան եւ անվտանգութեան հիմնական երաշխիքն է:

–Թուրքիայի հետ յարաբերութիւններում հարկաւոր է զգոն լինել մեր ապագայ դերակատարութեան հարցով Չընկնել թուրքերի դիւանագիտական խարխափումների թակարդը, արդէն միջազգայնացած, Հայոց Ցեղասպանութեան հարցը հայ-թուրքական միջպետական մակարդակ իջեցնելով Յատկապէս չպիտի թոյլ տալ, որ Հայաստանը դառնայ Թուրքիայի բաց ու հարթ ճամբան դէպի դիւանագիտական նուաճումների բարձրունքը Վերջապէս պիտի չմոռանալ եւ պէտք է տեւաբար յիշեցնել թուրքերին, որ Սեւրի դաշնագրի իրաւական նշանակութիւններից մէկն էլ Թուրքիայի կողմից ՀՀ անկախութեան դեյուրէ ճանաչումն է Նաեւ հարկաւոր է յիշեցնել թուրքերին, որ Սեւրի արգելափակման հետեւողական կեցուածքներով, նրանք, փաստօրէն, մերժում են Հայաստանի անկախութեան եւ ինքնիշխանութեան սկզբունքը...

Սեպտեմբերեան օրերի առիթով խորհենք Անկախութեան գաղափարի շուրջ:



Հայրենակիցներ, մեր պատմական ճակատագիրը կապված է կովկասյան խառնարանի հետ: Կովկասը մի կաթսա է, որտեղ հազարամյակների, դարերի ընթացքում շփվել են տարբեր ժողովուրդներ, կրոններ, քաղաքակրթություններ:

Պատմությունը մեզ դաս է տվել. ռեգիոնը խաղաղ է, հանդարտ եւ կայուն միայն այն ժամանակ, երբ դոմինանտ եւ իշխող են հենց տարածաշրջանի պետական կազմավորումները: Բայց մեր կաթսայի տակ շատ հաճախ խարույկ են վառում այլ՝ հզոր տերություններ, փորձելով իրենք դոմինանտ եւ իշխող դառնալ, իրենց շահը պարտադրել:

Այսօրվա իրավիճակը մեծապես պայմանավորված է թուրքական կայսերապաշտական հայատյաց քաղաքականության եւ բոլշեւիկների համաշխարհային հեղափոխության ցնդաբանական գաղափարի հանցավոր միաձուլման երեւույթով: Մեծ տերությունները մեր տարածաշրջանի գործերին միջամտելու մեկ հիմնական մեթոդ ունեն. նրանք արհեստականորեն առավելություն են տալիս որեւէ մեկ պետության կամ ժողովրդի, հատկապես նրանց, ում առաջնորդները ծառայամիտ են ու պատրաստ ուրիշի գործիք դառնալ: Այս արհեստական առավելությունները, պատառները բաժանելով՝ մեծ տերությունները փորձում են հաստատել սեփական ազդեցությունը, ներկայությունը, փորձում՝ ապահովել սեփական շահը: Այդպես է արդեն որերորդ հարյուրամյակ: Իսկ այն կովկասյան երկրները, որոնք ստանում են մեծ տերությունների կողմից նետված պատառները, որոշ ժամանակ անց սկսում են կարծել, թե դա իրենցն էր ի ծնե, որ դա արդար կերպով է վաստակած, աստվածատուր է, եւ որ իրենք արժանի են դրան: Բայց երբ մեծ տերություններն ինչ-ինչ պատճառներով քաշում են իրենց ձեռքը, առավելություններն էլ սկսում են անհետանալ: Ղարաբաղն էլ

ՀՅԴ Բյուրոյի անդամ ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻ ելույթից



հենց այդպիսի մի պատառ էր Ադրբեջանին նետված՝ հայության ազգային շահերի հաշվին: Պատառ նետողը հեռացավ տարածաշրջանից, Ղարաբաղն էլ՝ Ադրբեջանի կազմից: Բնական է, ոչ մի լաց ու կոծ, ոչ մի ագրեսիվ կեցվածք Ադրբեջանի կողմից այս իրողությունը փոխել չի կարող:

Վրաստանի մասին պետք է խոսել առանձին: Մեր այդ հարեւանի այսօրվա դժբախտությունները հետեւանք են ճակատագրական երկու սխալի:

Նախ 20-րդ դարի եւ այսօրվա վրաց առաջնորդները մոռացել են, որ Վրաստանը պատմականորեն ձեւավորվել է որպես բազմազգ երկիր: Նրանք մոռացել են հին ժամանակների վրաց թագավորների շրջահայացությունը, հանդուրժողականությունը, խոհեմությունը: Ծիծաղելի կլիներ, Վրաստանի հզորության ժամանակաշրջանում, Թամար թագուհու արքունիքում խոսել վրացերենի՝ որպես պետական լեզվի կիրառման մասին: Նույնչափ տարածված էր հայերենը, եւ պատահական չէ, որ Վրաստանի հզորությունը վրացիների հետ միասին կերտում էին Ջավախքի եւ Հյուսիսային Հայաստանի հայ իշխանները: Աբխազներն ու օսերը ունեին ինքնուրույնության բարձր աստիճան: Այդ ամենը Նոյ Ժորդանիայից մինչեւ Գամսախուրդիա եւ այսօրվա իշխանավորներ մոռացվեց եւ առաջ քաշվեց «Վրաստանը միայն վրացիների համար» կործանարար կարգախոսը: Այն գործնականում կիրառելու փորձը բերեց բախումների, արյան եւ անջատողական շարժումների աննախադեպ վերելքի: Վրաստանը ջլատվեց ու կանգնեց մասնատման վտանգի առաջ: Նրա փրկությունը՝ վերելքի եւ զարգացման, անվտանգության եւ կայունության պայմանը Վրաստանի բոլոր ժողովուրդների իրավունքների ճանաչման եւ հարգելու մեջ է: Վրաստանի միասնականությունը կոնֆեդերատիվ սկզբունքների վրա պետք է հիմնվի:

Երկրորդ սխալը արտաքին քաղաքականության ոլորտում էր: Վերնախավի ձգտումը դեպի Արեւմուտք Վրաստանը նետեց թուրք-ադրբեջանական քաղաքականության ոլորտ: Հայաստանի հետ բարեկամության հազարամյակների ավանդույթը դեն նետվեց եւ Վրաստանը ամբողջությամբ ընկավ թուրքական ազդեցության տակ դառնալով կամավոր կցորդը նաեւ այն քաղաքական եւ տնտեսական ծրագրերի, որ կրում էին բացահայտ հակահայկական

բնույթ: Հայաստանի դժվարություններից օգտվելու անխոհեմ ձգտումը բերեց նրան, որ Վրաստանը մասնակից դարձավ մեզ շրջանցելու եւ շրջափակելու բոլոր նախաձեռնություններին: Նավթամուղը, գազամուղը, հիմա արդեն երկաթգիծը: Վրաստանի վերնախավը չհասկացավ, որ սրանք ոչ միայն առավելություններ են, այլ ջլատված, ներքին միասնությունից զրկված երկրի համար նաեւ ծանր բեռ, որը Վրաստանը կռվախնձոր է դարձնում: Արդյունքները ձեզ հայտնի են:

Սակայն կարո՞ղ ենք ասել, որ Վրաստանի վերնախավը եղածից ճիշտ դասեր է քաղել: Այն, ինչ կատարվում է Ջավախքում, այդ մասին չի վկայում: Ակումբների փակում, հայկական կազմակերպությունների գրանցման մերժում, ձերբակալություններ, ճնշումներ. այս ամենը անթույլատրելի է բազմազգ պետության մեջ: Այնինչ այսօր Ջավախքը կարող է եւ պետք է հանդիսանա այն փորձադաշտը, ուր Վրաստանը կապացուցի իր նոր հանդուրժողական քաղաքականության արդյունավետությունը: Հայոց լեզվին ռեգիոնալ լեզվի կարգավիճակ տալով, Ջավախքում հայ-վրացական համալսարանի հիմնադրումով, հայերի համար աշխատատեղեր ստեղծելով, ինֆրակառուցվածքի զարգացումով: Մի խոսքով Ջավախքին մշակութային եւ ադմինիստրատիվ ինքնավարություն տալով, Վրաստանը գրավիչ կդառնա բոլոր ժողովուրդների համար, նույնիսկ նրանց, ովքեր զենքը ձեռքին պայքարել են Վրաստանից անջատվելու համար: Կոնֆեդերատիվ Վրաստանում նրանք նորից կտեսնեն իրենց ապագան: Վրաստանի կազմում ինքնավարության համար Ջավախքի պայքարն արդար է, եւ մենք ջավախահայության կողքին ենք:

ՀՅԴ Բյուրոյի անդամ ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ելույթից



Մեր տարածաշրջանում տեղի ունեցածը դեռ չի ավարտվել: Սա սկիզբն է: Սկիզբը աշխարհաքաղաքական նոր զարգացումների, երկարատեւ լարվածության, որի կենտրոնում մենք ենք, Հարավային Կովկասը:

Մեր պետության ապագան, մեր երեխաների ապագան կախված է մի բանից. ինչպես կպահենք մենք մեզ. կլինե՞նք համախմբված, կգիտակցե՞նք մեր ազգային-պետական շահերը, կկարողանա՞նք պաշտպանել դրանք, թե՞ կտրվենք ուրիշների թելադրած խաղի կանոններին:

Այս հավաքը, ձեր ներկայությունը ապացույց է. դժվար վիճակներում մենք դառնում ենք միաբան: Մենք ինքնուրույն ուժ ենք դառնում: Մենք այստեղ ենք՝ ապացուցելու, որ մեր ճակատագրի տերը մենք ենք: Տերն ենք մեր անցյալի, մեր ներկայի, մեր ապագայի:

Մենք գիտենք, աշխարհը նույնպես երկու բան պետք է հասկանա. Արցախի ազատությամբ է պայմանավորված Հայաստանի ու հայության լիարժեք գոյությունը: Ոչ մի ուժ չի կարող բռնանալ Արցախի ժողովրդի ազատ ապրելու կամքի վրա:

Արցախը Հայաստան է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ Կոսովոյից, եւ Օսեթիայից, եւ Աբխազիայից, եւ Հյուսիսային Կիպրոսից շատ ավելի իրավունք ունի ինքնորոշման: Թե՛ քաղաքական, թե՛ իրավական, թե՛ պատմական ու բարոյական առումներով:

ԼՂՀ-ն կայացած պետություն է: Նրանից բան ունեն սովորելու շատ ու շատ ճանաչված պետություններ: Իսկ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, ժողովուրդ-իշխանություն վստահության առումով սովորելու բան ունենք նաեւ մենք այստեղ՝ Հայաստանում:

Արցախի սահմանները հսկող զինվորը պաշտպանում է Հայաստանը, պաշտպանում է մեզ ու ամբողջ հայությունը: Սա պետք է մեխենք մեր ու մեր զավակների մեջ:

Երկրորդը. առանց Արցախի, առանց Հայաստանի, առանց հայության շահերը հաշվի առնելու Հարավային Կովկասում չի կարող կայուն խաղաղություն հաստատվել: Այո՛, աշխարհի համար նավթը կարեւոր գործոն է: Բայց չպետք է մոռանալ մի պարզ ճշմարտություն. նավթը դյուրավառ հեղուկ է: Սա է մեր պատասխանը Ադրբեջանի ռազմատենչ նկրտումներին:

Սիրելի բարեկամներ,

Մենք ուղղակի պարտավոր ենք աշխարհին ներկայանալ առավելագույն միակամությամբ: Միայն այդ-

պես կհաստատենք մեզ: Միայն այդպես հարգանք կպարտադրենք մեր ու մեր իրավունքների հանդեպ:

Պառակտվել ներսում՝ նշանակում է թուլանալ: Անհանդուրժող լինել միմյանց նկատմամբ, վարկաբեկել պետական ինստիտուտները, փորձել երկրում երկիշխանության պատրանք ստեղծել, նշանակում է բացել մեր դռները օտար ազդեցությունների առաջ:

Հենց սա է անում արմատական ընդդիմությունը: Ուղիղ վեց ամիս մեր ամեն օրը մարտի 1-ի ողբերգության խարանի տակ է: Ուղիղ վեց ամիս արմատական ընդդիմությունը դրանով է ապրում ու փորձում ապրեցնել երկիրը: Մարտի 1-ի ամոթը իրենց հացն ու ջուրն են դարձրել, իրենց գոյության իմաստը:

Ասել ու կրկնում եմ՝ մարտի 1-ի ողբերգական ավարտը կարող էր կանխել մեկ մարդ: Դա առաջին նախագահն էր: Ուրիշ ոչ ոք: Ու նա չարեց այդ: Այլ մեղավոր չկա:

Նման ողբերգությունը քաղաքական ասպարեզում մնալու, գործն դառնալու, մի քանի հազար մարդու համար կուռք լինելու հնարավորություն էր, ու նա բաց չթողեց այդ հնարավորությունը: Մնացածը թատրոն է, որ առաջին անգամ ողբերգություն էր, իսկ երկրորդ անգամ, այս անգամ՝ ֆարս:

Մենք հայտարարել ու հայտարարում ենք՝ ներազգային ճակատում թշնամիներ չունենք: Չենք ուզում ունենալ: Մեր նպատակը ազգային-պետական շահերի շուրջ հայության հիմնական մասին համախմբելն է: Մենք վճռականորեն այդ ճանապարհով ենք գնալու:

Յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր քաղաքական ուժ ինքն է պատասխանատու իր կենսագրության համար: Մենք համոզված ենք՝ սա է ճիշտ ուղին:

Դուք եք ճիշտ, որ այսօր մեկտեղվել եք, ընտրել եք կողք-կողքի կանգնելու, Արցախի ազատությունը պաշտպանելու, կարեւորը երկրորդականից տարբերելու ուղին:

88 թվականից հետո, 20 տարի անց, Արցախի անկախության օրը մենք վերահաստատում ենք ուժեղ, արդար Հայաստան կառուցելու մեր վճռականությունը:

Եվ ուրեմն՝ փառք Արցախում ու Հայաստանի սահմաններում զոհված հազարավոր հայորդիներին:

Փառք ու ազատություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Փառք ու հզորություն մեր նախնիների, մեր ու մեր մեր զավակների Հայաստանին:

ՀՀ ԱԺ պատգամավորության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահ ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ելույթից



Սիրելի հայրենակիցներ.

Այս տոնական օրը հավաքվել ենք բարձրաձայնելու, որ ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման և Արցախի լիարժեք անվտանգության ապահովման կարևորությունը մեզ համար կենսական նշանակություն ունի, ամբողջ աշխարհին ի ցույց ենք դնում մեր ներքին միասնականությունն՝ ազգային ու պետական շահերին հետամուտ լինելու ու ազգային միասնականության ապահովման հարցում:

Եվ այսպես, ինչ ենք պնդել և ինչ ենք շարունակելու պնդել.

1. Միջազգային քաղաքական շրջանակները հետամուտ լինելով նեղ ազգային ու պատմական շահերին միշտ դիմում են երկակի ստանդարտների փորձված միջոցին: Կոսովոյի անկախության արևմտյան և դրան հետևող Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունների ճանաչման ռուսական սցենարները բնավ էլ չեն ստվերում ԼՂՀ բնակչության ինքնորոշման իրավունքը: Ավելին, մեծ տերությունների առաջին դեմքերի կողմից արվող հայտարարություններն ու հղումները միջազգային իրավական փաստաթղթերին ու գործընթացներին միայն վկայում են Արցախի անկախության անցած ուղու իրավական, բարոյական և պատմական անխոցելիությունն ու լիարժեքությունը:

2. Մենք պնդել ու շարունակելու ենք պնդել. տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքների ճիշտ և համապատասխան կիրառման դեպքում դրանք համադրելի են և չեն կարող իրար հակասել, համադրելի են ոչ թե առանձին դեպքում, այլ ընդհանրապես:

3. ԼՂ-ի խնդրի կարգավորման շուրջ բանակցություններում Արցախի բնակչության հանրաքվեի հարցը չի կարելի թողնել որպես հետագայի ճշգրտման հարց, քանզի երկրորդ ինքնորոշման հանրաքվեի գաղափարը լրջորեն կարող է խաթարել 1991 թ. այս օրը կայացած անկախության հանրաքվեի իրավական և պատմական կուռ հիմքերը:

4. Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը ոչ թե Ադրբե-

ջանին սատարելու փորձ է, այլ Թուրքիան անթաքույց ներկայացնում է որպես հակամարտության կողմ: Միջազգային հանրությունը պետք է ընդունի, որ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում իրագործված ջարդերը, մոտ կես միլիոն հայության բռնի տեղահանումը, Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանության շարունակությունն են:

5. Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի և պարտավոր է հանդիսանալ ԼՂՀ անկախության և անվտանգության երաշխավորը:

6. Վստահությամբ ասում եմ. ԼՂՀ կարգավորման շուրջ գործընթացների անէֆեկտիվությունը պայմանավորված ԼՂՀ լիարժեք չմասնակցությամբ: Ուրեմն, հակամարտության կողմ հանդիսացող ԼՂՀ-ն բանակցային գործընթացում պետք է հանդես գա որպես իրավահավասար կողմ:

7. Եվ վերջապես. ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման ներկա փուլում միջազգային հանրության առջև որպես առաջնահերթ խնդիր պետք է բարձրացվի հակամարտող կողմերի միջև ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը բացառող իրավական փաստաթղթի ստորագրման հարցը: Նման փաստաթուղթը պետք է բխի 1994 թ. զինադադարի համաձայնագրից, որի ստորագրող կողմերն են՝ ՀՀ, ԱՀ, ԼՂՀ:

Սիրելի հայրենակիցներ.

Այսօր էլ, ինչպես նախկինում, մեզ պետք չէ լքի անընդհատ պայքարի ոգին և մեր շահերին հետամուտ լինելու արդարացի գիտակցությունը, քանզի միայն այս գիտակցությունն ու պայքարելու ձգտումը կերաշխավորի հայորդիների ապագա սերունդների գոյատևումը՝ Հայաստանի Հանրապետության, ԼՂՀ և Սփյուռքի լիարժեք կենսագործունեությունն ու զարգացումը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ ելույթից



Սիրելի հայրենակիցներ.

Այսօր նշում ենք Լեռնային Ղարաբաղի անկախության 17-րդ տարեդարձը: Այս 17 տարիներից յուրաքանչյուրը մեր ժողովուրդը՝ Արցախում, Հայաստանում և Սփյուռքում վաստակել է դրժվարին ու ծանր մաքառումների գնով: Սա մեծ հաղթանակ է, որ միավորել, միավորում և դեռ դարեր անց միավորելու է մեր ողջ ժողովրդին:

Այս մի տարեդարձն առանձնահատուկ է: Առանձնահատուկ է նրանով, որ համընկել է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գերլարված ու անկանխատեսելի զարգացումներով հարուստ մի ժամանակաշրջանի հետ: Սակայն այս համընկնումը, որքան էլ պատահական, բայց իր ուրույն խորհուրդն ունի, որ ստիպում է մեզ ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը և գտնել մեր ժողովրդի ապագայի համար ամենաանվտանգ ճանապարհները:

Տարածաշրջանային նոր պատերազմը և դրան հաջորդած Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումը Ռուսաստանի կողմից նոր զարգացումներ են խթանել, որոնք ուղղակիորեն առնչվում են Արցախի հիմնախնդրի լուծման հեռանկարին: Այս իրադարձությունները բացառիկ հնարավորություն են ընձեռում վերահաստատելու մեր սկզբունքային դիրքորոշումները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման կապակցությամբ: Իրավիճակը պահանջում է այսօր հստակ ձևակերպել այն մոտեցումները, որոնց միջոցով կարելի է երաշխավորել կայուն խաղաղություն կարգավորման գործընթացում:

Դրանք հանգում են հետևյալին.

- Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմքը պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի անվերապահ և առանց սահմանափակումների կիրառումը: Ինքնորոշման իրավունքի այդպիսի կիրառելիությունը ապահովված է միջազգային բոլոր չափանիշներով՝

ինքնորոշման գործընթացի օրինականությամբ, սեփական տարածքի առկայությամբ, Ադրբեջանի ծրագրած էթնիկ զտումների կանխմամբ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացածությունն ապացուցող անհրաժեշտ բոլոր բնութագրիչների առկայությամբ:

▪ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրականացումը այս չափանիշներով էապես գերազանցում է վերջերս ճանաչված բոլոր սուբյեկտների ինքնորոշման մակարդակը: Ավելին, այդ իրավունքի իրականացումը այլընտրանք չունի: Ցանկացած ուրիշ այլընտրանքի պարտադրումը, ինչպես ցույց տվեցին օսեթական իրադարձությունները, սանձազերծելու է նոր պատերազմ:

▪ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և անվտանգության խնդիրները եղել և մնում են հակամարտության գլխավոր հարցերը՝ կարգավորման բուն առարկան: Միևնույն ժամանակ, կարգավիճակը և անվտանգությունը փոխկապակցված են: Անվտանգության փաստացի ապահովումը և միջազգայնորեն ճանաչված ԼՂՀ կարգավիճակը համատեղ են ձևավորում անվտանգության երաշխիքների անհրաժեշտ ծավալը, ինչն էլ հանդիսանում է նոր պատերազմի վերսկսումը կանխող գլխավոր միջոցը:

▪ Անհրաժեշտ է վերջ դնել այն անհեթեթ իրավիճակին, երբ հակամարտության հիմնական կողմը հանդիսացող Լեռնային Ղարաբաղը չի ներկայանում որպես բանակցությունների իրավահավասար կողմ: Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղին որպես կողմ չճանաչելը ոչ այլ ինչ է, եթե ոչ հրաժարում միաժամանակ թե խնդրի լուծումից, թե իրական բանակցություններից: Իսկ սա իր հերթին արդեն բանակցությունները վերջնականապես ձախողելու և խնդրի լուծման ռազմական ճանապարհը պահպանելու մեծ վտանգ է պարունակում: Իսկ եթե Ադրբեջանը պետք է շարունակի համառել՝ պնդելով, թե Հայաստանը կարող է լիովին փոխարինել Լեռնային Ղարաբաղին, ապա նույն տրամաբանությամբ Թուրքիան էլ կարող է լիովին փոխարինել Ադրբեջանին, մանավանդ, որ սեփական նախաձեռնությամբ Թուրքիան ինքն է ներքաշվում ղարաբաղյան հակամարտության մեջ:

▪ Անհրաժեշտ է նաև հակազդել Ադրբեջանի ջանքերին ուղղված Մինսկի գործընթացը վարկաբեկելուն և բանակցային ձևաչափը փոխելուն: Դա կատարվում է գլխավորապես մեկ մտահոգությամբ՝ Մինսկի խմբի առաջարկները գնալով ավելի ու ավելի անընդունելի են դառնում Ադրբեջանի համար: Առավել ևս հիմա, երբ Մինսկի խմբի համանախագահող երկրները տարբեր ժամանակներում ճանաչել են արդեն երեք հանրապետությունների անկախությունը և, մատնանշելով հանդերձ դրանց տարբերությունները, մեկ հարցում համակարծիք են, որ ինքնորոշման օրինական գործընթացի միջոցով ժողովրդի ձեռք բերած անկախությունը պետք է ճանաչվի, քանզի հակառակը նշանակում է՝ փորձել ետ պտտել պատմության անիվը և վերականգնել աշխարհի նախկին քարտեզը:

▪ Վերջապես ամենակարևոր սկզբունքը, որին պետք է անվերապահորեն հետևել, դա այն է, որ Հայաստանի և Արցախի անվտանգության միակ պահապան ուժը մենք ենք՝ միասնական Հայաստանը, Արցախը, Սփյուռքը: Այս միասնությունը տեսնելով՝ աշխարհը վաղ թե ուշ կճանաչի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ինչպես ճանաչում է մյուս ինքնորոշված պետությունները: Սակայն, մինչև դրան հասնելը Հայաստանը պետք է աշխարհին ներկայանա որպես ԼՂՀ անկախության և անվտանգության երաշխավոր և ձեռք բերի այդ կարգավիճակին համապատասխան միջազգային իրավունքներ: Ըստ այդմ, Հայաստանը իր օրակարգի վրա պետք է դնի ԼՂՀ-ի հետ ռազմաքաղաքական դաշինք ձևավորելու խնդիրը՝ ի հակազդեցություն Ադրբեջանի չդադարող ռազմատենչ հայտարարությունների:

Ներկա իրավիճակում մեր անվտանգության հետ կապված մյուս, ոչ պակաս լուրջ սպառնալիքները գտնվում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դաշտում: Հայ-թուրքական հարաբերությունների բացակայությունը ամենևին էլ դիվանագիտական փակուղու հետևանք չէ, այլ քողազերծում է սոսկ առկա դիմակայությունը երկու երկրների միջև: Ավելին, Թուրքիան իր կողմից ներկայացվող նախապայմաններով, որ ավելի շուտ վերջնագիր են, քան նախապայման, փաստում է, որ գոյություն ունի Հայաստան-Թուրքիա հակամարտություն և, ըստ էության, Հայաստանից պահանջում է կարգավորել այդ հակամարտությունը՝ գնալով միակողմանի զիջումների:

Ավելորդ է ասել, որ այդ նախապայմանները կատարելը նշանակում է պարզապես, որ Հայաստանը սկուտեղի վրա ինքն իրեն պետք է մատուցի Թուրքիային: Հետևաբար, նվազագույնը, ինչ Թուրքիան պարտավոր է կատարել իր պահվածքի մեջ դրական փոփոխություն արձանագրելու համար, պետք է հրաժարվի իր վերջնագրային բնույթի նախապայմաններից: Սակայն, դրանցից մեկը՝ ցեղասպանության ճանաչման գործընթացից հրաժարվելու նախապայմանը, որ Հայաստանից պահանջում է այսօր Թուրքիան,

ոչ միայն անբարոյականության, այլ արդեն համաշխարհային մակարդակի հասնող ցինիզմի օրինակ է: Փաստորեն, իր այս նախապայմանպահանջով Թուրքիան հենց Հայաստանին է փորձում դարձնել իր «դաշնակիցը» այս թափ հավաքող գործընթացը կասեցնելու համար:

Սիրելի հայրենակիցներ, տարածաշրջանի վերջին իրադարձությունների առաջացրած նոր մարտահրավերներն ու սպառնալիքները պարտավորեցնում են մեզ հասնել առավելագույն ներազգային համերաշխության և համախմբման: Այդպիսի միասնություն է մեզ անհրաժեշտ, եթե չենք ուզում կրկնել մեր իսկ պատմության դառը սխալները: Մենք պարտավոր ենք բացառել ժողովուրդը պառակտող որևէ գործողություն, համախմբվել համազգային խնդիրների շուրջ և միշտ պատրաստ լինել զարգացումների վատագույն սցենարներին:

Այս առումով, իշխանությունները ևս պետք է պատրաստ լինեն անհրաժեշտության դեպքում անցնելու երկրի ճգնաժամային կառավարմանը: Սա նախ և առաջ նշանակում է բարեփոխումներին նոր թափ ու որակ հաղորդել, ընդլայնել անխափան հաղորդակցության բոլոր հնարավոր միջոցները, շուտափույթ համալրել պահուստային ռեսուրսները և ակտիվ դիվանագիտական աշխատանքներ իրականացնել համապատասխան միջազգային աջակցությունը և օժանդակությունը ապահովելու հարցում:

Մենք անպարտ և ուժեղ ենք, երբ միասնաբար ենք հաղթահարում մեզ բաժին հասած փորձությունները:

Ուրեմն՝ Միություն, Պայքա՛ր, Հաղթանա՛կ:

Սամցխե-Ջավախք-Ծալկան մոռացության գրկում

Հայաստանի Հանրապետություն – Վրաստան մախային, ճանապարհատրանսպորտային և օդային հաղորդակցության ոլորտի հարաբերությունների հետխորհրդային ընթացքը

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ներկա՝ հետխորհրդային շրջանի միջպետական սահմանը ձևավորվել է կոմունիստական կուսակցական մարմինների որոշումների հիման վրա՝ 1921 թ. նոյեմբերի 6-ին՝ Հայաստանի կողմից՝ Ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի և Վրաստանի կողմից՝ Հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանու միջև Թիֆլիսում ստորագրված պայմանագրերով: Ինչպես նախկինում, հետագայում ևս, մինչև 1930-ական թվականների կեսերը, չդադարեցին վիճելի մնալ հայ-վրացական սահմանային հարցերը: Կնքվել են դարձյալ մի շարք պայմանագրեր, որոնց արդյունքում, թեև ոչ էականորեն, փոփոխության է ենթարկվել Ալեքսանդրապոլ-Ախալքալաք սահմանը, և ամեն անգամ՝ հօգուտ վրացական կողմի: Ինչպես հայտնի է, ներկա Վրաստանը իրեն բացարձակորեն չի համարում Խորհրդային Վրաստանի իրավահաջորդ, հետևաբար նաև՝ «խորհրդային ժառանգություն» հանդիսացող ներկա հայ-վրացական սահմանը: Սակայն, ինչպես միջազգային հանրությունը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ևս, 1991 թ. ապրիլի 12-ին ճանաչել է նորանկախ Վրաստանի անկախությունը դարձյալ Խորհրդային Վրաստանի՝ հենց իր՝ նորանկախ Վրաստանի կողմից իրավաբանորեն չճանաչված և իրավական հիմքի վրա խոցելի սահմաններում:

Այնուամենայնիվ, սահմանային խնդիրներում առերես չվիճարկելով միմյանց հետ և ձգտելով չառաջացնել խնդիրներ՝ ՀՀ-ն և Վրաստանը ներկա փուլում շփվում են միմյանց հետ՝ միմյանց միջև ունենալով վերոնշյալ սահմանն ու տվյալ սահմանի վրա գործող վեց սահմանային-մաքսային անցակետերը:

Անկախության սկզբնական տարիներից հայ-վրացական հարաբերությունները ձևավորվել են խիստ դանդաղորեն: Դրա պատճառ էր հանդիսանում նաև ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած միջազգային իրադրությունը, երբ տարածաշրջանում սկիզբ առան ազդեցության գոտիների բաժանման գործընթացները, որոնք այս կամ այն ձևով ու բովանդակությամբ շարունակվում են մինչ օրս: Ելնելով արցախյան ճակատում պատերազմի մեջ գտնվելու իրողությունից, ՀՀ-ն ձգտել է ամեն գնով պահպանել երբեմն-երբեմն այս կամ այն ձևով խաթարվող հայ-վրացական բարեկամական հարաբերությունները: Իսկ Վրաստանը անկախության հենց սկզբնական շրջանից, երբ երկիրը ներքաշված էր 1990-92 թթ.՝ հարավօսական, իսկ 1992-1994 թթ. աբխազական պատերազմների մեջ, երբ երկրում առկա էր լարվածությունը և մինչ 1994թ. շարունակվող «զվիադիստական» ապստամբությունները, սանձազերծել էր ՀՀ-ի դեմ իսկական կոմունիկացիոն պատերազմ: Արդյունքում, երբ սովորական երևույթ էին դարձել ՀՀ եկող գազամուղի պայթեցումները, շարժակազմերի մշտական

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանի վրա մաքսային անցակետերի ցանկ

հմ	անցակետի անվանումը	հսկողության օբյեկտը	աշխատանքի սկիզբը	անցակետի կարգավիճակը
1	2	3	4	5
1	«Նինոծ մինդա» (ՎՀ) «Բավրա» (ՀՀ)	ուղեբեռների և ուղեւորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
2	«Գուգութի» (ՎՀ) «Գոգարան» (ՀՀ)	ուղեբեռների և ուղեւորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
3	«Ախքյորփի» (ՎՀ) «Պրիվոլնոյե» (ՀՀ)	ուղեբեռների և ուղեւորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
4	«Սադախլու» (ՎՀ) «Բագրատաշեն» (ՀՀ)	ուղեբեռների և ուղեւորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
5	«Ախքյորփի» (ՎՀ) «Ջիլիզա» (ՀՀ)	ուղեբեռների և ուղեւորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային

թալանն ու վերջիններիս մշտական կանգնեցումները Վրաստանի տարածքում, ՀՀ-ի ղեկավարությունը ամեն գնով ձգտել է վերացնել այդ «քաղաքականությունը»՝ գնալով բազմապիսի զոհողությունների:

Ահա այսպիսի պայմաններում, բավական ուշացումով, սկիզբ առան նաև միջպետական՝ ճանապարհատրանսպորտային, մաքսային ու օդային հաղորդակցության ոլորտի հարաբերությունները: Դրանց սկզբնավորումը կարելի է համարել 1993 թ. մայիսի 19-ը, երբ Երևանում տեղի ունեցավ բարձր մակարդակի հանդիպում՝ պետությունների ղեկավարների մակարդակով: Այդ հանդիպումից մեկ օր առաջ, մայիսի 18-ին, ՀՀ Կառավարության թիվ 202 կարգադրությամբ ՀՀ և ՎՀ միջև առևտրատնտեսական և միջպետական աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվեց համապատասխան հանձնաժողով:

Կողմերի (նախագահների, վարչապետների, տարբեր ոլորտների գերատեսչությունների ներկայացուցիչների) 1993 թ. մայիսի 19-ի հանդիպման ընթացքում ի թիվս այլ պայմանագրերի ու համաձայնագրերի, ստորագրվեցին նաև ճանապարհատրանսպորտային, մաքսային ու օդային հաղորդակցության ոլորտի հարաբերություններին առնչվող մի շարք պայմանագրեր: ՀՀ Մաքսային վարչության և ՎՀ Մաքսային կոմիտեի միջև համաձայնագիր կնքվեց՝ երկու պետությունների սահմանի վրա մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ: Հանդիպման ընթացքում «Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով հյուպատոսական բնագավառում սկզբունքորեն նոր հարաբերությունների հաստատման գործնական նպատակահարմարությունը, ելնելով հյուպատոսական ծառայությունների համագործակցության զարգացման փոխշահագրգռվածությունից» կնքեցին ՀՀ և ՎՀ քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին համաձայնագիր:

Մյուս կողմից՝ «ՀՀ կառավարությունը և ՎՀ կառավարությունը, անհրաժեշտ համարելով բարենպաստ պայմաններ ստեղծել իրենց տարածքներ երրորդ պետությունների քաղաքացիություն չունեցող անձանց (օտարերկրյա քաղաքացիներ) մուտքի, տեղաշարժման և ելքի համար, կնքեցին վիզաների փոխադարձ ճանաչման, ինչպես նաև՝ թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության և օդային հաղորդակցության մասին համաձայնագրեր:

1993 թ. հետագա ընթացքում ևս ՀՀ և ՎՀ միջև կնքվել են մաքսային գործերում համագործակցության մասին մի շարք համաձայնագրեր: Մյուս կողմից՝ ՀՀ Կառավարությունը, ինչպես նախորդ՝ 1992 թ., նույնպես և այս ընթացքում իր մի շարք որոշումներով ՀՀ-ՎՀ սահմանի անցակետերում հիմնում էր մաքսային հսկիչ անցակետեր:

1993 թ. ՀՀ Կառավարությունը որոշում կայացրեց ՀՀ մաքսատուրքերի սահմանման մասին, որը հետագայում ենթարկվեց առանձին փոփոխությունների ու խմբագրումների: Միաժամանակ՝ ՀՀ ԳԽ-ի կողմից 1993 թ. հուլիսի 19-ին ընդունվեց ՀՀ Մաքսային օրենսգիրքը, որը, ենթարկվելով բազմաթիվ փոփոխությունների ու խմբագրումների, ուժը կորցրած ճանաչվեց 2000 թ. օգոստոսի 9-ին՝ ՀՀ նոր Մաքսային օրենսգրքի ընդունմամբ: Վերջինս որոշակի փոփոխումներով ու խմբագրումներով ուժի մեջ է առ այսօր: Այստեղ հարկ է նշել մի շատ կարևոր հանգամանք. ՀՀ Կառավարության 06.12.1993 թ. ընդունած «ՀՀ մաքսատուրքերի սահմանման մասին» N 615 որոշման 13-րդ կետում, որը բազմաթիվ խմբագրումներ անցած օրենքում այդպես էլ չի փոփոխվել և ուժի մեջ է առ այսօր, նշվում է հետևյալի մասին. «13. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությանը՝ ապահովել սույն որոշման տպագրումը՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, և մաքսատներում համապատասխան հավելվածների, ցանկերի փակցնումը՝ քաղաքացիներին սույն որոշմամբ սահմանված կանոններին իրազեկ դարձնելու համար»: Փաստորեն, ՀՀ-Վրաստան մաքսային անցակետերում, մասնավորաբար՝ հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հետ կապող Բավրայի մաքսային անցակետում կատարվում է սույն մաքսային օրենքի կոպիտ խախտում, ինչը իր հետ բերում է ուղևորների ու վերջիններիս կողմից իրականացվող բեռնափոխադրումների համար բազմաթիվ դժվարություններ: Վերոնշյալի կապակցությամբ մեր կողմից իրականացված հանդիպում-հարցադրումների ժամանակ ՀՀ Կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի Շիրակի տարածաշրջանային մաքսատան Բավրայի մաքսային կետի Ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ հսկողության 2-րդ բաժանմունքի պետ Աշոտ Խա-

չատրյանը մեր հետ հարցազրույցում նշեց, որ «բնակչությունը տեղեկացված է, կարող եք մտնել Մաքսային կոմիտեի էլ-կայքը, այնտեղ բոլոր ապրանքների գները և չափաքանակները սահմանված և բերված են»: Ինչպես պարզ է դառնում ուղևորների և վարորդների հետ մեր խոսակցություններից, սահմանային խնդիրները առաջանում են հենց նաև նրանից, որ ուղևորներին չի «բացատրվում» բեռների՝ օրենքով սահմանված տեսակի ու չափաքանակի արտահանման ու ներմուծման մասին: Ինչպես վրացական, այնպես էլ հայկական կողմի մաքսային կետերի շենքերի պատերին կամ այլ տեղերում անհնար է գտնել գեթ մի գրություն, որտեղ մանրամասն մատնանշված լինի այդ ամենի մասին: Դրա արդյունքում ծնվում են բազմաթիվ թյուրիմացություններ ու խնդիրներ, որոնցից մեկը վկայեց իր խոսքում Ախալքալաք-Երևան ուղևորատար երթուղայինի վարորդ Ն. Կարսլյանը. «Մարդը չգիտի ինչ և ինչքան պիտի տանի, մի անգամ իմ ուղևորներից մեկը առանց իմանալու հետը վերցրել էր չգիտեմ ինչքան ամպուլա դեղորայք՝ իր անասուններին սրսկելու համար, բռնեցին, ակտավորեցին, տուգանեցին, սարքեցին «տժվժիկ»: Ոչ մի փակցրած բան չկա, որ մարդիկ կարդան, իմանան»:

Բնականաբար մարդկանց այդպիսի անորոշության մեջ պահելը պատահական չէ. վերջինս մաքսավորների համար կարող է հանդիսանալ փողի օրինական և անօրինական շորթման միջոց: Իսկ օրենքին ոչ իրազեկ մարդկանց ավելի հեշտ է «կառավարել»:

1994 թ. ՀՀ Կառավարությունը որոշում կայացրեց ՀՀ Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշեն ավանի տարածքում սահմանամերձ առևտուր կազմակերպելու մասին:

1995 թ. ընթացքում կնքվեց ՀՀ և ՎՀ կառավարությունների միջև ազատ առևտրի մասին պայմանագիրը: Միաժամանակ՝ ՀՀ Կառավարությունը որոշում ընդունեց՝ ՀՀ-ում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներմուծման և արտահանման ոչ տարիֆային կարգավորման մասին:

Ցանկ՝ Հայաստանի Հանրապետության սահմանակից պետությունների այն սահմանամերձ շրջանների, որտեղ գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներն ազատվում են վճարից.

		Տրանսպորտային միջոցների տեսակները	
Պետության անվանումը	Շրջանի անվանումը	մարդատար ավտոմեքենաներ	բեռնատար ավտոմեքենաներ
Վրաստան	Ախալքալաք Ախալցխա Բոլնիս Մառնեուլի Ծալկա	մինչև 7 նստատեղով	մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ 1,5 տոննայից մինչև 3 տոննա բեռնատարողությամբ

Մինչ ՀՀ-ում Լ. Տեր-Պետրոսյանի իշխանության ավարտը՝ 1998 թ., ՀՀ և Վրաստանի միջև կնքվել են ևս խնդրո առարկա ոլորտին առնչվող մի շարք միջպետական պայմանագրեր ու համաձայնագրեր: Միաժամանակ՝ ՀՀ-ն ընդունել է ևս որոշ օրենքներ և որոշումներ, որոնց մեջ կան հետևյալ՝ մեզ հետաքրքրող մասերը. ՀՀ Կառավարության՝ ««Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ՀՀ պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարներ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» 12.12.1997 թ. ընդունված համար N 583 որոշման (ուժի մեջ է մտել՝ 04.01.1998 թ.) 2-րդ կետում նշվում է հետևյալի մասին. «2. Հաստատել Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետությունների այն սահմանամերձ շրջանների ցանկը (կցվում է), որտեղ գրանցված պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, անհատ ձեռներեցները (այսուհետև՝ օգտվողներ) ազատվում են վճարից»: Իսկ այդ ցանկը հետևյալն էր.

Սա Լ. Տեր-Պետրոսյանի 7-ամյա իշխանապետության տարիներին խնդրո առարկա ոլորտում Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանին «շնորհված» առաջին և վերջին արտոնությունն էր, տարածաշրջանի մասին միակ հիշատակումը՝ ոլորտի 7-ամյա պատմության մեջ: Օրենքը ուժը կորցրել է Ռ. Քոչարյանի իշխանության գալուց հետո՝ 25.06.1998 թ., որին փոխարինեց 1998 թ. հունիսի 3-ի N 338 որոշումը:

Ավարտելով հայ-վրացական հարաբերությունների՝ խնդրո առարկա ոլորտին առնչվող այս փուլի (որը պայմանականորեն անվանենք տեր-պետրոսյանական փուլ) վերլուծությունը, նշենք, որ հարաբերությունների այս փու-

լը գտնվել է սաղմնավորումից դեպի սկզբնական ձևավորման ճանապարհին: Չնայած կնքված բազմապիսի պայմանագրերին և ընդունված որոշումներին, այնուամենայնիվ, վերջիններիս մեծ մասը չօգտագործվեց ազգաբնակչության կողմից՝ մնալով այդպես էլ թղթի վրա: Պատճառը պարզ էր. ազգաբնակչությունը իրազեկված չէր այդ ամենի մասին: Իսկ ՀՀ-ն այդպես էլ այս փուլում մոռացության մատնեց Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի գոյությունը: Ինչպես տեսնում ենք՝ 7 տարում առկա բոլոր պայմանագրերից ու ՀՀ որոշումներից միայն մեկն էր վերաբերում Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանին, որի մասին մինչ կհասցներ իրազեկվել տարածաշրջանի ազգաբնակչությունը, այն մի քանի ամիս անց՝ 1998 թ. ամռանը փոխարինվեց նոր որոշումով (վերջինիս մասին կանդրադառնանք քիչ անց):

1998 թ. իշխանափոխությունը և Ռ. Քոչարյանի իշխանության ղեկին գալը նոր քաղաքական ուղեգծի վրա դրեց ՀՀ-ն: Անդրադառնալով խնդրո առարկա ոլորտի տասնամյա ընթացքին այն պայմանականորեն անվանենք «քոչարյանական»:

1998, 1999, 2000 թվականների ընթացքում ՀՀ-ի կողմից շարունակվեցին վավերացվել ՀՀ-Վրաստան՝ նախկինում կնքված և խնդրո առարկա ոլորտին առընչվող մի շարք միջպետական և միջազգային պայմանագրեր, նույնպես ընդունվեցին մի շարք որոշումներ և օրենսդրական ակտեր:

Սամցխե-Ջավախք-Ծալկայի ներկա բազմաչարչար վարորդների և ուղևորների համար որքան էլ զարմանալի թվա, այդուհանդերձ այս տարիներին ընդունված որոշումների և համաձայնագրերի մեջ գոյություն ունեն որոշ կետեր, որոնց «գաղտնազերծումը» նոր լույս կարող է սփռել ոլորտին առնչվող հարցերի վրա: ՀՀ Մաքսային վարչության պետի 28.02.1998 թ. N 7-ՄՎը ««Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ՀՀ պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հաստատման մասին» հրամանի «III. Ճանապարհային վճարից ազատվելու դեպքերը» կետում նշվում է. «3.1. Ճանապարհային վճարից ազատվում են. ...Վրաստանի Հանրապետության Ախալքալակ, Ախալցխա, Նինոծմինդա, Բոլնիս, Մառնեուլի, Ծալկա շրջաններում գրանցված, մինչև 7 նստատեղով մարդատար ավտոմեքենաներով, մինչև 1,5 տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներով և 1,5-ից մինչև 3 տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներով, Հայաստանի Հանրապետություն մուտք գործած անձինք»: ՀՀ Կառավարության 1998 թ. մեկ այլ՝ «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին հունիսի 3-ի N 338 որոշման առաջին կետում ասվում է. «1. Սահմանել, որ Վրաստանի Ախալքալաքի, Ախալցխայի, Նինոծմինդայի, Բոլնիսի, Ասպինձայի, Մառնեուլի և Ծալկայի շրջաններում գրանցված՝

ա) մինչև 7 նստատեղով մարդատար և մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային վճար վճարողներն ամբողջությամբ ազատվում են այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարից.

բ) 1,5-3 տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային վճար վճարողները 50 տոկոսով ազատվում են այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարից»: Սույն որոշումը 2002, 2005 (երկու անգամ) և 2006 թվականների մասնավոր խմբագրումներով ուժի մեջ է առ այսօր: Հետաքրքրական է նաև կատարված խմբագրումների ընթացքը. 21.11.2002 թ. N 1851-Ն՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի հունիսի 3-ի N 338 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման 1-ին կետի ա. ենթակետում նշվում է. «որոշման 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերը «գործող» բառից հետո լրացնել «և Վրաստանի նշված շրջաններում բնակվող» բառերով»: Հաջորդ՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի հունիսի 3-ի N 338 որոշման մեջ լրացում կատարելու մասին» 19.05.2005 թ. N 604-Ն՝ ՀՀ Կառավարության որոշմամբ կատարված խմբագրման մեջ նշվում է. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 3-ի «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կի-

բարկումն ապահովող միջոցառումների մասին» N 338 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետը «Ախալցխայի» բառից հետո լրացնել «Բորժոմի» բառով»: 2005 թ. կատարված 2-րդ խմբագրումը չունի էական ազդեցություն վերոբերյալ որոշման վրա, իսկ ահա վերջին՝ 30.11.2006 թ. N 1758-Ն՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի հունիսի 3-ի N 338 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ վերոնշյալ արտոնությունը «շնորհվում է» ամբողջ Վրաստանին. 1-ին կետի ա. ենթակետ. «որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սահմանել, որ Վրաստանի տարածքում գրանցված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները, այդ թվում՝ թեթև մարդատար ավտոմեքենաները, ազատվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար սահմանված վճարից»»:

Հետաքրքիր մի երևույթ է նկատվում 27.07.2000 թ. N 419՝ «Գյուղատնտեսական մթերքի առանձին տեսակների արտահանման ծավալների ավելացման միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ: Վերջինիս առաջին կետում նշվում է. «1. Սահմանել, որ 2000 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2001 թվականի մարտի 15-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի մաքսային սահմանի անցումային կետերով Հայաստանի Հանրապետություն կարտոֆիլի, կաղամբի և խաղողի փոխադրման նպատակով մուտք գործող մինչև 20 տոննա բեռնատարողությամբ՝ Վրաստանի Սադախլո, Մանգլիսի, Բակուրիանի, Դմանիսի շրջաններում և Թբիլիսի, Քութաիսի, Ռուսթավի, Բորժոմի, Գորի, Զուգդիդի, Ցխենվալի, Թելավի քաղաքներում գրանցված դատարկ (չբեռնված) ավտոտրանսպորտային միջոցներն ամբողջությամբ ազատվում են այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարից»: Հետագա՝ 11.07.01 N 630 և 31.05.02 N 637 խմբագրումներում արտոնության այդ ժամկետները փոփոխվում են համապատասխանաբար՝ «2001 թվականի հուլիսի 1-ից մինչև 2002 թվականի մարտի 15-ը» և «2002 թվականի հունիսի 1-ից մինչև 2003 թվականի նոյեմբերի 15-ը»:

Վերոնշյալ օրինակներից պարզորոշ երևում է, որ ՀՀ Մաքսային պետական կոմիտեի աշխատակիցների բարձրագոչ այն հայտարարությունները, թե «...պետությունը Ջավախքին չի առանձնացնում Վրաստանի Հանրապետությունից, պետությունը չի կարող Ջավախքի հետ ունենալ առանձին պայմանագրեր...», պարզապես նպատակ են հետապնդում քողարկելու Սամցխե-Ջավախք-Ծալկայի հանդեպ ՀՀ-ի՝ այս ոլորտին առնչվող քաղաքականության խոցելի կողմերը: Իրականում՝ ՀՀ-ն կարող է վերոնշյալ բազմապիսի որոշումների ու օրենքների միջոցով արտոնություններ տալ Սամցխե-Ջավախք-Ծալկային՝ հեշտացնելու վերջինիս՝ մայր պետության հետ կապն ու խթանելու վերջինիս տնտեսության զարգացումը: Սակայն ՀՀ-ի ցանկությունները միշտ չէ, որ հիմնված են եղել գոյություն ունեցող հնարավորությունների վրա:

Հետագա՝ 2001, 2002, 2003, 2004 և 2005 թվականներին թեև նվազ քանակությամբ, այդուհանդերձ կնքվել են ոլորտին առնչվող ՀՀ-Վրաստան որոշ համաձայնագրեր, միաժամանակ՝ ՀՀ կողմից ընդունվել են ինչպես նախորդներին փոխարինող, այնպես էլ մի քանի նոր որոշումներ: Այս ընթացքում ՀՀ-ն և Վրաստանը ստորագրել են և մաս կազմել ոլորտին առնչվող մի քանի բազմակողմ պայմանագրերի:

Այս ժամանակահատվածի պայմանագրերը և ՀՀ-ի՝ ոլորտին առնչվող որոշումները ևս իրենց մեջ այս կամ այն ձևով հիշատակում չունեն Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի մասին: ՀՀ-ի կողմից տարածաշրջանը ինչպես այս, այնպես էլ անչափ կարևոր այլ ոլորտներում այդպես էլ «չառանձնացվեց» Վրաստանից: Իսկ մի քանի անչափ կարևոր որոշումներ, որոնք ուժի մեջ են մինչ օրս, այդպես էլ «մութ» մնացին տարածաշրջանի ազգաբնակչության համար: Դրանցից էր՝ «ՀՀ Կառավարության որոշումը ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքերի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների առանձին տեսակների բնաիրային չափերը հաստատելու մասին» 2001 թ. մարտի 29-ին ընդունված N 251 որոշումը (փոփոխված՝ 28.06.2007 թ. N 758-Ն օրենքով): Այս որոշման «Ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների, բացառությամբ օդային տրանսպոր-

տային միջոցներով տեղափոխվող ապրանքների, առանձին տեսակների բնաիրային չափերը» բաժնում ամենայն մանրամասնությամբ տրվում են այն ապրանքների տեսակներն ու սահմանված բնաիրային չափերը, որոնք իրավունք ունեն ֆիզիկական անձինք առանց մաքսատուրքի վճարման տեղափոխել իրենց հետ: Սակայն այս որոշման «գաղտնի» լինելու պարագան ստիպում է ՀՀ-Վրաստան սահմանը հատող ուղևորներին ամենօրյա բախումների մեջ մտնել մաքսային ծառայության աշխատակիցների հետ, որոնք իրենց հերթին լավագույնս օգտագործելով ուղևորների շրջանում տիրող այս ապատեղեկատվությունը, շորթում են լրացուցիչ գումարներ: Նույնը կարելի խոսել նաև ՀՀ մաքսային ոլորտը կարգավորող այլ որոշումների ու պայմանագրերի մասին, որոնք չնայած ոչ մի արտոնություն չեն տալիս Սամցխե-Ջավախք-Ծալկայի բնակիչներին, այնուհանդերձ՝ այդ որոշումների իրագեկումը շատ բաներով կհեշտացներ մարդկանց Սամցխե-Ջավախք-Ծալկայից ՀՀ մուտքն ու ելքը կամ գոնե առնվազն կունենար որոշ ազդեցություն այս ամենի վրա:

«Քոչարյանական» փուլի վերջին երեք տարիներին՝ 2006, 2007 և 2008 թվականների ընթացքում կնքված հայ-վրացական պայմանագրերն ու ընդունված որոշումները ևս ոչ մի փոփոխություն չբերեցին խնդրո առարկա ոլորտում՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի մասով:

2006 թ. ՀՀ Կառավարությունը իր 23.02.2006 թ. N 211-Ա և 10.08.2006 թ. N 1444-Ա որոշումներով համապատասխանաբար՝ 45 և 110 մլն. դրամ գումար է հատկացրել ՀՀ Կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեին՝ Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային կետի տարածքում կատարվող շինարարության ընթացքում չնախատեսված լրացուցիչ շինարարական աշխատանքների համար, իսկ տարեվերջին ՀՀ Կառավարությունը ընդունեց որոշում՝ «Բագրատաշենի սահմանամերձ շուկա» ՓԲԸ-ն լուծարելու մասին: Շարունակվեցին Սամցխե-Ջավախք-Ծալկա-ՀՀ շփման գծում մաքսային և սահմանային գոտիների «ամրակայման» աշխատանքները. 2007 թ. ՀՀ Կառավարությունը 132279,5 հազ. դրամ գումար է հատկացրել ՀՀ Կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեին՝ Շիրակի մաքսատան Բավրայի մաքսային կետի շինարարական աշխատանքների կատարման համար:

Միտումնավոր մանրամասնելով ՀՀ-Վրաստան մաքսային, ճանապարհատրանսպորտային ու օդային հաղորդակցության ոլորտի հարաբերությունները, ինչպես նաև ՀՀ-ի կողմից այդ ոլորտներում ընդունված մի շարք օրենքներն ու որոշումները, կարող ենք հանգել հետևյալ եզրահանգումներին. 1. չնայած ՀՀ-Վրաստան մաքսային, ճանապարհատրանսպորտային ու օդային հաղորդակցության ոլորտի բազմապիսի պայմանագրերին ու համաձայնագրերին, այդուհանդերձ՝ հետխորհրդային շրջանի ողջ ընթացքում այդպես էլ պետությունների միջև չձևավորվեց միասնական տնտեսական գոտի: Դրան խոչընդոտում էր ինչպես Վրաստանի՝ ԱՊՀ-ին բավականին ուշ անդամակցումը, այնպես էլ վերջինիս մշտական անկայուն վիճակն ու մշտապես ոչ ռուսամետ ճամբարի երկրների կողմը թեքված լինելը: 2. Վրաստանի՝ ԱՊՀ-ից դուրս գալու փաստը կողմերին ստիպելու է այժմ վերանայել երկու երկրների միջև ԱՊՀ շրջանակներում նախկինում կնքված՝ ինչպես միակողմ, այնպես էլ բազմակողմ մի շարք պայմանագրեր ու համաձայնագրեր: 3. Նշված ոլորտի ՀՀ-Վրաստան միջպետական ոչ մի պայմանագիր կամ համաձայնագիր իր կետերով չի առնչվել Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանին, «հասկանալի» պատճառներով դրան չի ձգտել Վրաստանը, դրանում շահագրգռվածություն հանդես չի բերել նաև ՀՀ-ն: 4. ՀՀ-ն ի վիճակի է եղել ընդունելու որոշումներ, որոնք հնարավորություն կտային Սամցխե-Ջավախք-Ծալկայի ազգաբնակչությանը՝ օգտվելու բազմապիսի արտոնություններից, սակայն վերջինիս կողմից չեն ձեռնարկվել այդպիսի քայլեր. հատուկենտ այդպիսի որոշումները ոչ մի նշանակություն չեն ունեցել, ինչի արդյունքում Սամցխե-Ջավախք-Ծալկայի տնտեսական վիճակը հասել է ծայրագույն վատթար վիճակի: 5. Նշված ոլորտի ինչպես ՀՀ-Վրաստան միջպետական պայմանագրերի ու համաձայնագրերի, այնպես էլ ՀՀ-ի կողմից նշված ոլորտները կարգավորող օրենքների ու որոշումների մասին ոչինչ չի իմացել ՀՀ-Վրաստան սահմանը հատող ուղևորը, և ոլորտի ծառայությունները ոչ մի քայլ չեն արել այդ ամենի մասին ուղևորներին իրազեկելու ուղղությամբ, ինչը առիթ է հանդիսացել ոլորտի աշխատակիցների համար այդպիսի ուղևորների սահմանային անցումը «տնօրինելու» սեփական հայեցողությամբ կամ խղճի թելադրանքով:

Ղարաբաղյան հակամարտությունը իրավական և քաղաքական փաստարկների դիտակետից

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր

Անհնար է խոսել կոնֆլիկտների քաղաքական կարգավորման մասին եւ չդիմել իրավական սկզբունքներին ու իրավունքի տրամադրած լեզվին:

Հակամարտությունները բազմադեմ, բազմաչափ երևույթներ են: Քաղաքական ու իրավական չափումներից բացի, սովորաբար խոսվում է նրանց պատմական, քարոզչական, մշակութային, տնտեսական և այլ չափումների մասին: Սակայն քաղաքական ու իրավական տեսանկյուններն, այնուամենայնիվ, առանձնանում են մնացյալի մեջ: Դա բացատրվում է նրանով, որ ցանկացած հակամարտություն այսպես թե այնպես «պտտվում է» *արդարություն, հավասարություն, իշխանություն* հասկացությունների շուրջ, որոնց քաղաքական ու իրավական իմաստները գերակա են նրանց այլ իմաստների նկատմամբ: Ըստ էության չկա որևէ **մերօրյա հակամարտություն**, որը չներկայանա քաղաքականության ու իրավունքի զգեստներով, եթե նույնիսկ այն ծագել է զուտ տնտեսական, մշակութային, դավանաբանական կամ այլ մի գետնի վրա: Դա առավել ևս վերաբերում է այն հակամարտություններին, որոնցում իբրև կողմեր ներքաշված են խոշոր հանրություններ (դասակարգեր, ազգեր, պետություններ, կրոնական հոսանքներ և այլն):

Վերը մենք պատահաբար չէ, որ ընդգծեցինք «մերօրյա հակամարտություն» բառերը: Հեռավոր անցյալի պրիմիտիվ հասարակություններում նույնպես կային իշխանության ու ենթակայության հարաբերություններ: Սակայն դրանք չէին գիտակցվում կամ ձևակերպվում որպես իրավական հարաբերություններ: Իշխանությունը գործում էր ուղղակի ձևով, ուժի դիրքից ու անունից: Իրավունքի՝ որպես հասարակական հաստատության, կայացումը պատմականորեն վկայել է անընդհատ բարդացող հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին: Նրա կայացումից հետո ազատության, հավասարության, արդարության հասարակական-քաղաքական իդեալները գիտակցվել են որպես և՛ քաղաքականության, և՛ իրավունքի «իրավասությանը» հավասարապես պատկանող երևույթներ: Ստրկատիրական իրավունքի սկզբունքներից մինչև մեր օրերի իրավական պետության, ժողովուրդների ազատ ինքնորոշման ու մարդու իրավունքների հայեցակարգերը ձգվում է իրավունքի զարգացման տրամաբանական հաջորդափոխության մեջ գտնվող մի պատմություն, որն արտացոլում է հասարակական զարգացման համաշխարհային ընթացքը իր գլխավոր միտումների ու օրինաչափությունների տեսակետից: Պատկերավոր ասած, ԻՐԱՎՈՒՆՔՈՎ է անցնում քարանձավից քաղաքակրթություն տանող մարդկության ուղին: Այսօր այլևս անվիճելի է, որ որքան հեռու է միջազգային հակամարտությունների կարգավորումը ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, այնքան նման կարգավորումը հեռու է քաղաքակրթության վերընթաց զարգացման վեկտորից, այնքան այն հետընթացով մեզ տանում է դեպի քարանձավ, դեպի ուժի վայրենի գործադրումը:

Սույն վերլուծության մեջ մեզ համար հատկապես կարևոր է արձանագրել այն փաստը, որ քաղաքական զարգացումները (համաշխարհային, թե լոկալ) «իրենք իրենց գտնում» և ինքնարտահայտվում են իրավունքի մեջ և իրավունքի լեզվով: Եվ հենց այդ անխզելի կապի մեջ է քաղա-

քականությունը գիտակցում և հաստատում իր ինքնությունը որպես գլոբալ քաղաքակրթական երևույթ:

Ընդունված է ասել, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը քաղաքականացվել և դուրս է բերվել իրավական դաշտից: Բայց եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ թե՛ Բաքվի, թե՛ միջնորդների տեսակետներն ու դատկերացումները խնդրի մասին ձևակերպվում են իրավունքի լեզվով, և նրանք իրենց առաջարկություններում խոսում են իրավունքի անունից:

Եվ այսպես, միջազգային իրավունքն է մեր օրերում տրամադրում հակամարտությունների կարգավորման միջոցները (սկզբունքները, հասկացութային համակարգը) և, հետևաբար՝ լեզուն: Իր հովանու տակ վերցրած հակամարտությունների կարգավորման գործընթացներում միջազգային հանրությունը մեր օրերում ներկայանում է (և չի կարող չներկայանալ) այն քաղաքակրթության անունից, որի վարքի սկզբունքները ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի և համանման առավելապես իրավական բնույթ ունեցող հիմնարար փաստաթղթերում: Դա իրոք այդպես է: Բայց մյուս կողմից ակնհայտ է նաև այն, որ կոնֆլիկտների կարգավորումը, որպես կանոն, քաղաքականացվում է, և դրանց շուրջ վարվող բանակցություններում իրավունքի (այսինքն՝ միջազգային իրավունքի) հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների գործադրումը սովորաբար ընդհարվում է քաղաքական արգելքների:

Թվում է՝ վիճակը պարադոքսային է: Մի կողմից, ինչպես պնդեցինք, անհնար է շրջանցել միջազգային իրավունքի նորմերը և նրա անունից առաջադրվող փաստարկները, քանի որ ամեն մի նահանջ այդ նորմերից գիտակցվում է իբրև նահանջ դեպի կամայականություն, դեպի քարանձավ: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ մեր աչքի առաջ հակամարտությունների կարգավորման գործընթացները քաղաքականացվում են, այնուամենայնիվ, շրջանցելով ժամանակակից քաղաքակիրթ վարքի այն կանոնները, որ, ինչպես նշվեց, առավելապես տրվում են միջազգային իրավունքի հասկացություններով, սկզբունքներով ու լեզվով, որ արձանագրված են միջազգային հիմնարար փաստաթղթերում:

Ինչպե՞ս է դա իրականում կատարվում: Ղարաբաղյան հակամարտությունը մեզ հրաշալի նյութ է տրամադրում այդ հնարախաղի ներքին տրամաբանության բացահայտման համար:

Արդեն իսկ այն հանգամանքը, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի հովանու տակ այսօր ընթանում են Ղարաբաղյան հակամարտության շուրջ տարվող բանակցությունները, մինչ օրս իր սեղանին չունի հիմնախնդրի իրավական փաթեթը և կողմերին չի խրախուսում այն ներկայացնել, թվում է, բաց տեքստով հաստատում է, որ խումբը հենց սկզբից հրապարակավ և գիտակցաբար հեռացել է խնդրի կարգավորման իրավական ուղուց և այն դրել է քաղաքական հունի մեջ: Բայց մյուս կողմից՝ տարածքային վեճերի շուրջ ծավալված կոնֆլիկտի (իսկ Ղարաբաղյան կոնֆլիկտը այդպիսին է) կարգավորման լեզուն չի կարող չօգտվել միջազգային իրավունքի բառապաշարից (սկզբունքներից, նորմերից), չի կարող շրջանցել դրանք:

Վերցնենք թեկուզ այն առաջարկը, որի դեմ վետոյի իր իրավունքը օգտագործել է Հայաստանի Հանրապետությունը 1996 թվականի դեկտեմբերի 3-ին: Խոսքը Լիսաբոնի գագաթնաժողովում քվեարկության դրված փաստաթղթի մասին է, որի բովանդակությունը լակոնիկ բանաձևումով ներկայացրել է ԵԱՀԿ այն ժամանակ գործող նախագահ Կոտին իր հատուկ հայտարարության մեջ: Հայտարարության մեջ թվարկված՝ կոնֆլիկտի կարգավորման երեք սկզբունքներից երրորդը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքներին (ինչը նույնպես կարելի է «թարգմանել» միջազգային իրավունքի լեզվի), իսկ ահա առաջին երկու սկզբունքները զուտ իրավական ձևակերպումներ են՝ տրված միջազգային իրավունքի, կարելի է ասել, անխառն լեզվով: Դրանցից առաջինով ԵԱՀԿ երկրները պաշտպանում են Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, իսկ երկրորդը վերաբերում է ինքնորոշման իրավունքի հիման վրա Լեռնային Ղարաբաղի՝ հատուկ համաձայնագրով սահմանվելիք իրավական կարգավիճակին, որը Լեռնային Ղարաբաղին պիտի ապահովեր ինքնավարության ամենաբարձր աստիճանը Ադրբեջանական Հանրապետության կազմում: Առաջադրված երկու սկզբունքների բոլոր բանալի բառերը իրավունքի բառապաշարից են, իսկ իրենք՝ սկզբունքները, վերցված են միջազգային իրավունքի զինանոցից:

Զարմանալի բան: Իսկ մենք արդեն որերորդ տարին է, պահանջում ենք հարցը քաղաքական

դաշտից տեղափոխել իրավական դաշտ և նրան տալ իրավական լուծում: Դու մի ասի (կամ ավելի ճիշտ՝ կարելի է կարծել, թե) հենց այդպես էլ արվում է: Հարց է ծագում՝ եթե մեզ հրամցնում են միջազգային իրավունքի անունից ձևակերպված լուծումներ, ինչո՞ւմ է դրսևորվում հիմնախնդրի քաղաքականացումը, ի՞նչ զգեստով, դիմակով կամ կերպարով է այն ներկայանում: Հենց այստեղ է, որ մենք ընդհարվում ենք բուն խնդրին:

Հակամարտությունների քաղաքականացման այն հնարքները, որոնց տրվում են «իրավական զգեստներ», արտակարգ բազմազան են և արժանի են հատուկ քննության: Կախված այն բանից, թե հատկապես ինչ կոնկրետ հարց է քննարկվում, դրանք կարող են դասակարգվել տարբեր հիմքերով: Այստեղ մենք դրանք կբաժանենք երկու մեծ խմբի: Առաջին խմբին կդասենք այն հնարքները, որոնք, պայմանականորեն ասած, ստանում են տեքստային արտահայտություն: Ասել է թե՝ հնչեցվում են հայտարարություններում, պայմանագրերում, պաշտոնական այլ փաստաթղթերում: Դրանք առավելապես այն հնարքներն են, որ ստանում են փաստերի, փաստաթղթերի ու դեպքերի մեկնաբանության բնույթ: Լիսաբոնյան գագաթնաժողովում Կոտիի վերը հիշատակված հայտարարությունը խնդրի քաղաքականացման նման կարգի հնարքի դասական օրինակ է: Նրանում բաց տեքստով ընդունվում է տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայությունը ինքնորոշման իրավական սկզբունքի նկատմամբ, չնայած ակնհայտ է, որ եթե դա իրոք այդպես լիներ, ինքնորոշման ըսկզբունքը կիմաստազրկվեր և ընդհանրապես դեն կշպրտվեր: Բաց տեքստով խնդրի քաղաքականացման դրսևորում է նաև այդ երկու սկզբունքների միջև անհաղթահարելի հակասություն տեսնելը, երբ դարձյալ ակնհայտ է, որ ժողովուրդների ազատ ինքնորոշումը չի նշանակում այն երկրների տարածքային ամբողջականության խախտում, որոնցից նրանք ինքնորոշման իրենց անօտարելի իրավունքով անջատվում են:

Պարզվում է սակայն, որ քաղաքականացման այն հնարքներից բացի, որոնց կարելի է «բռնել» փաստաթղթերի տեքստում, կան տեքստերից դուրս մնացած, նրանցում տեղ չգտած հնարքներ: Դրանք, ճիշտ է, դուրս են մնում տեքստերից, բայց ոչ հակամարտությունների կարգավորման գործընթացներից: Դրանք, դարձյալ պայմանականորեն ասած, «լռության հնարքներն են»: Խնդրի քաղաքականացման հնարքներն այստեղ պետք է փնտրել տեքստերից դուրս՝ նրանցում տեղ չգտած ձևակերպումներում ու փաստարկներում: Ղարաբաղյան հակամարտության քաղաքականացման տեխնոլոգիաների բացահայտման տեսակետից դրանք ավելի քան կարևոր են:

Իրավական ու դատական փաստերի լռության մատնումը որպես խնդրի քաղաքականացման հնարք:

Այժմ պատկերացնենք, թե փորձագետների մի խումբ հենց ԵԱՀԿ պատվերով իր այդ առաջարկության համար նախապատրաստել է իրավական այն փաստերի ու փաստաթղթերի համառոտ ցանկը, որոնք պիտի դրվեին ԵԱՀԿ լիսաբոնյան առաջարկի հիմքում: Այդ հիմնավորման մեջ ուզած-չուզած պետք է տեղ գտնեին հետևյալ փաստերը:

- Ադրբեջանական Հանրապետությունը տարածաշրջանի քաղաքական քարտեզում հայտնվել է 1918 թվականին և քաղաքական իրողություն է դարձել նույն թվականին դեպի Անդրկովկաս թուրքական ռազմական ինտերվենցիայի արդյունքում: Մինչ այդ «Ադրբեջան» անունով պետական կամ վարչական միավոր և կամ աշխարհագրական տարածք Արևելյան Անդրկովկասում չի եղել:

- Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ԱդրԽՍՀ) Արևելյան Անդրկովկասում հիմնվել է որպես ոչ-ազգային, նոր տիպի խորհրդային հանրապետություն և մինչև 30-ական թվականները չի ունեցել տիտղոսակիր ազգ: Այն հիմնվել է որպես հայերի ու մուսուլմանների ինտերնացիոնալ հանրապետություն: Կովկասյան թաթարները (երկրամասի թուրքերը) եղել են երկրամասի իսլամ դավանող ժողովուրդներից մեկը միայն, որոնք հանրապետության անունը որպես նոր էթնոնիմ (նոր ինքնանվանում) ընդունելու հնարքով (խոսքս «ադրբեջանցիներ» էթնոնիմի մասին է) միայն 30-ականներին ձեռք բերեցին տիտղոսակիր ազգի կարգավիճակ:

- Լեռնային Ղարաբաղը նախկին ԱդրԽՍՀ սահմաններն է մտցվել 1921 թ. Կովբյուրոյի հուլիսի 5-ի չընդունված, բայց իրագործված որոշման հիման վրա այն բանից հետո, երբ այն ճանաչված է եղել Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անկապտելի մաս: Որոշումը «ընդունել է» Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոն (ՌԿ(բ)Կ Կովբյուրո)՝ երրորդ եր- կրի կուսակցական, ոչ սահմանադրական մի մարմին, որը տարածքային հարցեր լուծելու իրավասություններ չի ունեցել: Որոշումը իրավական տե-

սակետից համարժեք էր ՀԽՍՀ տարածքի բռնազավթմանը: Նույն կարգավիճակում հայտնվել է նախօրյակին հենց Բաքվի կողմից ՀԽՍՀ անկապտելի մաս ճանաչված Նախիջևանի երկրամասը, որի վերաբերյալ այսօր էլ կա գործող միջազգային պայմանագիր:

- ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի այդ «որոշմամբ» հօգուտ ԱդրԽՍՀ բռնազավթվել է ողջ Լեռնային Ղարաբաղը՝ նրան ԱդրԽՍՀ կազմում լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով: 1923 թվականին Բաքուն, խախտելով Կովբյուրոյի առանց այն էլ իրավազորություն չունեցող և իրականում չընդունված այդ որոշումը, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դեկրետավորել է երկրամասի մի մասի վրա՝ մարզի սահմաններից դուրս թողնելով Լեռնային Ղարաբաղի մեծ մասը:

- 1988 թ. փետրվարին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նիստի որոշմանը, որը քաղաքակիրթ ձևով ընդունված դիմում էր ԱդրԽՍՀ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն իշխանություններին մարզը ՀԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանքով, Բաքուն պատասխանեց հայերի սումգայիթյան ջարդերով, որը 1988-1991 թվականներին ընդունեց ողջ հանրապետության տարածքով հայերի նկատմամբ զանգվածային բռնությունների ալիքի բնույթ: Այդ թվականներին Արևելյան Անդրկովկասի հայությունը ենթարկվեց ցեղասպանության:

- 1991 թվականի օգոստոսի 30-ին ԽՍՀՄ լուծարման ընթացքում Բաքուն հրաժարվեց ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնեց 1918 թ. թուրքական ինտերվենցիայի արդյունքում ի հայտ եկած, միջազգային ճանաչման չարժանացած, օրինական ու լեգիտիմ սահմաններ ձեռք չբերած և ընդամենը տասնհինգ ամիս գոյատևած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը, որի կազմում չեն եղել ո՛չ Նախիջևանը և ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղը: Խորհրդային իրավաժառանգությունից հրաժարումը Բաքուն տարընթերցումներ բացառող տեքստով ամրագրեց 1991 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունած «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտով: Հենց Բաքվի կողմից ընդունված այդ ակտերից բխում է իրավական այն հետևությունը, որ 1991 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին (ԼՂՀ հռչակումից մինչև համաժողովրդական հանրաքվեն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ինքնանվանումը՝ Արցախ) իրավական տեսակետից անբասիր ձևով կայացել է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում և այսօր վերահսկում է միայն մի մասը այն տարածքների, որ Կովբյուրոյի ապօրինի որոշմամբ բռնագրավվել էին Խորհրդային Հայաստանից՝ դրանց ԱդրԽՍՀ սահմաններում լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով:

- 1991-1994 թթ. Բաքուն պատերազմ է սկսել երիտասարդ ԼՂՀ դեմ, փորձելով բռնությամբ այն իրեն ենթարկել: Ընդ որում, պատերազմը վարվել է խաղաղ բնակավայրերի անընդմեջ ռմբակոծությունների ու դաժան շրջափակման միջոցով, աշխատելով մի կողմից ֆիզիկապես ոչնչացնել ողջ բնակչությանը, մյուս կողմից՝ պատերազմի մեջ ներքաշել աղետալի երկրաշարժի վերքերը դեռևս չբուժած նորանկախ Հայաստանի Հանրապետությանը: Բաքվի կողմից ԼՂՀ դեմ սանձազերծած պատերազմի հենց նման բնույթը արձանագրված է Եվրոխորհրդարանի կողմից 1993 թվականի հունվարի 21-ին ընդունված բանաձևում (Official Jornal of Europian Communities, No C 42/165):

Սա իրավական բնույթի այն փաստերի մի մասն է միայն, որ հիմնախնդրի ցանկացած հանգուցալուծման հիմնավորման հիմքում պիտի դրվեր: Դրանցից բխող եզրակացությունները նույնպես տպավորիչ են: Դրանցից, օրինակ, բխում է, որ

- ոչ թե հայկական, այլ ադրբեջանական կողմն ունի գրավյալ տարածքներ (Կենտրոնական ու Հյուսիսային Արցախի տարածքները և Նախիջևանը),

- որ ապօրինաբար զավթված Նախիջևանով Բաքուն փակել է դեպի Ասիա տանող Եվրոպայի ճանապարհը,

- Արևելյան Անդրկովկասում «ադրբեջանցիներ» նոր անվանմամբ քողարկված թուրքերը ողջ քսաներորդ դարի ընթացքում շարունակել են հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը՝ տասնամյակներ շարունակ «խաղաղ ճնշման», իսկ դարավերջին նաև սումգայիթյան արյունահեղությունների տեսքով,

- այսօր էլ Բաքվի կողմից բացահայտ տարվող սանձարձակ հայատյացության քաղաքականությունը ոչ միայն ոչ մի կապ չունի եվրոպական արժեքների ու ԵԱՀԿ նպատակների հետ, այլև «ետ է քաշում ողջ տարածաշրջանը դեպի քարանձավ»,

- Ադրբեջանական Հանրապետությունում դեռ յուրօրինակ ազգային ընդհատակում են գտնվում բնիկ ժողովուրդների հարյուր հազարավոր ներկայացուցիչներ, որոնք խորհրդային տարիներին բռնի ադրբեջանականացվել են և որոնք եվրոպական ժողովրդավարության ալիքի հետ են կապում

ընդհատակից դուրս գալու իրենց հույսերը:

Որտե՞ղ է թաքնված շան գլուխը: Քաղաքական խարդավանքների դարերի փորձ ունեցող Եվրոպան տեղյա՞կ չէ այս բոլորին, թե՞ լավ էլ տեղյակ է, բայց պատրաստ է հեշտությամբ տեղի տալ Բաքվի ու Անկարայի ճնշումներին: Կամ՝ գուցե տարածաշրջանը Եվրոպայի ազդեցության ոլորտում պահելու քաղաքական նկատառումնե՞րն են «անտեսանելի դարձնում» ակնհայտ փաստերը: ՄԽ-ում համանախագահող Ֆրանսիան ճանաչել է Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն: Դարասկզբին կատարված ոճիրը ճանաչվել ու դատապարտվել է դարավերջին՝ հանցանքի կատարման պահից շուրջ ութ տասնամյակ հետո: Ֆրանսիային ևս ութսուն տարի՞ է պահանջվում հասկանալու համար, որ ցեղասպանության նույն այդ քաղաքականությունը նույն թուրքը աղրբեջանցու անվան տակ այդ ութսուն տարիների ընթացքում շարունակել է Արևելյան Անդրկովկասում:

Նույն հարցադրումը ավելի խիստ ձևով ծառանում է ինքն իրեն ժողովրդավարության առաջադիրք ներկայացնող Միացյալ Նահանգների համար: 1989-ին ԱՄՆ-ի Կոնգրեսը հորդորում էր ԽՍՀՄ առաջնորդ Միխայիլ Գորբաչովին Ղարաբաղյան հարցի կարգավորման ընթացքում նախ և առաջ «ապահովել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդների անվտանգությունը» և գտնել խնդրի այնպիսի լուծում, որն «արտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները»: Խնդիրը մնացել է նույնը: Ամերիկա՞ն է փոխվել:

Վերջապես, նույն հարցադրումը խնդրի պատմահիրավական հիմքերից ինքնաբուխ ձևով հառնում է Մոսկվայի առաջ: Բայց իրավիճակն այս դեպքում փոքր-ինչ այլ է: Բանն այն է, որ մերօրյա Ռուսաստանի Դաշնությունը ոչ միայն ԽՍՀՄ ու Խորհրդային Ռուսաստանի իրավահաջորդն է, այլև միջազգային քաղաքական ու իրավական հարաբերությունների այն սուբյեկտը, որի անմիջական մասնակցությամբ (բայց դա մեղմ է ասված, ավելի ճիշտ կլիներ ասել՝ որի կամքով ու գործադրած ջանքերով) արդեն Խորհրդային Հայաստանի մաս հռչակված ու ճանաչված Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը հայտնվել են ԱդրԽՍՀ հովանավորության տակ ու սահմաններում: Ասել է թե՝ ինքը անմիջական պատասխանատվություն է կրում (իրավական և, իհարկե, բարոյական պատասխանատվություն) իր այսօրվա ռազմավարական դաշնակից Հայաստանի Հանրապետության առջև 1921-ին Ղարաբաղը բռնությամբ ԱդրԽՍՀ-ին հանձնելու գործում: Ռուսաստանի արտաքին քաղաքական ծառայությունները, ինչ է, չգիտե՞ն այդ մասին: Կամ՝ ռուսական հատուկ ծառայությունները չգիտե՞ն, որ 1988-1991 թվականներին Արևելյան Անդրկովկասի հայությունը ենթարկվել է ցեղասպանության: Նրանցից լավ այդ նյութին էլ ո՞վ կարող է տիրապետել: Ոչ ոք: Այդ դեպքում նրա պահվածքը Ղարաբաղյան հարցում պահանջում է այլ կարգի վերլուծություն:

Մինսկի խմբում համանախագահող երկրների հասցեին ասված այս դատողություններում կա ընդհանուր մի բան: Եվ դա այն է, որ մենք կանխապես ենթադրում ենք, որ նրանց համապատասխան հաստատությունները ու ծառայությունները հրաշալիորեն տիրապետում են հարցին: Որոշ դեպքերում՝ նույնիսկ մեզնից լավ (սումգայիթյան ոճրագործության կամ Սպիտակի կործանիչ երկրաշարժի մասին մենք չենք կարող ունենալ այն տեղեկատվությունը, որը կար խորհրդային ԿԳԲ-ի տրամադրության տակ և այսօր էլ ժառանգությամբ հայտնվել է Դաշնային Անվտանգության ծառայության ձեռքում): Մենք, իրոք, հաճախ, առանց վերապահումների և ապրիորի ձևով մեր դատողությունների հիմքում դնում ենք մեկնակետային այն դրույթը, թե այս կամ այն երկրի դիվանագետը անպայման լավագույնս տիրապետում է նյութին, և իր վարքը բացատրում ենք այն ենթադրությամբ, թե նա ասում կամ անում է այն, ինչ պահանջում են իր պետության շահերը:

Իսկ գուցե դա այդպե՞ս չէ: Գուցե ճի՞շտ չէ մեր կանխակալ կարծիքն այն մասին, թե, օրինակ, Ռուսաստանի Դաշնության մերօրյա հայտնի ծառայություններում աշխատող և Ղարաբաղյան հարցով զբաղվող չինովնիկները լավ գիտեն հիմնախնդիրը (նույնը վերաբերում է Ֆրանսիային ու ԱՄՆ-ին): Գուցե ծառայողների ու չինովնիկների սերընդափոխության ընթացքում «գործի գլխին» կանգնում են խնդրի էությանը չտիրապետող և «Բաքու-Անկարա» քարոզչական ցանցում հայտնված մարդիկ: Գուցե նրանց մեջ նույնիսկ կան այնպիսիները, որոնք «անձնական կախվածության» մեջ են իրենց թուրք բարեկամներից (մամուլում երբեմն հնչում են լրագրողների ահազանգերն այն մասին, որ Մեթյու Բրայզան, օրինակ, «ընտանեկան հանգամանքների բերումով» օբյեկտիվ լինել չի կարող, քանի որ կինը ազգությամբ թուրք է):

Ի՞նչ քաղաքական նկատառումներով է Արևմուտքը 1992-ին մերժել Ադրբեջանական Հանրապետությունը ճանաչել նախկին ԱդրԽՍՀ սահմաններում:

Արևմուտքին 1991-ին ձեռնտու էր ԽՍՀՄ այնպիսի տրոհումը, որն անցավագին լինի Ռուսաստանի Դաշնության համար՝ ԽՍՀՄ լուծարմանը վերջինիս հնարավոր դիմադրությունը բացառելու համար: Դրա համար արդեն 1991-ի աշնանը Արևմուտքն անընդհատ կրկնում էր Ռուսաստանի Դաշնության տարածքային ամբողջականության երաշխավորը լինելու իր պատրաստակամության մասին: Իսկ վտանգվա՞ծ էր արդյոք Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը: Այո, ռեալ վտանգներ կային: Նրա կազմի մեջ մտնող բազմաթիվ ինքնավար կազմավորումներ պատրաստ էին պատմականորեն հարմար այդ պահին դուրս գալու Մոսկվայի ենթակայությունից: Զուտ իրավական տեսակետից Ռուսաստանի Դաշնության ինքնավարությունները կարող էին հենվել ոչ միայն ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի, այլև 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունված ԽՍՀՄ այն օրենքի վրա, որն արտոնում էր նրանց՝ միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշել իրենց իրավական կարգավիճակը՝ ընդհուպ մինչև անկախ պետականության հաստատումը: ԽՍՀՄ-ը իր հնարավոր լուծարման դեպքի համար «ազատ էր արձակում» այն ժողովուրդներին, որոնք իրենց կամքին հակառակ ստալինյան կամայականությամբ ի խախտումն նրանց ազատ ինքնորոշման իրավունքի ստորադասվել էին տիտղոսակիր ազգերին: Կա տեսակետ, թե Ռուսաստանը սատարել է այդ օրենքի ընդունումը՝ կանխելու համար ԽՍՀՄ վերահաս լուծարումը: Բայց դեպքերը այլ ընթացք ստացան, և 1991-1992 թվականներին հենց այդ օրենքը դարձավ իր կազմում եղած ինքնավարությունների անկախացման իրավական հիմքը, օրենք, որ անվերահսկելի բնույթ ընդունող գործընթացներում կարող էր դառնալ Ռուսաստանի կազմաքանդման իրավական գլխավոր գործիքը: Իր ինքնավար կազմավորումներին այդ հնարավորությունից զրկելու համար Մոսկվան այդպես էլ ԽՍՀՄ կազմից դուրս գալու որևէ որոշում չընդունեց՝ հակառակ այն բանի, որ բոլոր միութենական հանրապետությունները 1991-ին մասնակցեցին ԽՍՀՄ-ից դուրս գալու «անկախության շքերթին»: Սպասելով այդ շքերթի ավարտին, Մոսկվան միանգամից 1991-ի դեկտեմբերին Ուկրաինայի ու Բելառուսի հետ մեկտեղ հիմնեց Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ): Ռուսաստանի համար այդ խառնակ օրերին Արևմուտքը զորավիգ կանգնեց նրա տարածքային ամբողջականությանը, քանի որ Արևմուտքի համար կենսականորեն կարևոր խնդիր էր ԽՍՀՄ կառավարելի տրոհումը: Ոչ ոք չէր կարող կանխատեսել, թե ինչ գործընթացներ կարող էին ծավալվել եվրասիական քաղաքական բեմում, եթե ԽՍՀՄ տրոհումը դառնար անվերահսկելի ու անկառավարելի: Ոչ ոք չգիտեր, թե ինչ կաներ «ռուսական արջը», եթե այդ գործընթացներում նա անմիջականորեն զգար իր տրոհման իրական վտանգը, որը Ռուսաստանին պիտի ներկայանար 1990 թվականի ապրիլի 3-ի օրենքի զգեստով: Ահա թե ինչու 1991-ին այն ամեն կերպ պիտի անտեսվեր ու լռության մատնվեր Մոսկվայի և Արևմուտքի կողմից:

Ինչպես տեսնում ենք, թե՛ Արևմուտքին, թե՛ Ռուսաստանի Դաշնությանը 1991 թ. աշնան և 1992 թ. ձմռան ամիսներին, երբ ԽՍՀՄ լուծարման արդյունքները մտել էին «ինստիտուցիոնալ ձևակերպումների» փուլ, 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը **քաղաքականապես ձեռնտու չէր**: Մեկին՝ միջուկային գերտերության լուծարումը առանց ավելորդ գլխացավանքների ու վերահսկելի ձևով ավարտին հասցնելու, մյուսին՝ իր ամբողջականությունը պահպանելու համար: Արդեն 1991-ի աշնանը ԱՄՆ-ը հրապարակավ «իմաց տվեց», որ հետխորհրդային տարածքում ԽՍՀՄ լուծարումից հետո ինքը նորանկախ հանրապետությունները ճանաչելու է նախկին խորհրդային միութենական հանրապետությունների սահմաններում: Ըստ երևույթին Վաշինգտոնում հաշվարկել էին, որ դա ԽՍՀՄ լուծարման ամենահեշտ, ամենաէժան ու ամենավերահսկելի տարբերակն է: Դրա հետ, ըստ Վաշինգտոնի, հեշտությամբ պիտի համաձայնվեին «անկախության տենդի մեջ հայտնված» միութենական հանրապետությունները, եթե նույնիսկ նրանցից ոմանք անարդարացի էին համարում դարասկզբին ստալինյան կամայականությամբ գծված սահմանները: Մերձբալթյան ու միջինասիական հանրապետությունները պատրաստ էին մոռացության տալ (կամ միառժամանակ մոռանալ) տարածքային իրենց հիմնախնդիրները անկախության ռեալ շանսը չկորցնելու համար: Նույնը վերաբերում էր Ուկրաինային, Մոլդովային ու Բելառուսին: Ամենից դժվար խնդիրները Անդրկովկասում էին առաջացել, իսկ դրանց մեջ ամենից բարդը և ամենից դժվար մարսելին Ղարաբաղյան հիմնախնդիրն էր: Խնդիրն առնվազն այդպես էր ներկայա-

նում Եվրոպայի ու ԱՄՆ-ի համար, որոնք բազմիցս հրապարակավ մեղադրել էին Բաքվի իշխանություններին հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու համար և նույնիսկ դիմել էին Մոսկվային խնդիրը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հայացքներին համապատասխան լուծելու հորդորով: Այսպես թե այնպես, «նորանկախ պետությունները՝ միութենական հանրապետությունների սահմաններում» բանաձևին տրվեց ընդհանրական բնույթ: Իսկ դա նշանակում էր, որ Արևմուտքը Ռուսաստանի հետ մեկտեղ ընտրում էր 1990 թվականի ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքը լռության մատնելու, այն շրջանցելու, առաջացած հակամարտությունների կարգավորման գործընթացներում այն որպես փաստարկ անտեսելու մարտավարությունը:

Ամենայն հավանականությամբ Արևմուտքի այս դիրքորոշումը ՀՀ իշխանություններին հայտնվել է վաղօրոք՝ արդեն 1991-ի ամռանը: ՀՀ քաղաքական ղեկավարությունը պետք է ընտրություն կատարեր անկախացման երկու հնարավոր տարբերակների միջև: Առաջին տարբերակը անկախացումն էր 1989 թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին ՀՀ և Արցախի բարձրագույն իշխանությունների ընդունած համատեղ որոշման հիմքի վրա: Բայց անկախացման նման ուղին չէր տեղավորվում ԽՍՀՄ-ը «հնարավորինս խաղաղ և առանց գլխացավանքի կազմաքանդելու» Արևմուտքի ծրագրերում: Մյուս տարբերակը դեկտեմբերի 1-ի համատեղ որոշման անտեսումը և ՀԽՍՀ սահմաններում անկախացումն էր: Կասկածից վեր է, որ Հայաստանի ղեկավարությունը արդեն 1991-ի ամռանը ստացել էր երկրորդ տարբերակով «առաջ շարժվելու» նպատակահարմարության մասին Արևմուտքի կարծիքը (կամ գուցե դրա վրա կանգ առնելու հորդորը, կամ գուցե և այդ ուղով գնալու պահանջը): Այսպես թե այնպես, 1991-ի ամռանը Արցախում հայաստանյան իշխանություններից ստացվել էր տեղեկատվություն առ այն, որ անկախության մասին սեպտեմբերյան հանրաքվեն ՀՀ-ում պիտի անցկացվի ՀԽՍՀ սահմաններում: Այս իրադրության մեջ, երբ 1991-ի օգոստոսի 30-ին Բաքվում հրապարակվեց «Անկախ պետականության վերականգնման մասին» հռչակագիրը, Ստեփանակերտին այլ բան չէր մնում անելու, քան հռչակել ԼՂՀ անկախությունը:

Պարզից էլ պարզ էր, թե ինչպիսին պիտի լիներ Արևմուտքի և Ռուսաստանի վերաբերմունքը ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի հիմքի վրա ԼՂՀ անկախացման վերաբերյալ: Այն պետք է բացասական լիներ: Ցավոք, մենք այդ պահին ընտրեցինք ԽՍՀՄ-ը կազմալուծող միջազգային գլխավոր դերակատարների ու Ռուսաստանի համար ամենաանցանկալի իրավական հիմքը: 1991 թ. սեպտեմբերի 2-ին, ուղիղ երկու օր անց այն բանից հետո, երբ Բաքուն հրապարակել էր «Անկախ պետականության վերականգնման մասին» հռչակագիրը, նախկին ԼՂԻՄ-ի և հարակից Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանը հռչակեց ԼՂՀ անկախությունը՝ որպես անմիջական իրավական հիմք ընդունելով «ԽՍՀՄ Սահմանադրությունն ու գործող օրենքները, որոնք ինքնավար կազմավորումների ու հավաք ապրող ազգային խմբերին տրամադրում են իրենց պետական-իրավական կարգավիճակի հետ կապված հարցը ինքնուրույն լուծելու իրավունքը՝ միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում»: Իրավական տեսակետից հրաչակագիրն անբասիր էր: Բայց միայն իրավական տեսակետից: Քաղաքական տեսակետից այն ցանկալի չէր, եթե չասենք, որ ուղղակի անընդունելի էր ԽՍՀՄ կազմաքանդման գործընթացը վերահսկող միջազգային դերակատարների և, իհարկե, Ռուսաստանի համար:

Արդյո՞ք 1991 թվականին ԼՂՀ-ն անկախացման այլ իրավական հիմք ուներ: Պարզվում է՝ ուներ, և դա 1990 թվականի ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքը չէր:

Կարո՞ղ էր արդյոք Ստեփանակերտը շրջանցել այդ օրենքը և անկախությունը հռչակել այլ իրավական հիմքի վրա: Պարզվում է՝ այո: Բանն այն է, որ 1991-ի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Բաքուն հրաժարվել է նախկին ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնել 1918-1920 թթ. թուրքական ռազմական ինտերվենցիայի արդյունքում քաղաքական ասպարեզ մտած, Ազգերի լիգային անդամակցելու մերժումը ստացած և առանց լեգիտիմ կամ ճանաչված սահմաններ ձեռք բերելու պատմության թատերաբեմը լքած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը, որի կազմում չկային ո՛չ Լեռնային Ղարաբաղ և ո՛չ էլ Նախիջևան: Հրաժարվելով ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից, Բաքուն կորցրեց իրավական բոլոր այն հարաբերությունները Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հետ, որ նրան տրամադրում էին խորհրդային ժամանակներում կնքված այդ փաստաթղթերը: Կարևոր է նկատել, որ Բաքուն իրավական այդ կապերը կորցրեց անկախ այն բանից՝ օրինական թե ապօրինի կգնահատվի ՌԿ(բ)Կ

Կովբյուրոյի որոշումը (որով արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Լեռնային Ղարաբաղը մտցվել է ԱդրԽՍՀ սահմանները՝ նրան լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով) և Կարսի բազմակողմ միջազգային պայմանագիրը (որով դարձյալ Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանի երկրամասը հանձնվում էր ԱդրԽՍՀ հովանավորությանը): Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում Բաքուն ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու իրավական փաստի ուժով իրավունք չուներ այդ տարածքները դիտել որպես նորանկախ Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող տարածքներ: Չէ՞ որ դրանք տարբեր պայմաններով հանձնվել էին խորհրդային տիպի մի հանրապետության (խոսքը ԱդրԽՍՀ-ի մասին է), որի իրավահաջորդությունից ինքը հրաժարվել էր: Հենց այստեղ պետք է ընդգծվի խնդրի իմաստավորման տեսակետից սկզբունքային նշանակություն ունեցող այն փաստը, որ նախկին խորհրդային հանրապետությունների շարքում ԱդրԽՍՀ/ԱՀ-ն միակն էր, որ իրավունք չուներ ինքնիշխանություն հռչակել այն միութենական հանրապետության սահմաններում, որի տարածքների վրա նա հավակնում էր անկախանալ: Նա միակն էր ԽՍՀՄ միութենական հանրապետությունների շարքում, որի տարածքների վերաբերյալ կային գործող միջազգային պայմանագրեր, որոնց շրջանցումով նա չէր կարող անկախանալ: Դա մի եզակի բացառություն էր, քանի որ ոչ մի այլ անկախացող հանրապետության առջև միջազգային իրավական բնույթի նման արգելք չկար:

Իրավական բնույթի այդ հանգամանքները թույլ են տալիս անվարան պնդել, որ 1991 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին (անկախության մասին հռչակագրից մինչև անկախության մասին հանրաքվեն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարված Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում:

Սա իրավաբանորեն ավելի զորեղ հիմք է: Այն քաղաքական իմաստով նույնպես ավելի հուսալի է, քանի որ հարցը չի կապում Արևմուտքի և Ռուսաստանի կողմից «չսիրված» 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքի հետ: Իրավական այդ մոտեցումը ԼՂՀ անկախացման հիմքը չի հանգեցնում բացառապես ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին և խնդիրը կախման մեջ չի դնում այդ սկզբունքի հետ կապված քաղաքական բնույթի բարդություններից:

Սակայն այդ մասին պահանջվում է խոսել ավելի հանգամանալից:

Երբ մենք միջազգային հանրությունից խնդրում ենք նորից ճանաչել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման՝ արդեն մի քանի անգամ ճանաչված իրավունքը, մենք ինքներս հարցը մցնում ենք մեզ համար վտանգավոր ծուղակ:

Եվ այսպես, 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակել է՝ հենվելով 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի վրա, որն արտոնում էր ինքնավար կազմավորումներին և հավաք ապրող ազգություններին ինքնուրույն որոշել իրենց պետական իրավական կարգավիճակը միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում: 1991 թ. սեպտեմբերին դա աշխարհագրորեն համընկնում էր նախկին ԼՂԻՄ-ի և հարակից Շահումյանի շրջանի տարածքներին (հավաք բնակության մյուս շրջաններից հայ բնակչությունը բռնագաղթել էր): Հռչակագիրը անկախության իրավական հիմքերի շարքում թվարկում է նաև Բաքվում 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգնումը, ինչպես նաև ԱդրԽՍՀ-ում հայերի նկատմամբ տասնամյակներ տարվող ագրեսիվ խտրականության քաղաքականությունը: Բայց հետագա իրադարձությունները և բանակցային գործընթացում մեր քայլերն ու վարքը, մեր բերած փաստարկները հաստատեցին, որ ԼՂՀ և ՀՀ արտաքին քաղաքական մարտավարությունը իրագործող ծառայություններն ու գործիչները ԼՂՀ անկախության մասին հռչակագրում հիշատակված իրավական հիմքերից կարևորում և ընտրողաբար կանգ էին առնում ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի վրա՝ խնդիրը հանգեցնելով ԱդրԽՍՀ /ԱՀ-ից ԼՂԻՄ-ի և նրան հարակից Շահումյանի շրջանի անջատվելուն: Ակնհայտ է, որ այդ հիմքը թույլ չի տալիս խոսել դրանցից դուրս գտնվող Քաշաթաղի, Քարվաճառի և ազատագրված այլ տարածքների՝ օրինաբար (իրավունքով) մերը լինելու մասին: ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը, եթե մի օր այն, այնուամենայնիվ, բացահայտ ձևով դրվի խնդրի կարգավորման հիմքում, թույլ կտա խոսել միայն նախկին ԼՂԻՄ-ի և հարակից Շահումյանի շրջանի տարածքի մասին, որտեղ և, ի դեպ, կայացել է անկախության մասին հանրաքվեն: Մյուս տարածքները դուրս են մնում այդ օրենքի տրամադրած հնարավորությունների սահմաններից: Եվ եթե մենք շարունակում ենք կառչել այդ հիմքից, ապա մեզ ոչինչ չի մնում անելու, քան այդ տարածք-

ները դիտել որպես **ԼՂՀ անվտանգության գոտի**: ՀՀ և ԼՂՀ ղեկավարությունը այդպես էլ վարվեց: Մեր իսկ համաձայնությամբ ու նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրվեց *Լեռնային Ղարաբաղի շուրջ անվտանգության գոտի* հասկացությունը, դրա տակ նկատի ունենալով նախկին ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս գտնվող ազատագրված տարածքները: Ապրիլյան օրենքն ընդունելով որպես հարցի ըմբռնման միակ մեկնակետ, հայկական կողմերը չգիտեին ինչպես որակել իրավաբանորեն, պատմականորեն և փաստորեն մեզ պատկանող հողերի կարգավիճակը: Խանգարում էր մեզ համար աննպաստ իրավական մեկնակետը: Բանը հասավ նրան, որ ՀՀ արտգործնախարարը 2001-ի մայիսին հեռուստահարցազրույցի ժամանակ ազատագրված տարածքները որակեց իբրև մեր կողմից օկուպացված (բռնազավթված) տարածքներ, հասարակական լայն շրջանակներում առաջ բերելով վրդովմունքի ահեղ ալիք: Բայց եթե նույնիսկ օկուպացված տարածքների փոխարեն օրինականացվի «անվտանգության գոտի» հասկացությունը (ինչպես դա արվում է գործնականում), ապա շատ քիչ բան կփոխվի: Ինքը հասկացությունը թափանցիկ ակնարկ է առ այն, որ այդ *անվտանգության գոտի* կոչվածը իրավունքով և օրինաբար հայկական կողմին պատկանող տարածք չէ և խնդրի խաղաղ կարգավորման ցանկացած բանակցություններում պետք է դրվի դրանց վերադարձի հարցը: Իհարկե, կարելի է պնդել, թե այդ տարածքները պատերազմի օրենքներով ԼՂՀ-ին անցած և հիմա արդեն նրան պատկանող տարածքներ են: Բայց բանակցություններում որպես կանոն դրվում է հենց պատերազմի հետևանքների վերացման հարցը և առաջին հերթին տարածքների վերադարձի իմաստով: Ահա այդպիսի ծուղակի մեջ ենք մենք ինքներս մեզ գցել՝ իրավական գլխավոր փաստարկ ընտրելով Մոսկվայի կողմից չսիրված, Արևմուտքի կողմից **ժամանակին** մերժված ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը:

Կարո՞ղ էինք մենք 1991-ին չհայտնվել այդ ծուղակում: Կայի՞ն արդյոք ավելի ուժեղ դիվանագիտական, քաղաքական ու քարոզչական քայլեր, որոնց մենք չդիմեցինք: Խնդրի իրավական հիմքերը և 1991-ի խորհրդային տարածքում ստեղծված քաղաքական իրավիճակը թո՞ւյլ էին տալիս դիմել այլ քայլերի: Ա՛յո:

Նվազագույնը, որ մենք պետք է անեինք և կարող էինք անել, այն էր, որ ԼՂՀ անկախացման ակտը պետք է դիտեինք որպես ԼՂՀ անջատում ՀՀ-ից: Մենք ունեինք 1989 թ. դեկտեմբերի մեկի համատեղ որոշումը և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մենք այդ որոշումից չհրաժարվեցինք՝ այն արտացոլելով ՀՀ Սահմանադրության առաջաբանում: Ուրեմն, մենք իրավազոր էինք համարում համատեղ որոշումը: Այդ դեպքում ինչո՞ւ նրա մասին լռեցինք, երբ իր անկախությունն էր հռչակում Լեռնային Ղարաբաղը: Բացատրությունը մեկն է: Արտաքին քաղաքականության համար պատասխանատու մեր ծառայություններն ու գործիչները անհրաժեշտ տեսական խորությամբ չէին տիրապետում նյութին: Դրա վկայությունները բազմաթիվ են: Իսկ այդ վկայությունների մեջ ամենից խոսունը ՀՀ առաջին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1992 թ. մարտի 5-ին մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» օրաթերթին տված հարցազրույցն էր, որտեղ նա, ներկայացնելով ՀՀ պաշտոնական դիրքորոշումը, հավաստում է, թե հակամարտության երեք կողմերի համար էլ ընդունելի կլինի, որ Լեռնային Ղարաբաղին տրվի ինքնավար հանրապետության կարգավիճակ Ադրբեջանական Հանրապետության կազմում: Այսօր անհավանական է թվում, որ ՀՀ առաջին քաղաքական առաջնորդը նման առաջարկություն է արել 1992-ի մարտի 5-ին՝ ՀՀ և ԱՀ ՄԱԿ ընդունվելու օրը: «Ղարաբաղյան գլխացավից» գլուխն ազատելու քա՞յլ էր դա, թե, այնուամենայնիվ, նյութին չտիրապետելու հետևանք: Դժվար է ասել: Բայց փաստ է, որ մենք չէինք տիրապետում նյութին:

Եթե նվազագույնը չարվեց, խոսք չէր կարող լինել ավելի ուժեղ քայլերի մասին: Եվ դա կլիներ այն, որ գոնե 1991-ի հոկտեմբերից հետո, երբ արդեն Բաքուն սահմանադրական ակտում բաց տեքստով հրաժարվել էր ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից, Ստեփանակերտը հայտարարեր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող այն տարածքների մի մասի վրա, որոնք 1921-ին ապօրինաբար խլվել են Խորհրդային Հայաստանից և որոնց վրա պետք է հիմնվեր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Ինչպես գիտենք, այս փաստարկը 1991-ից շուրջ տասը տարի անց հնչեցվեց է տրվել նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից հետևյալ ձևակերպումով՝ «Լեռնային Ղարաբաղը երբևիցե մաս չի կազմել անկախ Ադրբեջանական Հանրապետության»: Եթե դա հնարավոր էր ասել 2001-ին, ինչո՞ւ չասվեց 1991-ին: Պատասխանն ակնհայտ է՝ ՀՀ և ԼՂՀ քաղաքական ղեկավարությունը չգիտեր այդ բանաձևումի տեղը:

Շարունակելի

ԴՐՕՇԱԿ
Հայ դաս
Il faut sauver les Arméniens
Jean Jaurès
Ժան Ժորես
ՊԵՏՔ Է ՓՐԿԵԼ ՀԱՅԵՐԻՆ
Թարգմանությունը ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻ
Նորահայտ վկայություն
25

Սկիզբը՝ «Դրօշակ» No 8

Ֆրանսիայի
պատասխանատվությունը

Պարոնայք, պարոն Կլեմանսոն մի քանի շաբաթ առաջ հրապարակած փայլուն հոդվածում հավաստում է, որ անցած դարում, նման կոտորածների կապակցությամբ ամբողջ Եվրոպան չի վարանել կոչով դիմել Ֆրանսիային, և Ֆրանսիան անմիջապես արձագանքել է:

Դելկասե - Իսկ1870'-ից հետո՞:

Ժորես - Ես չեմ ուզում այստեղ ազգայնամոլական որևէ արտահայտություն թույլ տալ, բայց պիտի կրկնեմ, որ արդեն մի դար է, այն ժամանակից ի վեր, երբ ֆրանսիական հեղափոխությունը ֆրանսիացիներին ու մյուս բոլոր ժողովուրդներին իրավահավասար հռչակեց, Ֆրանսիան չի կարող, սա իրեն պատիվ է բերում, որովհետև ինքն է հղացել, միայնակ ստանձնել հիմնարար առաջընթացի ու արդարության գաղափարի զարգացումը: Այնուամենայնիվ նա իրավունք ուներ իր ղեկավարների միջոցով պահանջել, մի բան, որ հնարավոր չեղավ՝ այն երկրում, որի նկատմամբ պարտավորություններ էր ստանձնել, կանխել երկու տարի, երեք տարի անընդհատ շարունակվող զարհուրելի նախճիրները, որոնց զոհերի թիվը պաշտոնական տեղեկագրերը հասցնում են 30.000-ի՝ ավելացնելով, որ դա իրականության մեկ երրորդն է միայն: Հենց այդ անհնարինությունը կոտորածները տարածեցին ու ծավալեցին, բացի դրանից որոշակի փաստաթղթերի վրա հենվելով կարելի է իմանալ, թե ինչպիսի՞ն է եղել Անգլիայի արտաքին քաղաքականությունը, ինչպիսի՞ն է եղել Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, մինչդեռ Ֆրանսիայինը ոչ ոքի համար պարզ չէ *(ծափահարություններ ֆրանսիական ձայրահեղականների շարքերում)*:

Այո՛, քար լռություն է, լռում է մամուլը, որի մի մասը, դա ես գիտեմ, լռելու համար ուղղակի կամ անուղղակի վճարվում է *(ծափահարություններ ֆրանսիական ձայրահեղականների շարքերում, ֆրանսիական ակողմյանների բազմաթիվ շարքերում)*, լռում են մեծ լրագրերը, որոնց գլխավոր ներդրողները օսմանյան խոշոր ձեռնարկությունների շահառուներն են, բայց հատկապես լռում է Ֆրանսիայի կառավարությունը: Ինչպե՞ս պատահեց, որ այդքան արյուն հոսելուց, այդքան ավերներից ու բարբարոսություններից հետո, Ֆրանսիայի կարգախոսներն ու մարդու իրավունքները ոտնահարվելուց հետո ձեր բերաններից ոչ մի ճիչ չպոռթկաց, ձեր խղճից ոչ մի ձայն չհնչեց, և դուք մնացիք համր, հետևաբար զանգվածային բնաջնջմանը մեղսակից... *(շարունակական շշուկներ, բուռն ընդվզումներ դահլիճի մեծ մասում: Ծափահարություններ ֆրանսիական ձայրահեղականների շարքերում)*:

Նախագահ – Պարոն Ժորես, դուք իրավունք չունեք հանրապետության կառավարությանը վիրավորական արտահայտություններ ուղղելու, իրավունք չունեք ասելու, որ մեղսակից է եղել նախճիրին: Պարտավորեցնում եմ հետ վերցնել ձեր այդ խոսքերը *(ծափահարություններ դահլիճի կենտրոնում, ֆրանսիական ակողմյանների շարքերում)*:

Արտաքին գործերի նախարար – Նա մեղադրանքն ուղղում է իրար հաջորդած մեր բոլոր կառավարություններին:

Ժորես - Արտաքին գործերի պարոն նախարարը ըստ էության հաստատեց իմ անկողմնակալությունը, դրանով իսկ կնպաստի, որ պարոն նախագահը հետ վերցնի իր խոսքերը: Նա իրավացի է՝ իմ մեղադրանքներն ուղղված են նաև նախորդ կառավարություններին...

Նախագահ – Ո՛չ և ոչ, պարոն Ժորես, ինչ վերաբերում է ինձ, ես ձեր խոսքերն ավելի ծանր եմ համարում, եթե ուղղվում են մեր բոլոր կառավարություններին և Ֆրանսիային վերագրում են մի հանցակցություն, որը նա երբեք չի կատարել *(բուռն ծափահարություններ)*:

Ժորես – Պարոնայք, եթե ես կարողանայի նույնպիսի հեշտությամբ վերջին երեք տարիների պատմությունից վերացնել այն պատասխանատվությունը, որ ընկնում է մեր բոլորի վրա, ինձ համար էլ հեշտ կլիներ պարոն նախագահի ցանկությանն ընդառաջելու համար հետ վերցնել իմ խոսքերը, որոնք իմ համոզվածությունն են արտահայտում: Այո՛, եթե կարողանայի, վաղուց կանեի *(ֆրանսիական ձայրահեղականների շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է», շշուկներ խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում)*:

Ո՞րն է ուրեմն լուծումը, որ դուք կարող եք, դուք պե՛տք է կայացնեք այս տանջահար հիմնահարցի վերաբերյալ: Լուծման երեք տարբերակ կա, պարոնա՛յք:

Կամ պահպանել status quo-ն՝ այսինքն մեկը մյուսին հաջորդող անիմաստ շաղակրատություններն ու սուլթանի բարեփոխումների ձգձգումը, քանի որ նա համոզվել է՝ Եվրոպայի արտաքին միասնականության ներքո սքողված են ներքին նախանձախնդրություններ ու հակակրանքներ:

Կա ևս մի լուծում, որն ինձ թվում է, դուք հիշատակեցիք, արտաքին գործերի պարոն նախարար: Այն

եվրոպական համագործակցությունն է, որին ուղղություն է տալիս ռուսական քաղաքականությունը: Քիչ առաջ ես բացատրեցի, թե ինչու այս լուծումն ինձ անխոհեմ ու անիմաստ է թվում:

Կա, սակայն, նաև երրորդ տարբերակը:

Քանի որ Եվրոպան բացահայտել է իր գործելու անկարողությունը, քանի որ անդամալուծվել է ամենատարբեր բնույթի նախանձախնդրություններով ու հավակնություններով՝ այն աստիճանի, որ իր իսկ շեմին սահմռկեցուցիչ ոճիր թույլ տվեց ու կանխարգելելու համար մատն անգամ չշարժեց, մնում է ամբողջ աշխարհի աշխատավորների առջև խոստովանել հնամենի Եվրոպայի կառավարական այս ձախողումը (*բուռն ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*): Այո՛, դուք՝ ներհակ ազգային շահերով տարանջատված կառավարություններդ, նույնիսկ ի վիճակի չեք կատարելու քաղաքակրթության ու քրիստոնեության տարրական, հնամենի առաքելությունը: Քիչ առաջ, պարոն դը Մյունը հիմնավոր ճշգրտությամբ էր անդրադառնում այն պարտականություններին, որ Ֆրանսիան ստանձնել է քրիստոնեական դարավոր համայնքների նկատմամբ: Իհարկե, մեծ հաշվով, ըստ մեզ, դա միակ պարտականությունը չէ: Ես պարոն Հյուբբարից[2] թույլտվություն եմ խնդրում նրան ասելու, որ միայն հայերի մեծ մասի քրիստոնյա լինելու համար չէ, որ Ֆրանսիան ձեռնպահ չմնալու արդարացուցիչ պատճառներ ունի (*ձախ ծայրահեղականների շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է», շշուկներ խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում*):

Առկա է շատ ավելի կարևոր ու նշանակալի իրողություն՝ հենց այդ Արևելքը, որտեղ քրիստոնեությունը 18 դար է արդեն հաստատվել է՝ հռչակելով համընդհանուր ներողամտություն ու համընդհանուր խաղաղություն, կրկնում եմ՝ հենց այդ Արևելքը և այնտեղ՝ Տրապիզոնից մինչև Երուսաղեմ ալեկոծվող հիմնահարցերը ակնբախ դարձրին հինավուրց՝ քրիստոնյա ու դրամատիրական Եվրոպայի բարոյական պարտությունը (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում, նոր շշուկներ խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում*): Ուրեմն, քանի որ կառավարությունները, նրանց հակասությունների պատճառով տարանջատված ազգերը անկարող են տարրական միասնականության հանգել, կանխել բարբարոսների խժդժությունները, հանդես գալ Եվրոպայի անունով և Եվրոպայի պատասխանատվությամբ, անհրաժեշտ է, որ ամենուր եվրոպական ընչազուրկները ստանձնեն այս առաքելությունը (*«Պահ, պահ, պահ»՝ բացականչություններ կենտրոնից և աջակողմից*):

Անհրաժեշտ է, որ ամենուր ընչազուրկներն արտահայտեն իրենց ցասումն ու կամքը, ստիպեն թշվառ գերտերություններին, որոնք միմյանց չհոշոտելու համար թույլ են տալիս, որ մի ամբողջ ժողովուրդ խողխողվի, կատարել իրենց տարրական մարդկային պարտականությունը՝ այնպիսի միասնականությամբ, որը կկանխի ցանկացած ընդդիմություն ու ընդհարում, կնպաստի խաղաղության գործին, արդարության գործին: Այդ է արտահայտում մեր բանաձևը, որը մենք հանձնել ենք պարոն նախագահին, որը և ես խորհրդարանին խնդրում եմ քվեարկել (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*)[3]:

1897 թվականի
փետրվարի 22-ի ելույթը

Նախագահ – Ձայնը տրվում է պարոն Ժորեսին:

Ժորես – Պարոնայք, ես շատ լավ եմ հասկանում, որ մեր գործընկերները արտաքին գործերի պարոն նախարարի հայտարարությունների կապակցությամբ շարքից շարք իրենց տպավորությունները փոխանակելու կարիք են զգում: Ես նրան պատասխանելու թույլտվություն եմ խնդրում: Ինքս չեմ անդրադառնա փոքր-ինչ անսպասելի դրվատանքներին, որ [նախարարն ինքը] հայտնի ցավալի իրադարձությունների հաջորդ օրը ուղղեց եվրոպական դիվանագիտությանը, բայց ձեզ խնդրում եմ, պարոնայք, մի տրվեք այն կեղծ տպավորությանը, որ ջանում են ստեղծել ձեր մտապատկերում:

Այս պահին դուք նախ անցյալի պատասխանատվությունները պիտի ճշգրտեք (*տարբեր արձագանքներ դահլիճում*): Խոսքը Հայաստանի կոտորածների մասին է, որից հետո միայն ես ուզում եմ հարցնել, թե մոտ ապագայում, թեկուզ հենց հիմա, քաղաքական ո՞ր դիրքորոշումն է ամենից ավելի համապատասխանում Ֆրանսիայի շահերին:

[...]

Պարոն նախարար, դուք մեզ ասացիք, որ պետք է ընտրություն կատարենք: Դուք մեզ ասացիք, որ ձեր համակարգը քննադատելն ու տապալելը բավարար չէ, որ մենք պետք է մերն առաջադրենք: Մենք մեր համակարգը վաղուց ենք ձեզ ներկայացրել: Խոսքը պարզապես այն նույն համակարգի մասին է, որը տարիներ ի վեր ձեր Կոստանդնուպոլսի դես-

պանն է ձեզ հուշում: Մեր համակարգը թույլ չտալն էր, որ Օսմանյան կայսրության ազգաբնակչության վերքերը խորացնեն, փորփրեն, ընդհուպ մահացու ջղաձգումների հասցնեն: Մեր համակարգը մարդկության, ինչպես նաև Ֆրանսիայի ձայնը լսելի դարձնելն է, որը մարդկության ձայնից անբաժան պիտի լիներ, ժամանակին լսելի դառնար *(ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների, ինչպես նաև այլ շարքերում)*:

Դուք սպասեցիք: Դուք տարիներ շարունակ ստացաք ձեր հյուպատոսների զեկուցագրերը, ձեր դեսպանների զեկուցագրերը, որոնք հաղորդում էին ջարդերի ու հազարավոր զոհերի մասին: Դուք ոչինչ չարեցիք, օգտակար ոչինչ չկարողացաք անել: Եվ դուք, որ ի վիճակի չեղաք կանխել Օսմանյան կայսրության այդ տարածաշրջանի անկարգությունները, սահմանափակել խռովությունները, դուք ձեզ գովում եք, որ նույն քաղաքականությամբ, նույն սուլթանի հետ, նույն հաճոյակատարությամբ կլուծեք խնդիրը:

Սակայն, արտաքին գործերի պարոն նախարար, մի մոռացեք, որ տվյալ պահին մի մեծ թուլություն ունեք: Ինչ էլ որ անեք, սուլթանը ձեզ չի հավատալու: Արդեն երեք տարի նա վարժվել է կոտորածներ սանձազերծելու պահին ձեզ լուռ տեսնել: Արդեն երեք տարի վարժվել է, որ իրեն արդարացնելու, պաշտպանելու համար մեղմացուցիչ պատճառներ գտնեք: Սուլթանը գիտի նաև, որ այն ֆրանսիացին, որը ձեզ է ներկայացնում Կոստանդնուպոլսում, հենց ձեզնից վճռական, գործնական միջամտություն էր խնդրում, դուք այն գործողությունների փոխարեն, որոնք թերևս սուլթանին կկանխեին, սովորական, ձևական խոսքերով եք գոհանում *(ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում)*: Հետևաբար, եթե դուք վաղը սուլթանի հետ խոսեք բարենորոգումների մասին, պահանջեք, որ ամբողջ կայսրությունում իրագործի այն բարենորոգումները, որոնք դուք չկարողացաք պարտադրել Հայաստանի համար, կհիշի ձեր նախկին խոսքերի ունայնությունը, ձեր նախկին դիրքորոշման հաճոյակատարությունն ու մեղսակցությունը: Կհիշի, որ երեք տարի փաստորեն գործել եք նրա օգտին, և մի անգամ ևս կասի՝ «Թողնենք, որ փոքրիկն անցնի», և նա ավելի իրավացի կլինի դա ասելու, քան դուք, քանի որ սուլթանին դատապարտելու, բարենորոգումները պարտադրելու համար Եվրոպան համախմբելու ունակ չեղաք, իսկ այժմ փորձում եք դրան հասնել, որպեսզի Թուրքիայից ու սուլթանից վրեժ լուծեք՝ իբր Կրետեի ազգաբնակչությանը ազատագրելու նպատակով Հունաստան ներխուժելով *(նոր ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում)*:

Այն համակարգը, որ արտաքին գործերի պարոն նախարարը ձեզ խնդրում է իրավազորել, նույնն է, որը երեք տարի շարունակ գործադրվել է, այսինքն բռնաճնշումների իրականությունը, կոտորածների իրականությունը սքողող անարդյունք ջանքերի, անարդյունք խոսքերի, անարդյունք սպառնալիքների, անարդյունք խոստումների բեմականություն *(ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում)*: Կրկնում եմ, պարոն նախարար, որ ձեր դիրքորոշման, անխոհեմ դիրքորոշման պատճառով վրա հասավ պատերազմի արհավիրքը: Դուք ինքներդ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին դաս տվեցիք: Այո՛, եթե այդ ժողովուրդները տեսնեին, որ դուք ժամանակին, լրջորեն եք միջամտում, միջամտում եք խելամիտ ու արդյունավետ ձևով՝ նրանց շղթաները փշրելու կամ վերքերն ամոքելու համար, այդ ժամանակ, այո՛, նրանք թերևս համբերատարությամբ սպասեին բարենորոգումների իրագործմանը, ու խաղաղությունը, ամենայն հավանականությամբ, կշարունակվեր: Բայց ամբողջ ձեր դիրքորոշումը, ամբողջ ձեր գործունեությունը, ամբողջ ձեր քայլերը այդ ժողովուրդներին սովորեցրին, որ մինչև պատերազմ չբռնկվի, խռովություն, արկածախնդրություն չսանձազերծվի, Եվրոպայից ոչինչ հուսալ չի լինի: Ահա թե ինչու ձեր ներկայությունն այստեղ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար շարունակում է նշանակել, որ իրենց միակ հույսը ուժն է: Ուստի դուք բուն պատերազմի կուսակցությունից եք, հենց պատերազմի կուսակցությունից եք, դուք չեք կարողանա ո՛չ փրկել, ոչ էլ պահպանել խաղաղությունը *(երկարատև ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում: Շշուկներ պարբեր շարքերում)*:

1897 թվականի
մարտի 15-ի ելույթը

Ժորես - Այս պահին ես չէի ավելացնի խորհրդարանի և անձամբ իմ հոգնությունը, եթե Ազգային Ժողովի նախագահին սույն պատասխանով հակադրվելը պարտքս չհամարեի: Ազգային Ժողովի պարոն նախագահը խոսելով միջազգային այն դերի մասին, որ աշխարհում պիտի ստանձնի հանրապետական Ֆրանսիան, հարցին նոր ուղղվածություն հաղորդեց, իսկ արտաքին գործերի պարոն նախարարը նրանից առաջ ասաց, որ եթե անհրաժեշտ

լիներ հանգամանորեն ուսումնասիրել կրետական հարցը, նույնքան անհրաժեշտ պիտի լիներ ընդհանուր հայեցակարգ մշակել, որով տվյալ պահին առաջնորդվեր Ֆրանսիայի միջազգային քաղաքականությունը: Իրականում, պարոնայք, ինձ թվում է՝ միայն կրետական հարցի կապակցությամբ չէ, որ դուք պիտի արտահայտվեք այս գիշեր, այլ տվյալ պահին մեր արտաքին քաղաքականության բոլոր ընդհանուր ուղղությունների *(տարբեր արձագանքներ դահլիճում)*:

[...]

Երբ սուլթանը տեսնում է, որ երեք տարի շարունակ Եվրոպայի մեղսակից նիրհի շնորհիվ անպատիժ իրագործում է այն կոտորածները, որոնք ամենայն հավանականությամբ իրենց նախադեպը չունեն մարդկության պատմության վերջին դարերի ընթացքում, երբ նա տեսնում է, որ Եվրոպան սահմռկած, ուշացած զարթնում ու փոխանակ սուլթանի զոհերի կողմը շրջվելու, նրանց վերքերը բուժելու... *(աղմուկ կենտրոնում)* փոխանակ շրջվելու բռնաճնշված ժողովուրդների կողմը, անկախության համար մղված պայքարում նրանց սատարելու, նախ և առաջ, որպես անդրանիկ քաղաքական քայլ իր շահերն է հետապնդում, սուլթանը համոզվում է, որ Եվրոպան իր ձեռքերում է, հետը ինչպես ուզի, այնպես էլ կվարվի *(ծափահարություններ ֆաշիստական ծայրահեղականների շարքերում)*: Ի՞նչ է տեսնում նա արդեն երեք շաբաթ: Ինչպե՞ս եք վաղը գնահատելու նրա սեփական հզորությունը, ինչպե՞ս եք փառաբանելու սեփական անպատժելիությունն ու սեփական ոճրագործությունը: Օսմանյան կայսրությունում ապրում էր մի հնազանդ հայ ազգաբնակչություն: Մոռացության մատնվեց: Ապրում է կրետացի մի-փոքրիկ ժողովուրդ, որն ընդվզել է, իսկ Եվրոպան շտապում է օգնել սուլթանին, որպեսզի շրջափակի Կրետե կղզին ու ջախջախի բռնաճնշված ժողովրդին: Եվ դուք ուզում եք, որ վաղը, երբ պարոն Դրնի Կոշենի խորհուրդներին անսալով, գնաք սուլթանից բարենորոգումներ պահանջեք, ձեզ լո՞ւրջ վերաբերվի: Հենց այս պահից դուք նրա համար ապահովել եք Եվրոպայի անպատժելիությունը:

Ավելին կա: Մինչ սուլթանը, արյունոտ նախճիրներից հետո, կփորձեր առաջին բարենորոգչական քայլերով վերականգնել իր վարկը ամբողջ աշխարհում, դուք նրան Կրետեում ձեր դաշնակիցը դարձրիք: [...] Այսպիսով, դո՛ւք եք Արևելքում սփռում պատերազմի ամենավտանգավոր սերմը: Այն, ինչ ես ասում եմ, կեղծ մարգարեություններ չեն: Թվում էր, թե սուլթանը, վերջապես տեղյակ դառնալով Եվրոպայի ուշացած վրդովմունքին, կանխելու էր հայերի կոտորածները, դրա համար էլ արտաքին գործերի պարոն նախարարը այս սրահում տեղի ունեցած հարցապնդումների հաջորդ օրը գրել էր նրան. «Պետք չէ, որ այլևս գեթ մի կաթիլ արյուն հեղվի»: Սուլթանը, սակայն, կարողացավ ձեր վստահությունը վերաշահել, այլևս ձեր կասկածը չի հարուցում: Նա անսպասելիորեն նկատեց, որ դուք դարձյալ մնում եք իր լավագույն հենարանն ու լավագույն բարեկամը: Եվ ահա, հենց այս պահին, երբ մենք խոսում ենք այդ ամենի մասին, հայկական ջարդերը վերսկսվում են, հայ ազգաբնակչությունը նորից կոտորվում է, այսինքն սուլթանը մեզ ոչ մի ակնթարթ թույլ չի տալիս մոռանալ, թե ինչպիսի համագործակցության հետ եք դուք համակերպվում, երբ ընդունում եք օսմանյան զորամիավորումների՝ Կրետեն խաղաղեցնելու գործողությունները *(ծափահարություններ ֆաշիստական ծայրահեղականների շարքերում)*:

Մեր խորհրդարանը գիտե, թե այս պահին ի՞նչ է անում, հանուն ինչի՞ է քվեարկում: Այս պահին, այն, ինչ ուզում են, որ նա հաստատի, խաղաղությունը չէ: Եթե անգամ խաղաղություն է, ապա մերը՝ մեր սահմանափակ խաղաղությունը, եսամոլական խաղաղությունը: Բայց դա միաժամանակ արյունահեղ խաղաղություն է, խաղաղության ծաղրանմանակումն է, խաղաղության ամենառազմատենչ ձևն է *(ծափահարություններ ֆաշիստական ծայրահեղականների շարքերում)*:

Ո՛չ, պատերազմի սարսափը, ամեն կերպ խաղաղությունը փրկելու բուռն ցանկությունը չէ, որ ձեզ մղում է թուրքամետ քաղաքականության: Նման քաղաքականություն վարելու համար դուք ունեք երկու վճռական ու իրական պատճառներ, որոշակի պատճառներ, որոնք պետք է քննել այս ամբիոնից ու ամբողջ երկրին տեղյակ դարձնել:

Առաջին պատճառը, որին անդրադարձավ պարոն Գոբլեն[4], օսմանյան արժեթղթերի բաժնետերերի նյութական հզորությունն է *(առարկություններ դահլիճի կենտրոնում, ծափահարություններ ֆաշիստական ծայրահեղականների շարքերում)*, այն արժեթղթերի բաժնետերերի, որոնք փորձեցին երկրի քաղաքականությունը խառնել իրենց սեփական շահին և որոնք, նախ և առաջ, ջանացին, նույնիսկ առանց բարենորոգումների, երկարաձգել ներկա Օսմանյան կայսրության գոյությունը: Որպեսզի ձգձգեն օսմանյան պարտատոմսերի մարման ժամկետը, նրանք իրենց տրամադրության տակ եղած հազար ու մի միջոցով,

մասնավորապես այսօր վարվող քաղաքականությամբ, աստիճանաբար ազդեցին հասարակական կարծիքի վրա *(ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում, առարկություններ դահլիճի կենտրոնում)*: Եթե անգամ իմ խոսքերի հարուցած որոշ աղմուկը խուլ ընդվզում է արտահայտում, հաստատ արտաքին գործերի պարոն նախարարը չի եզրակացնի, որ նման դժգոհություններն ու շահագրգռություններն են պայմանավորել մեր երկրի քաղաքականությունը, որովհետև հենց թեկուզ «Դեղին գիրքը» *(«Ճիշտ է, շատ ճիշտ է»՝ ֆաշ ծայրահեղականների շարքերից)*, մեր կարևորագույն քաղաքական փաստաթղթերը ակնհայտ են դարձնում օսմանյան բաժնետերերի ազդեցությունը:

Արտաքին գործերի նախարար – Պարոն Ժորես, ճիշտ հակառակը, դուք գիտեք, որ իմ դեմ ելևմտական արշավանք է սկսվել: Դուք դա շատ լավ գիտեք:

Ժորես - Արտաքին գործերի պարոն նախարար, ես չգիտեմ, պարտավոր էլ չեմ իմանալ ելևմտական արշավանքների, ինչպես նաև այն մասին՝ ձեր օգտի՞ն, թե՞ ձեր դեմ են գործում, և ձեզ խնդրում եմ հավատալ, որ երբ այս ամբիոնից ներկայացնում եմ մեր երկրի ընդհանուր վիճակի վերլուծությունը, երբեք մտքովս չեմ անցկացնում ձեր անձը խառնել նման բնույթի հարցերի, նման բնույթի տարակարծությունների: Կարծում եմ դուք չեք վիճարկի իմ՝ դիվանագիտական փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո որոշ գործընթացների վերաբերյալ բացահայտումներ կատարելու իրավունքը՝ գործընթացներ, որոնք դուք ամենայն հավանականությամբ օրինական, չափազանց կարևոր եք համարում, որոնք, մեզ համար, սակայն, ինչպես արևելյան, այնպես էլ այլ՝ ավելի ընդհանուր, ավելի մարդկային շահագրգռություններում նույնքան ծանրակշիռ չեն թվում:

Արտաքին գործերի պարոն նախարար, դուք, պատասխանելով մեր [1896 թ.] նոյեմբերի 3-ի հարցապնդմանը, այս ամբիոնից հայտարարեցիք, որ Նիկոլայ ցարի այցելությունը Փարիզ առիթ է եղել, որ մեր հանրապետության կառավարության ու ռուսական կայսրի միջև բանակցություններ ընթանան և արևելյան հարցի վերաբերյալ ընդհանուր, կարևորագույն որոշումներ կայացվեն: Այդ կապակցությամբ մենք առանձնակի պատրանքներ չէինք փայփայում: Քանի որ ռուսական կառավարության ղեկավարն ու ֆրանսիական հանրապետության ղեկավարները հանդիպել էին, բնական է, պիտի անդրադառնային հայկական ահասարսուռ նախճիրներին, վերջ տալու միջոցներ, վերսկսումը կանխելու ուղիներ որոնեին: «Դեղին գիրքը» վկայում է, սակայն, խոսքը արտաքին գործերի պարոն նախարարի՝ իր ենթականերին ուղղված ճեպագրի մասին է, որ երկու ժողովուրդների այդ պաշտոնական հանդիպման ընթացքում այլ բնույթի շահեր են քննարկման, բանակցությունների նյութ դարձել: Ի վերջո արտաքին գործերի պարոն նախարարը ցարից ու նրա նախարարից ի՞նչ զիջողության է արժանացել: Խոստում, որ Ռուսաստանը կմասնակցի օսմանյան պարտքի տնօրինմանը այն կազմակերպությունում, որտեղ մինչ այդ ներկայացված չէր: Այսինքն դա խոստում էր այն մասին, որ Ռուսաստանի ստորագրությունը երաշխավոր կդառնա օսմանյան պարտատոմսերի բաժնետերերի համար, եթե մինչև անգամ կայսրությունը տրոհվի կամ այլ ցնցումների ենթարկվի:

Ճիշտ է, իհարկե, նաև այն, որ մի քանի օր անց դուք Սանկտ-Պետերբուրգից տեղեկացաք, որ ռուսական կառավարությունը ավելի լրջորեն խորհրդածելով, ավելի լրջորեն իրազեկվելով, չի ցանկացել Ռուսաստանի ինքնիշխանությունը ենթարկել օսմանյան ելևմտական պատասխանատվություններին, և հրաժարվել է իր այն միակ խոստումից, որ ձեզ տվել էր Փարիզում: Ուստի ես լիովին իրավունք ունեմ ասելու, որ երբ ամենակարևոր դիվանագիտական փաստաթղթերում փնտրում ենք հանդիպման տոնախմբության, որտեղ մեծ պատրանքների կողքին ազգային մեծ հույսի թրթիռը կար, քաղաքական հանրագումարը և գտնում ենք միմիայն օսմանյան բաժնետոմսերի երաշխավորության մասին անորոշ, ապա նաև անարդյունավետ խոսակցություն, կրկնեմ՝ ես ինձ իրավունք եմ վերապահում ասելու, որ ելևմտական շահերը ունեցել ու այժմ էլ վնասակար ազդեցություն են ունենում մեր արտաքին քաղաքականության օսմանյան հարաբերություններում *(աղմուկ կենտրոնում, ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների շարքերում)*:

Մի ուրիշ ազդեցություն էլ կա, որ այժմ ծանրացել է Եվրոպայի, մեր ընդհանուր գործունեության վրա: Դուք, արտաքին գործերի պարոն նախարար, խոսեցիք եվրոպական համագործակցության մասին: Բայց դուք շատ լավ գիտեք, ինքներդ էլ խոստովանեցիք, որ թվացյալ համագործակցության ու միասնականության քողը թաքցնում է խիստ տարբեր քաղաքականություններ, խիստ հակընդդեմ միտումներ: Կա մի ժամանակաշրջան, հայկական ջարդերի մի ամբողջ ժամանակաշրջան, երբ որոշ ժողովուրդներ տարբեր, ուրիշ ժողովուրդներ էլ բոլորովին այլ քաղաքականություն էին նախընտրում: Ուստի, ես ձեզ

հարց եմ տալիս՝ արդյո՞ք այսօր եվրոպական համագործակցությունում հանրապետական Ֆրանսիայի ազդեցությունը բավականաչափ զգալի է [...]:

Պարոնայք, դուք հավակնում եք եվրոպական այդ համագործակցությունում մեզ համար այլընտրանքի, խզման, անգամ այն ամենից հրաժարվելու տարբերակ գտնել, որը մինչև այժմ եղել է Ֆրանսիայի ավանդական քաղաքականությունը [...]: Ինձ իրավասու եմ համարում ասելու, այժմ մեզնից է կախված ոչ թե եվրոպական համագործակցությունից հրաժարվելը, այլ այնտեղ մարդասիրության ու ազատության քաղաքականություն ներմուծելը, որոնք բացահայտորեն ֆրանսիական արժեքներ են:

[...]

Պարոնայք, չնայած ձեր հակադրմանը, ես ցույց տվեցի, որ դուք եք հարուցում պատերազմի վտանգը: Ես ցույց տվեցի, որ առանց եվրոպական համագործակցությունից հրաժարվելու, դուք, հավատարիմ մնալով Ֆրանսիայի ավանդույթներին, կարող եք այդ համագործակցությանն այլ ուղղվածություն հաղորդել: Նույնիսկ ցույց տվեցի, որ դուք, եթե ավելի մեծ վստահություն տածեիք հանրապետական Ֆրանսիայի ողջախոհությանը, կարող էիք ձեր ռուս դաշնակցից այլ քաղաքականություն ակնկալել:

Դուք դա չուզեցիք, դուք երեք տարի, ձեր սխալներով, սուլթանի ոճիրները չափազանց երկար հանդուրժելով, այս երկիրը փակուղի տարաք, ընտրեցիք հետադիմության ու բռնության քաղաքականությունը, որն ի վերջո կդառնա պատերազմի և նսեմացման քաղաքականություն: Դրա պատասխանատվությունը միայն դուք եք կրում:

(Բուռն ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների, ֆաշիերի տարբեր շարքերում: Բացականչություններ կենտրոնում):

Պարոնայք, չնայած ձեր հակադրմանը, ես ցույց տվեցի, որ դուք եք հարուցում պատերազմի վտանգը: Ես ցույց տվեցի, որ առանց եվրոպական համագործակցությունից հրաժարվելու, դուք, հավատարիմ մնալով Ֆրանսիայի ավանդույթներին, կարող եք այդ համագործակցությանն այլ ուղղվածություն հաղորդել: Նույնիսկ ցույց տվեցի, որ դուք, եթե ավելի մեծ վստահություն տածեիք հանրապետական Ֆրանսիայի ողջախոհությանը, կարող էիք ձեր ռուս դաշնակցից այլ քաղաքականություն ակնկալել:

Դուք դա չուզեցիք, դուք երեք տարի, ձեր սխալներով, սուլթանի ոճիրները չափազանց երկար հանդուրժելով, այս երկիրը փակուղի տարաք, ընտրեցիք հետադիմության ու բռնության քաղաքականությունը, որն ի վերջո կդառնա պատերազմի և նսեմացման քաղաքականություն: Դրա պատասխանատվությունը միայն դուք եք կրում:

(Բուռն ծափահարություններ ֆաշ ծայրահեղականների, ֆաշիերի տարբեր շարքերում: Բացականչություններ կենտրոնում):

Ծանոթագրություններ

[1] Ակնարկվում է սեպտեմբերյան հեղափոխությունը, որը տապալեց Նապոլեոն 3-րդի ինքնակալությունն ու Ֆրանսիան նորից հանրապետություն հռչակեց:

Գուստով-Ադոլֆ Հյուբբար - Ֆրանսիայի Ազգային ժողովի արմատական պատգամավոր: «Հարցապնդումներ Հայաստանի դեպքերի կապակցությամբ» խորհրդարանական քննարկման 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստում հայանպաստ ելույթ է ունեցել:

[2] Ժան Ժորեսի ներկայացրած բանաձևը հետևյալ բովանդակությունն ուներ. «Ֆրանսիայի Ազգային ժողովը, նկատի ունենալով Եվրոպայի պատասխանատվությունը Հայաստանի սահմռկեցուցիչ կոտորածների հանդեպ, ցավելով հավակնությունների, նախանձախնդրությունների, հետադիմական նկատառումների համար, որոնք թույլ չտվեցին ժամանակակից Եվրոպային Արևելքում միասնական քայլերի դիմել ի պաշտպանություն բռնաճնշվող մարդկության, հույս է հայտնում, որ աշխարհի բոլոր ժողովուրդները կմիավորվեն անկողմնակալ հասարակական կարծիք ստեղծելու՝ հասնելու համար այն բանին, որ եվրոպական գերտերությունները հայերի անվտանգությունը ապահովեն, Թուրքիայի՝ բոլոր կրոնների ու ցեղերի ազգաբնակչությանը ազատության, բարեկեցության ու առաջընթացի համընդհանուր երաշխիքներ տան»:

[3] Քվեարկությանը մասնակցեցին նիստին ներկա 497 պատգամավորներ, որոնցից 444-ը դեմ և միայն 53-ը՝ հիմնականում ընկերվարականները կողմ քվեարկեցին:

Ավելացնենք, որ ավելի քան մեկ դար՝ 108 տարի անց Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունեց հայերի ցեղասպանությունը և նույնիսկ այն դատապարտող օրենք սահմանեց: Տե՛ս «Զորակցություն՝ հայերի ցեղասպանության ընդունումը Ֆրանսիայի Ազգային ժողովում» գիրքը, թարգմ.՝ Գր. Զանիկյանի, նախաբանը՝ Հր. Մաթևոսյանի, «Զանգակ» հրատ., Երևան, 1999 թ.:

[4] Ռընե Գոբլե - Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր, եղել է Ազգային խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար: Նա մասնակցել է 1897 թ. մարտի 15-ի «Կառավարության դիվանագիտական գործունեությունը Արևելքում» խմբակցային հարցապնդման խորհրդարանական քննարկմանը՝ առաջինը կառավարության ուշադրությունը հրավիրելով Կրետեի իրադարձությունների վրա (խոսքը 1896 թ.-ին Կրետեում բռնկված հունական ապստամբության մասին է, որի նպատակը թուրքական լծից ազատագրվելն ու Հունաստանին վերամիավորվելն էր: Հույների հետ թուրքերի դեմ կռվում էին 600 հայեր: Թեև Հունաստանը պարտվեց, սակայն Կրետեին տրվեց վարչական ինքնավարություն՝ եվրոպական «պետությունների հովանավորության ներքո»):

ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները և որոշ համեմատություններ Սոցինտերնի անդամ այլ կուսակցությունների արժեքային հասկացությունների հետ

ԿԱՐԵՆ ԽԱՆԼԱՐՅԱՆ

Սկիզբը՝ «Դրօշակ» NoNo 7,8

ՀՅԴ Ծրագրի չորրորդ ենթագլուխն արդեն սկզբունքներ, կիրառական հաստատումներ եւ որոշ մանրամասնություններ է տալիս ՀՅԴ սոցիալիստական գաղափարի եւ առաջադրած համակարգի շուրջ:

Այսպես, նախ հաստատվում է, որ «**ՀՅ Դաշնակցության ընկերվարական իդեալը այնպիսի հասարակության կերտումն է, ուր մարդն ազատագրված կլինի ռասայական, կրոնա-դավանական, ազգային, քաղաքական, ընկերային եւ տնտեսական ամեն կարգի խտրականությունից, կաշկանդումից, բռնությունից եւ շահագործումից**» Ուշադրություն ենք հրավիրում ՀՅԴ ծրագրի վերոնշյալ հատվածում «հասարակության կերտում» ֆրազի վրա, որով դարձյալ ամրագրվում է այն միտքը, որ ՀՅԴ գաղափարաբանական տեսլականը չի ավարտվում միայն բարեփոխումներով, այլ միտում է արդար կարգերի, արդար համակարգի կամ արդար հասարակության կերտման հեռանկարի:

Այս հավատամքին հար եւ նման է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մոտեցումը. «**Հանուն ազատ, արդար եւ համերաշխ հասարակության,- ասում են նրանք:- Հանուն բոլոր մարդկանց հավասարության եւ ինքնորոշման՝ անկախ ծագումից ու սեռից, զերծ աղքատությունից, շահագործումից ու վախից**»[1]:

Այնուհետեւ ՀՅԴ ծրագիրը ընկերվարության իրագործումը պարզորոշ կերպով պայմանավորում է «**ընկերային համերաշխությանն ի խնդիր, տնտեսական հարաբերությունները կանոնակարգելու**» գործում «**ժողովրդավարության կիրառկումով**», բոլոր քաղաքացիների մասնակցությամբ: Երբ խոսվում է կանոնակարգման մասին, որոշակիորեն պարզվում է սոցիալիզմի իրավակարգային բնույթի մասին մեր ընկալումը, այլ խոսքով՝ ընկերվարության իրագործումը նախ օրենքի հարց է, որի իրավական դաշտի մշակման գործում առաջնային նշանակություն է տրվում բոլոր քաղաքացիների ժողովրդավարական մասնակցությանը:

Սոցիալիզմի համակարգային բնույթը արտացոլված է Լիբանանի առաջադիմական սոցիալիստական կուսակցության 2008 թ. ծրագրում: «**Սոցիալիզմը սոցիալական եւ տնտեսական մի համակարգ է,- ասվում է նշված աղբյուրում,- որը նպատակ ունի բոլորի համար իրականացնելու սոցիալական արդարություն, հնարավորությունների հավասարեցում, աշխատանքային նախաձեռնություն, ըստ նրանց կարողությունների եւ ներուժի**»[2]:

Իսկ սոցիալիզմի իրավակարգային բնույթի, նպաստավոր իրավական դաշտի ձեւավորման մասին մանրամասնություններ կարելի է գտնել Ֆիննական սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1999 թ. «Սկզբունքներ» կոչվող պլատֆորմային փաստաթղթում, ուր ասվում է. «**Սոցիալիզմի արժեքներին համաղատասխան, հասարակությունը իրավունք ունի ուշադիր հետեւելու եւ վերահսկելու արտադրության միջոցներով ստեղծված շահույթի օգտագործումը, տեղակայման ու սեփականության իրավունքը: Աշխատողներին ու սպառողներին պետք է հնարավորություն ընձեռել ազդելու այն որոշումների վրա, որոնք խթանում են արտադրության եւ տնտեսության աճը**»[3]:

Այնուհետեւ ՀՅԴ ծրագիրը պատասխանում է այն հարցին, թե ինչպես է լուծվելու սեփականատիրության հարցը առաջադրված իդեալական հասարակության մեջ: Մինչ այդ նշենք, որ ՀՅԴ 1907 թ. ծրագրում մասնավոր սեփականությունը համարվում էր տնտեսական չարիքի՝ շահագործման հիմնաքար: Խորհրդային տիպի պետական կապիտալիզի փորձը, հատկապես «ռազմական կոմունիզմ»-ի եւ «նոր տնտեսական ծրագիր (ՆԷՊ)»-ի շրջանների կենսափորձը, մարդկությանը եւ սոցիա-

[1] Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Համբուրգյան ծրագիր, 2007:

[2] Լիբանանի առաջադիմական սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր, 2008:

[3] Ֆիննական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Սկզբունքներ, 1999:

լիստական մտքին ապացուցեց, որ մասնավոր սեփականության բացառմամբ չի վերանում շահագործումը, այլ շարունակում է գոյատեւել պետական բարդ մեխանիզմներով եւ, մարդկային տեսակետից էլ, առավել դաժան եղանակներով: Այդ իրողությանն ի տես, սոցիալիստական միտքը, անցյալ դարի կեսերին, հանգեց այն եզրակացության, որ մասնավոր սեփականությունը, կանոնակարգված հասարակության պայմաններում, կարող է նույնիսկ խթանել հասարակության տնտեսական բարգավաճմանը:

Պատմական այս կարեւոր հանգամանքի լույսի տակ ՀՅԴ 1982 թ. ծրագիրը արդեն հստակեցրել էր դաշնակցական ընկալումը մասնավոր սեփականության մասին, այն համարելով թույլատրելի. «**անհատի համար օրենքով ճշված սեփականատիրությունը անհրաժեշտ է անձնական կարիքների բավարարման ու սեփական տնտեսության մատակարարման համար,- ասվում է այնտեղ,- հիմք ընդունելով այն սկզբունքը, որ տնտեսապես ինքնաբավ ու աղահով անհատը միայն կարող է տեր կանգնել իր մարդկային իրավունքներին եւ ազատություններին ընկերվար կարգերի տակ**»[4]

Սույն մոտեցումը հիմք հանդիսացավ ՀՅԴ 1998 թ. ծրագրում տեղադրված սեփականատիրական բազմաձեւության հիմնադրույթին, ըստ որի ընդունվում է սոցիալիստական հասարակության մեջ, արդյունաբերության եւ երկրագործության բնագավառներում սեփականության՝ ազգային-պետական, հավաքական-համագործակցական եւ մասնավոր-անհատական ձեւերի համատեղ եւ միաժամանակ գոյության սկզբունքը: ՀՅԴ ծրագրում դրվում է նաեւ շատ կարեւոր պայման, այն է, որ բազմաձեւ սեփականատիրությունների «**սահմանագծումը, օգտագործումը եւ կազմակերպումը կատարվեն ընկերային ուղղվածությամբ հակակշռի սկզբունքով, շահագործումը վերացնելու ձգտումով, հարստությունների կենտրոնացման եւ մենաշնորհների առաջացման բացառումով**»:

Բնականաբար, տրամաբանական չէր լինի, եթե ՀՅԴ ծրագիրը օրենքների նախագիծ կամ ձեւաչափեր ներկայացներ սեփականատիրության ձեւերի եւ նրանց ներքին հակակշռման միջոցների մասին: Այնուամենայնիվ, ծրագիրը կարեւոր շեշտադրմամբ է հանդես գալիս ազգային հարստությունների վերաբերյալ. «**Ազգային հարստություն են եւ ռազմավարական նշանակություն ունեն՝ մշակույթը, հողը եւ ընդերքը, բնական միջավայրը եւ պաշարները**»:

Բուլղարացի սոցիալ-դեմոկրատներն էլ ազգային եւ ռազմավարական նշանակության հարստությունների բնորոշումը որոշակիացրել են իրենց ծրագրային ըմբռնումների շրջանակում: «**Սեփականության փոփոխումը մասնավորեցման մեխանիզմների միջոցով խթանում է մասնավոր սեկտորի աճը տնտեսության մեջ,- ասում են նրանք:- Զուգահեռաբար, մենք, Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատներս, դեմ ենք ջրի, էներգիայի, առողջապահության, կրթության, տրանսպորտի մասնավորեցմանը եւ այդ գործառույթներից պետության ետ քաշվելուն**»[5]:

ՀՅԴ ծրագրում առաջադրված ընթացակարգային լուծումները հիմնականում ուղղված են նաեւ «ազատ շուկայի» սանձարձակ դրությունը հսկելու եւ հակակշռելու: «Ազատ շուկա» հասկացությունը, որպես նեոլիբերալական մտքի «հանճարեղ» նվաճում, գրեթե պարտադրյալ շաբլոնի եւ «դեմոկրատիա»-ի չափանիշի վերածվեց Խորհրդային Միության փլուզումից հետո: «**Թերզարգացած երկրներին պարտադրվում է տնտեսական եւ սոցիալական այնպիսի քաղաքականություն,- ասվում է ՀՅԴ ծրագրում,- ինչը հասատում է սանձարձակ շուկայական տնտեսության իրողությունը, ծառայում իշխող խավի մոտ դրամագլխի կենտրոնացմանը, ինչպես նաեւ խմբիշխանական ու իշխանակենտրոն վարչակարգերի հաստատմանը**»:

Նեոլիբերալական այս հաղթարշավի սկզբնական փուլում, ով հանդգնում էր քննադատել «ազատ» շուկայական համակարգը՝ համարվում էր կոմունիզմի կառքին լծված, հակաժողովրդավարական եւ հետադիմական... Եվ պետք է խոստովանել, որ անցյալ դարի վերջին տասնամյակին սոցիալիստական միտքը շոկային վիճակներում հայտնվելով, հաճախ չէր հասցնում գաղափարապես մեջք շրջել նեոլիբերալական տեսական հարձակումներից: Նոր հազարամյակում, սակայն, սոցիալիստական միտքը վերակազմակերպվեց եւ հստակեցրեց իր քննադատական մոտեցումները կապիտալիզմի այս երեւույթի՝ «ազատ» շուկայի նկատմամբ: Ուզում ենք այստեղ, մի քանի օրինակով, ներկայացնել այս մոտեցումները. «**Շուկան աղահովում է շահույթի լայն ոլորտներ մարդկանց համար,- ասում են դանիացի սոցիալ-դեմոկրատները:- Բայց շուկան չի կարող բավարար լինել՝ բոլորի համար ընտրության բազմազանություն աղահովելու իմաստով: Համոզված լինելու համար, որ դանիական հասարակության մեջ գերիշխում է իսկական ընտրությունը, եւ այն, որ բոլորը կարող են ազդեցություն ունենալ իրենց սեփական**

[4] ՀՅ Դաշնակցություն, Ծրագիր, 1982:

[5] Բուլղարական սոցիալ-դեմոկրատների կուսակցություն, Ծրագիր:

կյանքի ու բարեկեցության վրա, պետք է շուկա մտցնել սոցիալական կարգավորում»[6]:

Հոլանդացի լեյբորիստները նույնիսկ զգուշացնում են «ազատ շուկա»-ի սանձարձակությունների բացասական հետեւանքները ինչպես մարդկանց, այնպես էլ բնության վրա. «Քաղաքականությունը պետք է կանոններ պարտադրի շուկային եւ միջամտի՝ ուղղություն ցույց տալով եւ ճշտելով, այն դեպքում, երբ շուկայական ուժերը հակադրվում են մարդկանց ու միջավայրին»[7]:

Բելգիայի ֆլամանդական սոցիալիստները եւս ընդգծում են ազատ շուկայի աղետաբեր հետեւանքները. «Ազաս շուկան համադարման չէ,- ասում են նրանք:- Մինչ շատերը կուրորեն հավատում են, թե ազաս շուկան ինքնաբերաբար կարգավորում է բոլոր խնդիրները եւ բարձրացնում դրան դոգմայի աստիճանի, գնալով ավելի ակընհայտ է դառնում, որ սեփականաշնորհումը եւ ազատականացումը բավարար չեն Եթե ազաս շուկան չի առաջնորդվում հավասար հնարավորություններով, ապա մենք պետք է պարզապես չափավորենք կամ կանոնավորենք այն»[8]:

Այն հարցին, թե որո՞նք են հասարակական եւ մարդկային այն բնագավառները, որ ենթակա չեն «ազատ» շուկայի քմահաճ կամայականությանը, հոլանդացի լեյբորիստները տալիս են հստակ պատասխան: Նրանց համոզմամբ, ազատ շուկան «չի կարող ինքնաբերաբար ապահովել սոցիալական արդարությունը, դեմոկրատական հաշվետվությունը, հասարակական հետաքրքրությունը, մշակութային զարգացումը եւ բնապահպանական կայունությունը»,- ասում են հոլանդացի լեյբորիստները[9]:

Այս ամենն ասվեց հետեւություն անելու համար, որ նույնիսկ զարգացած եվրոպական երկրներում «ազատ» շուկան այլեւս չի համարվում «կայուն» եւ «արդյունավետ» համակարգ: Այս իրողության հետ պետք է հաշվի նստել, հատկապես Հայաստանի նման երկրներում, որոնք գտնվում են խորհրդային տիպի պետական կապիտալիզմից ձերբազատվելու փուլում: Ահա այս դեպքում անհրաժեշտ է «ազատ» շուկայական համակարգը դիտել որպես լոկ անցումային շրջան եւ ոչ թե վախճանական հասարակարգ: Այսպիսով հարկավոր է համապատասխան օրենքների մշակմամբ եւ դրանց իրավական մեխանիզմների ձեւավորմամբ, աստիճանաբար կանխել «ազատ» շուկայի սանձարձակությունները եւ սահմանափակել դրա դերը տնտեսության մեջ: Դրանք են.

- Հասարակական ուղղվածությամբ հակակշիռը՝ գնագոյացման հարցում սանձարձակությունները վերացնելու համար,
- Շահագործումը վերացնելու ձգտումը՝ արդարության հասնելու համար,
- Հարստությունների կենտրոնացման կանխումը՝ դասակարգային ճեղքվածքները հարթեցնելու համար,
- Մենաշնորհների բացառումը՝ դասակարգային բեւեռացումները կանխելու համար:

ՀՅԴ ծրագրում մի շարք ստորոգելիների պարզաբանումից հետո, մեկ անգամ եւս հիմնավորվում է ՀՅԴ դավանած ընկերվարության ազգային ուղղվածությունը եւ բացատրվում է, որ ընկերվարական գաղափարը անմիջականորեն հակադրվելով կամ համընկնելով հասարակական որոշակի շերտերի շահերին, այնուամենայնիվ, իր առաջադրած հասարակական բնորդով, ապաղասակարգային է եւ նախատեսված է ազգի, հասարակության բոլոր անդամների համար: Հետեւաբար այն ունենալով համազգային բնույթ, միտում է նպաստել բովանդակ ազգի զարգացմանը. «Այս տեսլականի իրականացումը, հակադրվելով հանդերձ իշխող դասակարգերի անմիջական շահերին, կիրականանա հօգուտ ոչ միայն աշխատավոր ընդհանրության, այլեւ՝ համայն ազգի բնականոն զարգացման»:

* * *

ՀՅԴ ծրագրի հինգերորդ ենթագլխում համապարփակ կերպով բացատրվում է մեր ազգայնության գաղափարը: Հատկանշականն այն է, որ ըստ ՀՅԴ ծրագրի ազգը համարվում է մի ընդհանրություն, մի համակարգ, որի ամբողջական ինքնությունը վեր է ազգը կազմող բաղադրամասերի առանձին հատկությունների սոսկական հանրագումարից:

Եվ հստակորեն մերժվում է «ազգային բացառիկության ամեն գաղափար, ազգայնամոլության ամեն երեւույթ՝ իբրեւ մարդկային ընկերության բնականոն զարգացումն արգելակող դրսեւորումներ»: Պետք է նշել, որ ազգային բացառիկության մերժումը ՀՅ Դաշնակցության տեսաբանների մոտ բնավ էլ նոր երեւույթ չէ: Անցյալ դարասկզբին, օրինակ, Միքայել Վարանդյանը, բազմաթիվ տեսական եւ հրապարակախոսական հոդվածներով, փորձել է սահմանազատել ՀՅԴ ազգայնությունը՝ հայությանը խորթ եւ անհարիր ազգայնականությունից (նացիոնալիզմ) եւ ազգայնամոլությունից (շովինիզմ): «Դա հայրենասիրու-

[6] Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Քաղաքականություն եւ սկզբունքներ, 2005:
[7] Հոլանդական լեյբորիստական կուսակցություն, Մանիֆեստ, 2005:
[8] Բելգիայի ֆլամանդական սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր:
[9] Հոլանդական լեյբորիստական կուսակցություն, Մանիֆեստ, 2005:

թյուն չէ, այլ նրա կեղծումը, խեղաթյուրումը,- գրում է Միքայել Վարանդյանը դեռ 1910 թվականին:- Դա ոչինչ չունի առնչություն ճշմարիտ հայրենասիրության հետ Դա նացիոնալիզմ է, ազգամոլություն ամեն տեղ մեզ մոտ եւս Մեր իրականության մեջ՝ իշխելու, ուրիշներին ստրկացնելու հավակնությունը տեղ չի կարող գտնել հարկավ, բայց մեզ մոտ եւս շովինիստական հիվանդությունը արտահայտվում է հաճախ ազգայնական ունայնատիպ ինքնահավանության մեջ, մեզ մոտ եւս կա ճչան, աղմկասեր նացիոնալիզմը...»[10] Նույն միտքն է արտահայտել նաեւ ՀՅԴ մի այլ տեսաբան՝ Գառնիկ Գյուզալյանը. «Քաղքենիական ազգայնությունը լոկ մի հանգրվան է,- ասում է նա,- մի փուլ ազգայնության գաղափարի հավերժական զարգացման եւ, որպես այդպիսին, հանդիսանում է պատմական երեւույթ»[11]: Այսպիսով, Գյուզալյանը սահմանազատում է բուրժուական ազգայնությունը սոցիալիստական ազգայնությունից: Ռոստոմն էլ, ՀՅԴ 1907 թ. չորրորդ Ընդ. ժողովում հռետորական դիպուկ արտահայտությամբ, հանդես էր եկել նույն այս սահմանազատումը կատարելու համար, ասելով, որ «Մեր դավանած ազգայնությունը «մեղվականի» ու «մշականի» ազգայնությունը չէ Աշխատավորական տեսակետից մենք եղել ենք ու պիտի մնանք ազգային»:[12]

Սոցիալիստական շարժման մեջ ազգային բացառիկության մերժումը, ազգային ինքնորոշման սկզբունքի հետ միասին, հանդիսացել է հիմնարար ընթռնում: Տեսական հիմնավորումներից զատ, սա եղել է նաեւ ինքնահաստատման լուրջ կեցվածք՝ ստալինյան համատարած քարոզչության դեմ, որով հատկապես ազգային ինքնորոշմանը հավատացող սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական ուրույն շարժումների ճակատին առատորեն փակցվում էին «բուրժուա-նացիոնալիստ», «սոցիալ-շովինիստ» եւ այլ անհեթեթ պիտակներ: Հետեւաբար թող այսօր տարօրինակ չթվա այս ընթռնման ամրագրումը պատմության բովով անցած բազմաթիվ կուսակցությունների մոտ: Այս իմաստով լավագույն օրինակներից կարելի է համարել Բուլղարիայում վերընձյուղված սոցիալիստական կուսակցությունը, որի 2006 թ. ծրագրում հայտարարվում է, որ՝ «**Մենք հավասարապես ժխտում ենք թե՛ ազգային սնապարծությունը, թե՛ ազգայնամոլությունը՝ այս կամ որեւէ այլ երկրում**»:[13]

ՀՅԴ ծրագրում հայրենիքը համարվում է ազգի պատմաաշխարհագրական բնօրրանը, որի վրա «**յուրաքանչյուր ազգի գոյատեւման երաշխիքը անկախ եւ իրավական պետականությունն է**»:

«Իրավական պետություն» ասելով պետք է հասկանալ այնպիսի պետություն, ուր գերակայում է ժողովրդի կամքի հիման վրա հաստատված օրենքը, այնպիսի պետություն, որի հիմքն են կազմում ոչ թե տնտեսական հարաբերությունները կամ քաղաքականությունը (ստալինյան մեկնաբանությամբ), այլ սահմանադրական իրավունքների համակարգը: Բնականաբար իրավական պետություն չի կարող գոյանալ ազգային իմաստով կախյալ պետության պայմաններում: Հետեւաբար ՀՅԴ ծրագիրը ընդգծում է հետեւյալը. «**Քաղաքական որեւէ վարչակարգի եւ իշխանության պարտադրումը ազգերի ինքնորոշման սկզբունքի կողից խախտում է, բռնատիրություն է եւ ըստ ամենայնի՝ մերժելի**»:

Ազգերի ինքնորոշման ոտնահարման նման երեւույթի դեմ, դարձյալ, հանդես են գալիս շվեդ սոցիալ-դեմոկրատները, որոնք իրենց 2001 թ. ծրագրում հաստատում են, որ՝ «**Ռազմականապես կամ տնտեսապես ուժեղ ոչ մի պետության կամ ահաբեկչական խմբին թույլատրելի չէ մեկ այլ պետությանը պարտադրել ռազմական կամ տնտեսական ենթակայություն**»[14]:

ՀՅԴ ծրագիրը այս ենթագլխում հաստատում է եւս մի սկզբունք, որն ուղղակի աղերս ունի մեր ազգային դատին եւ տեսական հենք է հանդիսանում մեր պահանջատիրության համար. «**Ինքնորոշման իրավունքը անժամանցելի է եւ ի զորու կլինի նույնիսկ այն ժամանակ, երբ բռնագաղթով կամ ցեղասպանությամբ ազգը դուրս է մղվում իր հայրենիքից**»: Ազգերին իրենց պատմական հայրենիքից հանելու հետեւանքով քաղաքական քարտեզի փոփոխման մասին տեսական կարեւոր հաստատման ենք հանդիպում շվեդ սոցիալ-դեմոկրատների 1993 թ. ծրագրում, ուր ասված է. «**Միջպետական ներկայիս սահմանները հետեւանք են պատմական պայմանների՝ զավթողական պատերազմների, գաղութատիրության եւ մեծ ուժերի ծավալապաշտության**»[15]:

Մեծապետական եւ ծավալապաշտական այս իրողությունը նկատի առնելով, անխուսափելիորեն հող է պատրաստվում տեսական հարթության վրա հաստատելու ազգերի համար անհրաժեշտ մի իրավունք, որն էլ ամրագրված է ՀՅԴ ծրագրում ըստ հետեւյալի.

[10] Վարանդյան Մ., Վերածնվող հայրենիքը եւ մեր դերը, Ժնեւ, 1910:

[11] Գյուզալյան Գ., Պատմական խնդիրներ, Բեյրութ, 1985, էջ 39:

[12] Գաղափարագրություն ՀՅ Դաշնակցության, Ա հատոր, Գաղափարաբանություն, 1997, էջ 206:

[13] Բուլղարական սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր, 2006:

[14] Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 2001:

[15] Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 1993:

«Բոլոր ազգերի անժխտելի իրավունքն է ազգային ազատագրական պայքարի ճանապարհով եւ նպատակահարմար այլ միջոցներով տաղալել ամեն կարգի բռնապետություն»: Անշուշտ, առանց նման իրավունքի տեսական հստակեցման, ի շարս այլոց, անորոշ է մնալու մեր ազգային-ազատագրական պայքարի իմաստը:

* * *

Վեցերորդ ենթագլուխը ընդհանուր հստակեցումներ, սկզբունքներ, ինչու չէ՝ նաեւ որոշ մանրամասնություններ է տալիս ՀՅԴ ժողովրդավարության հասկացության վերաբերյալ:

Նախ հաստատվում է ընկերվարության ու ժողովրդավարության միջեւ կապվածության եւ փոխպայմանավորվածության դաշնակցական ըմբռնումը. «**ՀՅ Դաշնակցությունը հավատում է, որ ընկերվարության իդեալը անիրականանալի է առանց ժողովրդավարության, իսկ ժողովրդավարությունը թերի է եւ սահմանափակ՝ առանց ընկերվարության**»: Արգենտինացի սոցիալիստները սոցիալիզմի եւ դեմոկրատիայի կապվածությունը բանաձեւում են հետեւյալ կերպով. «**Ժողովրդավարությունը նվազագույն սոցիալիզմն է, սոցիալիզմը՝ բարձրագույն ժողովրդավարությունը**»[16]:

ՀՅԴ ծրագիրը ձեւակերպում է նաեւ ժողովրդավարության իրավական բնույթը. «**Ժողովրդավարությունը խարսխվում է մարդկային եւ քաղաքացիական իրավունքները եւ ազատությունները հարգելու վրա**»:

Որոշակիացնելով ազատությունների իմաստն ու տեսակը, ծրագիրը շեշտում է դրանց օրինական երաշխիքների գոյության անհրաժեշտությունը. «**Այն օրենքով պաշտպանում է բազմակարծությունը, բազմակուսակցականությունը եւ խոսքի, խղճի, մամուլի, ստեղծագործելու եւ աշխատանքի լիակատար ազատությունը**»:

Իսկ չափանիշ ընդունելով քվեն եւ առաջնային համարելով մեծամասնության կամքը, ծրագիրը պարզում է քաղաքացիների իրավական փոխհարաբերությունը օրենքի նկատմամբ. «**Ժողովրդավարությունը հասկանալի է անհատի ազատ եւ հավասար քվեի իրավունքով եւ ազատ քաղաքացիների՝ օրենքի առջեւ հավասարությամբ**»: Այսպիսով, ՀՅԴ ծրագիրը իդեալական հասարակության մեջ ուրվագծում է հավասարություն եզրույթի երկու գլխավոր տեսակը՝ **հնարավորությունների հավասարություն**, որն ըստ էության սոցիալական կատեգորիա է, եւ **իրավունքների հավասարություն**, որը միանգամայն իրավական եւ քաղաքացիական բնույթ է կրում:

Նման մոտեցմամբ, բայց տարբեր ձեւավորմամբ է հանդես գալիս Բելգիայի ֆլամանդական սոցիալիստական կուսակցությունը, որի ծրագրում ասվում է. «**«Հավասար հնարավորությունները» նույնը չէ, ինչ «հավասար իրավունքները»: Ամենեւին: Սոցիալիստները ուզում են կազմակերպել այնպիսի հասարակություն, ուր յուրաքանչյուր անհատ իրոք հնարավորություն ունենա ընտրություն կատարելու: Ձեւակերպենք այլ կերպ. Հավասար ազատություն բոլորի համար**»[17]:

Քաղաքացիական իրավունքների հիման վրա, ՀՅԴ ծրագիրը առաջադրում է մի շարք ընթացակարգային հիմնադրույթներ ժողովրդավարական համակարգի արդյունավետության բարձրացման համար: Այսպես՝ ժողովրդավարությունը «**ապահովում է ժողովրդի կամքի անկաշկանդ արտահայտությունը եւ, հատատությունական ու ներկայացուցչական հիմունքով, ժողովրդի ամբողջական եւ լիարժեք մասնակցությունը քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային կյանքին՝ այդպիսով արդյունավետ հիմքերի վրա դնելով ժողովրդի եւ պետության փոխհարաբերությունները**»:

Հատկանշական է այստեղ ժողովրդավարության ներկայացուցչական կարգին առընթեր՝ հաստատուքենական հիմունքի ընդունումը, որով ծրագիրը փաստորեն առաջադրում է «քաղաքացիական հասարակության» կարգավիճակի կիրարկումը հասարակական-քաղաքական ասպարեզում՝ որպես ժողովրդավարության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմ եւ դրա գոյությունը ապահովող երաշխիք:

Ենթագլխի վերջում ծրագիրը գաղափարական հավատարմության իր հավաստիքն է հայտնում ժողովրդավարության կենսափիլիսոփայության անփոխարինելի հիմքը հանդիսացող Մոնտեսքյոյի վաղեմի տեսությանը. «**Ժողովրդավարությունը պայմանավորվում է օրենսդիր, դատական եւ գործադիր իշխանությունների տարանջատումով եւ փոխադարձ հակակշռումով**»:

* * *

«ՀՅԴ գաղափարաբանության հիմքը» գլխի վերջավորության, ծրագիրը, մեկ անգամ եւս, ընդհանուր գծերով բնորոշում է ՀՅԴ էական առաքելությունը. «**ՀՅ Դաշնակցությունը, հավատարիմ իր գաղափարաբանությանը, իր բոլոր ուժերով նվիրվում է բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային շահերի պաշտպանությանը՝ ի խնդիր Ազատ Հայի, Ազատ Քաղաքացու եւ Ազատ Հայրենիքի կերտման**»:

[16] Արգենտինայի սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր, 2002:

[17] Բելգիայի ֆլամանդական սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր:

ԱՇՈՏ ՇԱՀԻՆՅԱՆ

Պատմ. գիտ. թեկնածու

Մի քանի նկատառումներ հայերի մահմեդականացման հարցի շուրջ

Հայերի մահմեդականացման խնդիրը կամ ավելի լայն իմաստով մահմեդական հայերի պատմությունը համեմատաբար քիչ կամ գրեթե ուսումնասիրված չէ: Պետականության բացակայության պայմաններում որևէ հոգածություն այս խնդիրների նկատմամբ չի եղել, իսկ քրիստոնեական եկեղեցին բոլոր հնարավոր միջոցներով աշխատել է կրոնական առաջացած տարբերությունները ընդգծել, և օտարել մուսուլման հայերին մնացած քրիստոնյա հատվածից: Նույն ուղղությամբ են աշխատել նաև Հայաստանի տարածքը տարբեր ժամանակներում գրված երկրները՝ Արաբական խալիֆաթը, Օսմանյան կայսրությունը, սելջուկները, Իրանը, ցարական Ռուսաստանը, ԽՍՀՄ-ը: Որ խնդիրը հայոց պատմության ամբողջական ներկայացման համար խիստ անհրաժեշտ է, ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում:

Այս կապակցությամբ կփորձենք ներկայացնել մեր մի քանի նկատառումները՝ մուսուլմանացած հայերի պատմության խնդրի հետ կապված: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու ժամանակամիջոցը, որքան հայտնի է, ընթացել է արյունահեղություններով և պատերազմներով: Դիմադրում էին ոչ միայն քրմերը, մեհյանների զինուժը, այլև նախարարությունների մի մասը, հին կրոնին ու ծեսերին կապված գյուղացիությունը, հատկապես լեռնային: Ինչպես իրավացիորեն գրում է անվանի պատմաբան Ն. Ադոնցը, հայ եկեղեցին Հայաստանի մի մասում բոլորովին էլ այն չէր, ինչ էր մյուս մասում, դա կախված էր նրան շրջապատող քաղաքական մթնոլորտից: (Ն. Ադոնց, «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում», 1987 թ., Եր., էջ 359): Աղբյուրների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցու կազմակերպական կառուցված-

քը, ինչը համապատասխանում էր ժամանակի վարչա-քաղաքական կառուցվածքին (նախարարությունների բաժանմանը), իր թեմերի քանակով ետ էր մնում նախարարների թվաքանակից՝ համապատասխան «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալների: Այսպես, մինչև 70-ի հասնող նախարարական տների թվին նույն ժամանակամիջոցում եպիսկոպոս-թեմականների թիվը տատանվում էր 18-ից մինչև 30-ի՝ ըստ տարբեր աղբյուրների (տես Ն. Ադոնց, նույն աշխ., էջ 294-295, 363): Ավելացնենք, որ Վարդանանց պատերազմին մասնակցող նախարարների թիվը ըստ Եղիշեի չի անցել 20-ը, ըստ Ղազար Փարպեցու՝ մի փոքր ավելի է եղել՝ 25: 505 թ. եկեղեցական ժողովին մասնակցել է 14 նախարար, իսկ Ներսես կաթողիկոսի կողմից հրավիրված 555 թ. ամենաբազմամարդ ժողովին մասնակցել է 32 իշխան: Դա այն դեպքում, երբ Հայաստանում նախարարությունների թիվը ըստ «Վարք Ներսեսի» մատենագիտական սկզբնաղբյուրի եղել է 400, ըստ արաբ հեղինակ Յակուբիի՝ 113, ըստ «Գահնամակի»՝ 70, ըստ «Զորանամակի»՝ 86: Իսկ մեծանուն պատմիչ Մ. Խորենացին նշում է, որ 300 այրուձիուց պակաս զորք ունեցողներին չի հիշատակել: Այսպիսով, ակնհայտ է, որ մինչև 7-րդ դարը քրիստոնեական եկեղեցին չի կարողացել հաստատվել Հայաստանի բոլոր գավառներում, նախարարություններում: Հասարակության վերաբերմունքը միանշանակ չի եղել: Այս հանգամանքը բարդացավ նաև ներքաղաքական պայքարով. երբ առաջին քրիստոնյա Արշակունի արքաները կոտորեցին հայկազյան որոշ նախարարությունների՝ ընդդիմադիր կեցվածքի համար (նաև նոր կրոնի նկատմամբ): Դրանք էին Սլկունիները, Բզնունիները, Մանավազյանները, Որդունիները և ուրիշներ: Նրանց տիրույթները հիմնականում հանձնվեցին եկեղեցուն: Այսպես, Փ. Բուզանդը վկայում է, որ «Մանավազակերտը ամենայն սահմանօքն և գաւառականն հանդերձ» անցան Աղբիանոս եպիսկոպոսին:

Հարաբերական այս կարգավորվածությունը խախտվեց արաբական նվաճումներով և Խալիֆաթի ձևավորմամբ: 7-8-րդ դարերում արաբների կողմից վերացվում են



իրավա-քաղաքական մի շարք հարաբերություններ, այդ թվում ծառայության կարգը ըստ բարձի և պատվի, հեծելազորային ծառայության կարգը և այլն: Այլ կերպ ասած, և «Գահնամակի», և «Զորանամակի» իրավա-քաղաքական հիմքերը վերացվում են: Նախարարություններին սպասվում էր նոր փորձություն: Այս փոփոխությունները տարածվեցին նախկին Սասանյան պետության ողջ տարածքի վրա, այդ թվում Հայաստանի: Միաժամանակ այս փոփոխությունը ուղեկցվում էր գլխահարկի ինստիտուտի ստեղծմամբ ոչ մուսուլման ազնվականության համար: Հայտնի է, որ իրանական ազնվականությունը նախընտրում է ընդունել իսլամը, քան վճարել նվաստացուցիչ գլխահարկը: Անշուշտ, այս իրողությունը չէր վերաբերում զուտ Իրանին միայն: Հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրները լռում են նրանցում առկա հայ նախարարությունների մասին:

Մյուս կողմից, իսլամ են ընդունում քրիստոնյա նեստորականները, որին հարում էին Մեծ Հայքի արևելքից մինչև հարավ տարածվող լեռնային նահանգների բնակչության զգալի մասը՝ Փայտակարան, Արցախ, Սյունիք, Պարսկահայք, Կորճայք (Կորդուք), Աղձնիք, ինչպես նաև Ատրպատականի և Հայկական Միջագետքի բնակչության մեծ մասը: Այնպես որ արդեն 7-9-րդ դդ. հայության մի զգալի հատված ընդունել է իսլամը: Պայմանականորեն այն կարելի է համարել հայերի մահմեդականացման 1-ին փուլ: Այս փուլի առանձնահատկությունը թերևս այն էր, որ իսլամացումը միաժամանակ ընթանում էր որպես արաբացում և արդեն 10-11-րդ դդ. Հայաստանի հարավային և արևելյան սահմաններում կար զգալի թվով իսլամադավան արաբախոս բնակչություն: Այս գործընթացը ուժեղանում է մի շարք հանգամանքներով.

1. Բյուզանդիայի ագրեսիվ քաղաքականությամբ, որի հետևանքով Հայաստանի մեծ մասը հայտնվեց Բյուզանդիայի կազմում: Կայսրությունը երկրում վարում էր հակահայ ներքին քաղաքականություն՝ խոշոր ֆեոդալական տների գաղթեցում, ազնվականության մշտական զորահավաքներ, 50 հազարանոց հեծելազորի արձակում Մանազկերտի ճակատամարտի նախօրեին, կրոնական հալածանք և այլն:

2. Սոցիալական, աղանդավորական ընդգրկուն շարժումները և նրանց նկատմամբ հայ ավատատերերի և կայսրության անզիջում պայքարը. նեստորական հայերի զանգվածային աքսորը Լիբանան 7-րդ դարում, պավլիկյանների աքսորը տարբեր վայրեր, թոնդրակյանների նկատմամբ անհանդուրժողականությունը և այլն:

Կայսրության ագրեսիվ և անհանդուրժողական քաղաքականությունը հայ հասարակության լայն մասի առջև վարկաբեկեց կրոնական (քրիստոնեական) եղբայրության և համերաշխության գաղափարներն ու տեսլականը:

Այս իրողությունների թելադրանքով, ինչպես նաև նոր պատմական իրադրությունը մի նոր փուլ ձևավորեցին հայ զանգվածների մահմեդականացման: Ինչպես ցույց են տալիս պատմական աղբյուրները, հայերի մուսուլմանացումը դառնում է զանգվածային: Մեր կարծիքով, այս նոր փուլը՝ 11-12-րդ դարերից սկսած, ունի նաև իմացաբանական-մշակութաբանական հիմքեր, որոնց անդրադարձը մեր խնդիրներից դուրս ենք համարում: Մուսուլմանություն են ընդունում կայսրության ծառայության մեջ գտնվող բազմաթիվ անվանի հայ իշխաններ, Սիրիայի և Կապադովկիայի կառավարիչ Փիլարտոս Վարաժնունին իր արքունիքով, Սեբաստիայի Արծրունիները և ուրիշներ: 1226 թ. Կիլիկիայի հարևան Էրմանիկեում հայազգի իշխան Նուրի Բեյը հիմք է դնում ապագա Կարամանիային, որը Կոստանդին իշխանի Կիպրոս և Եվրոպա գաղթելուց հետո ընդգրկում է ողջ Կիլիկիան, Կապադովկիան, Փոքր Հայքը: Դիվանագիտական փաստաթղթերում այս պետությունը կոչվում է Հայոց թագավորություն, նրանց ամիրաները՝ Հայոց թագավորներ: Այս պետությունն իր գոյությունը պահպանում է մինչև 16-րդ դարի սկզբները և մասամբ նվաճվում, մասամբ կամավոր միավորվում է Օսմանյան բարձրացող կայսրությանը:

Մեծանուն պատմաբան Հ. Մանանդյանը, խոսելով 12-13-րդ դդ. Զաքարյանների կողմից Հայաստանի հյուսիս-արևելյան գավառների ազատագրության նշանակության մասին, գրում է, որ այդ և մյուս հայկական տարածքները գտնվում էին բարվոք վիճակում մուսուլման իշխանների՝ Շեդադյանների, Արտուխյանների,

Շահ-Արմենների, Դանիշմանների և մյուսների ենթակայության պայմաններում (Հ. Մանանդյան, Երկեր, հ. 6, Ե., 1985 թ., էջ 191):

Իհարկե, այս իրողությունը մեծ պատմաբանի մոտ չէր կարող մտածմունքի տեղիք չտալ: Ինչո՞վ բացատրել մուսուլման իշխանությունների այդ մտահոգությունը: Արդյո՞ք դա միայն սոցիալ-քաղաքական նպատակահարմարությամբ էր պայմանավորված: Ինչպե՞ս և ե՞րբ հայտնվեցին այդ «լոյալ» մուսուլմանական իշխանությունները Հայաստանում: Անվանի պատմաբանը փաստերի առկայությամբ նկատում է, որ դրանք արաբական տիրապետության շրջանում քրիստոնյա հայ խոշոր իշխանների վասալներն են եղել, որոնք սելջուկյան տիրապետության շրջանից սկսեցին էական դեր խաղալ Հայաստանի քաղաքական կյանքում (Հ. Մանանդյան, նույն աշխ., էջ 190): Անուղղակի կերպով այս գործընթացն են հիմնավորում նաև ժողովրդագրական տվյալները: Հայտնի է, որ Սենեքերիմ Արծրունու կողմից Վասպուրականը կայսրությանը հանձնելու ժամանակ նրա բնակչության քանակը հաշվվում էր մոտավորապես 1 միլիոն, Հայաստանի բնակչությունը՝ 5-6 միլիոն: Փաստենք, որ նույն ժամանակաշրջանում (11-րդ դ.) Անգլիայի բնակչությունը հաշվվում էր 1,5 միլիոն, Ֆրանսիայինը՝ մոտ 2 միլիոն: Մնացած հավասար պայմաններում, աճի նմանատիպ ձևում հայության թիվը 20-րդ դարում պետք է կազմեր 200-250 միլիոն: Այդպիսին էր ժողովրդագրական վիճակը հայության իսլամացման երկրորդ փուլի նախօրեին՝ 11-12-րդ դարերի սահմանագծում: Եթե առաջին փուլում իսլամացած հայերը հիմնականում ընդգրկվում էին արաբախոս մշակույթի ազդեցության ոլորտը, ապա երկրորդ փուլում իսլամացումը ընթանում է սելջուկ-թուրքական ուղղությամբ: Առաջավոր Ասիայի նշված ժամանակաշրջանը ուսումնասիրող մասնագետները գտնում են, որ Առաջավոր Ասիա տեղափոխված սելջուկ-թուրքերը 11-12-րդ դդ. չէին կարող գերազանցել 400-500 հազարի սահմանները: Ըստ էության, նույնն է հաստատում նաև թուրք պատմիչ Աբդուլ Չելեբին, ըստ որի 300 վրանաբնակ և ընչազուրկ մի ջոկատով օսմանցիները հիմք դրեցին հսկայական կայսրությանը: Խոշորագույն էթնոգ-

ռաֆ, թուրքագետ Գումիլևը իր ուսումնասիրություններում հանգել է այն եզրակացության, որ թուրք էթնոսը Առաջավոր Ասիայում 12-րդ դարից սկսած դադարեց ինքնավերարտադրվելուց: Այդ դեպքում ո՞րն էր մուսուլմանական իշխանությունների, ապա նաև Օսմանյան կայսրության կենսունակության աղբյուրը, որտեղի՞ց էին նրանք հայթայթում իրենց ինտելեկտուալ և մարդկային ռեսուրսները: Միանգամայն պարզ է՝ տեղային ազգաբնակչության հաշվին և առաջին հերթին հայության: Դրան էր ուղղված նրանց սոցիալ-տնտեսական, կրթական, կրոնական-մշակութային քաղաքականությունը՝ յանիչարների բանակի ստեղծումը, իմամ Զաֆարի օրենքը ժառանգության վերաբերյալ և հատկապես սոցիալական սելեկցիայի օսմանյան ռազմա-կրթական համակարգը, երբ յուրաքանչյուր ոք կասկած չուներ, որ խիզախության, ընդունակությունների և գիտելիքների դրսևորման դեպքում բաց է իր առջև զինվորական և քաղաքացիական աստիճանակարգը՝ մինչև մեծ վեզիր և սերասկյար: Ռուս-ամերիկյան խոշորագույն մտածող, հասարակագետ Պ. Սորոկինը օսմանյան սոցիալ-կրթական համակարգը համարել է աշխարհի ամենաազատ և խթանող սելեկցիոն համակարգը: Օսմանյան սոցիալ-քաղաքական, կրթական համակարգին նույն բնութագիրն է տվել նաև անգլիացի անվանի պատմաբան Ա. Թոյնբին:

15-16-րդ դարերը ընդգրկած այս և մյուս փոփոխությունները սկիզբ դրեցին հայերի իսլամացման երրորդ փուլին: Այս անգամ ուղղությունը օսմանյան-թուրքականն էր: Այս փուլի առանձնահատկությունն այն էր, որ իսլամացումը ընդգրկում է հասարակության լայն շերտերը և հատկապես գյուղացիությունը, որը կանգնել էր իր հողը, սեփականությունը կորցնելու սպառնալիքի առջև: Ֆեոդալական հասարակության մեջ հողը գյուղացու ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և քաղաքական ինքնուրույնության և ազատության հիմքն էր: Հայ իրականության մեջ այն ավելի մեծ դեր է խաղացել: Ինչպես գտնում է բազմավաստակ պատմաբան Ս. Հակոբյանը «արտադրության սեփական միջոցների վրա հիմնված գյուղացու անհատական տնտեսությունը դիմադրողական մեծ ուժ է ներկայացրել՝ ֆեոդալ

հողատերերի բոլոր հնարավոր ոտնձգություններից գյուղացիների անձը և տնտեսությունը պաշտպանելու համար» (Ս. Հակոբյան, «Հայ գյուղացիության պատմություն», հ. 1, 1957 թ., Եր., էջ 472-473): Այն նույն դերն է կատարել նաև օսմանյան տիրապետության ժամանակ: Հայ գյուղացին ընկրկեց իմամ Զաֆարի օրենքի առջև, սակայն պահպանեց իր հողը և արտադրության սեփական միջոցները: Ժամանակակիցների վկայությամբ 16-րդ դարից սկսած իսլամ ընդունում էին ողջ գյուղերով, բնակավայրերով, անգամ գավառներով: Մեր կարծիքով, մի խնդիր այստեղ կարևորվում է, առանց որի հնարավոր չէ պարզել անցյալի և առկա էթնո-կրոնական ձևափոխումների հիմքը: Այդ իրողությունը հայ հասարակության ինքնատիպ կազմակերպմանն է վերաբերում: Ֆեոդալիզմի հիմնահարցերով զբաղված մեր բոլոր ուսումնասիրողները մատնանշել են հայկական ֆեոդալական հասարակության հետևյալ առանձնահատկությունները. տոհմական, ազգակցական, բարեկամական կապերի առկայությունը, հավասարություն, արդարություն, համերաշխություն գաղափարների ամրությունը (տես Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Ս. Հակոբյան, Ս. Պողոսյան, Լ. Բաբայան և ուրիշներ): Ունենալով ամենալավ ինքնապաշտպանական մեծ հնարավորություններ՝ այս և նմանատիպ այլ իրողություններ հիմնվել են հողի տոհմական, տնային, ցեղային, համայնքային սեփականության վրա: Եվ պատահական չէ, որ այսօրվա բազմազան էթնո-կրոնական միավորները, որոնք ապրում են մեր պատմական հայրենիքում՝ զազաները, ալևիտները, Մնգոյենք (Մամիկոնյանները), Բագոյենք (Բագրատունիները), Ռշկոյենք (Ռշտունիները) և այլն, հիշեցնում են հայ հասարակության նախարարական-տոհմական (տուն, ազգ) կազմավորումները:

Ավարտելով մեր անդրադարձը մահմեդական հայերի պատմության հարցի շուրջ ավելացնենք, որ այսօր մեր պատմական հայրենիքի էթնո-կրոնական խայտաբղետ աշխարհը (մի քանի տասնյակ և ավելի էթնո-կրոնական, լեզվական միավորներ) իրենց պատմական արմատներով, մշակութային-արժեքային համակարգերով ունեն զարգացման շատ որոշակի ենթադրական՝ միավորվելու մեկ միասնական քաղաքակրթության մեջ:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ



Համբիկ ՍԱՍՈՒՆԵԱՆ

«Դրօշակ»-ի ընթերցողներին ենք ներկայացնում արդեն քառորդ դարից ավել անազատության մեջ գըտնվող Համբիկ Սասունյանի նամակներից մի քանիսը, որ հասցեագրված են հայաստանաբնակ 80-ամյա Անժելա մայրիկին, ում հետ նա քսան տարվա նամակագրական կապ է պահպանում, հայկական բանակի զինվորներին, գրող, հրապարակախոս Գրիգոր Զանիկյանին եւ Երեւանի Սիլվա Կապուտիկյանի անվան դպրոցի աշակերտներին:

Սրանք սոսկ անձնական կյանքի դժվարությունները նկարագրող նամակներ չեն. սրանք հեղինակի՝ հայրենասիրության վերին ոլորտները հասած մարդու մտքի, զգացմունքների անկեղծ արտահայտություններ են:

Բանտը, թերեւս, միայն ֆիզիկական շարժումն է կարողանում բանտել, մտքի, զգացմունքի շարժումն անկասելի է...



22.9.06

Շատ սիրելի Անճելա մայրիկ,

Նախ կը հարցնեմ անգին որպիսութիւնդ եւ առողջութիւնդ, յուսամ լաւ ու հանգիստ էք, ամէն բան բարի ընթացք ունի ձեր համար: Շատ ուրախացայ ստանալով նամակդ, ձեր ընտանեկան լուսանկարները եւ Արցախի մասին գիրք-ալպօմը:

Սիրելի Անճելա, կը ցաւիմ ըսելու, թէ լաւ լուր չունիմ հոսկէ... օգոստոս 31-ին ներկայացայ նահանգի 2 պատասխանատուներուն, նրանք ուժը ունին զիս ազատ արձակելու կամ 1-ից մինչեւ 5 տարի մերժելու ազատ արձակուելու հնարաւորութիւնը: Առտու ժամը ինչ որ 9:00 էր, մի քանի րոպէ փաստաբանիս հետ խօսելէ ետք մտանք մեծ սենեակ մը, ուր կային նահանգի 2 ներկայացուցիչները՝ սպիտակ ու մեքսիկացի, եւ 2 բանտապահ: Հոն էին նաեւ Լոս Անճելըսի ներկայ թուրք հիւպատոսը, ուրիշ թուրք ներկայացուցիչ մը, եւ Լոս Անճելըսի դատախազը: Նրանք իրենց հետ նամակներ բերած էին Լոս Անճելըսի քաղաքապետարանէն, 2 ոստիկանապետերէ, եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարէն, բոլորն ալ դիմած էին թէ զիս ազատ չարձակեն... 3 ժամ տեւեց: Խօսեցանք դէպքի մասին, խօսեցանք բանտի կեանքիս մասին, խօսեցանք, թէ ի՞նչ եմ անելու, եթէ ազատ արձակեն զիս: Պատմեցի իրենց ցեղասպանութեան մասին, թէ թուրքերը ինչեր արեցին հայ ազգին, խօսեցայ, թէ նրանք Հայաստանի 70%-ը գրաւած կը պահեն, պատմեցի, թէ նրանք մինչեւ օրս կուրանան իրենց գործած հրէշային ցեղասպանութիւնը եւ չեն ուզեր խաղաղօրէն լուծել հարցը: Ըսի թէ այս բոլորը խոր ազդած էին վրաս... Այսպէս՝ 3 ժամ խօսեցանք: Բոլորիս դուրս ղրկեցին եւ ինչ որ 45 րոպէ ետք՝ վերադարձանք: Նրանք յայտնեցին թէ իմ գործած ոճիրի եւ անոր սկզբից մինչեւ վերջ մտածուած-ծրագրուած ըլլալուն պատճառաւ եւ իմ տարիների՝ լուռ մնալու, ցաւակցութիւն չյայտնելու եւ տակաւին վտանգաւոր ըլլալուս պատճառաւ, մինչդեռ նահանգային

հոգեբանն իսկ գրած էր թէ ես վտանգաւոր չեմ, թէ շատ չնչին է կարելիութիւնը, թէ ես կրկին յանցագործութիւն գործեմ, 4 տարի մերժեցին՝ այսինքն իմ յաջորդ ազատ արձակուելուս կարելիութիւնը 2010-ին է՝ անշուշտ այդ հաստատ օր չէ, շատ հաւանական է թէ 2010-ին եւս մերժեն մի քանի տարիով:

Առաջին անգամն էր, որ ներկայացայ նրանց առջեւ, եւ նրանք առաջին անգամ միշտ կը մերժեն բոլորին: Երկրորդ՝ նրանք կարող էին 5 տարիով մերժել, փոխանակ 4-ի՝ դրա համար պէ՞տք է ուրախ ըլլանք:

Ուրեմն՝ յաջորդին, երբ ներկայանամ նրանց, 28,5 տարի բանտարկուած կը լինեմ: 28-ը իմ սիրած թիւն է:

Սիրելի մայրիկ, մի քանի օր տխուր էի, բայց Սալբին (կինը, ում հետ ամուսնացել է բանտում - Գ. Ջ.) ինձ ուժ տուաւ: Նա իմ հերոսուհին է:

Սիրելիս, այս նահանգին մէջ նոյեմբերի ընտրութիւններուն բազմաթիւ բանաձեւեր կան բանտարկեալների դէմ, կարծես թէ արդէն բաւական խիստ չեն, ուզում են նոր օրէնքներ ընդունել, որոնցից ոչ մէկը լաւ չէ մեզ համար: Ուզում են նոր օրէնք ընդունել, որը բանտարկեալներիս, երբ ներման յանձնախումբին ներկայանանք, կարենան մինչեւ 15 տարի եւս մերժել ազատութիւնը: Ներկայիս կարող են մերժել 1-ից մինչեւ 5 տարի, եթէ ընդունուի նոր օրէնքը, կը դառնայ 1-ից մինչեւ 15 տարի մերժում, երբ ես 2010-ին ներկայանամ նրանց եւ նրանք որոշեն 10 կամ 15 տարի մերժել, այդ նշանակում է մինչեւ 2020 կամ 2025 ազատ արձակուելու առիթ չեմ ունենար: Այս նահանգը իր խիղճը կորսընցուցած է, ուզում է մարդ 30-40-50 տարի բանտարկուած պահել: Իմ խուցի ճիշտ դիմացը կայ ծեր բանտարկեալ մը, նա 45 տարիէ բանտն է:

Սիրելի մայրիկ, սրտանց շնորհակալ եմ քեզմէ, որ միշտ ինձ հետ ես, կը ջանաս օգնել զիս, լաւ ընկեր, մեծ քոյր ես ինձ: Շատ երախտապարտ եմ քեզ, իմ ճշմարիտ ընկեր:

Բարեւներս բոլոր սիրելիներուդ: Կարօտով կսպասեմ նամակիդ:

Սիրով՝ Համբիկ Սասունեան



Ազգային բանակի զինուորներին

Արդէն 25 տարի եւ 5 օր է, որ այստեղ եմ... Այդ օրը պատրաստակամ ու ինքնավստահ էի, բոլորովին համոզուած, որ հայերիս համար այլ ելք չէ մնացած: Լաւ գիտէի, որ հայ դատը Քրիստոսից աւելի արդար է, որ հայ ժողովրդի 60-65 տարիների խաղաղ պայքարը, արցունքները, աղօթքները, ցոյցերը, բոլորը, բոլորը իզուր են, արդարութիւնը այս աշխարհում շատ թանկ է, այն ձեռք բերելու համար պէտք է այլ քայլերի դիմել: Պատմութիւնն անգամ վկայում է՝ երբ տկարը, խեղճը արդարութիւն է աղերսում, ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, ուստի նա ճարահատ խենթ-խելառ է դառնում, զէնքի դիմում:

1983 թուականին Հայաստանի անկախութիւնը, առաւել եւս հայկական բանակը երազ, ցնորք էր, ուստի մե՛նք՝ սփիւռքահայ մի խումբ խենթեր ու խելառներ, մարտախմբեր կազմեցինք, Թուրքիայի նման բռնակալ պետութեան դէմ զինուած պայքարի ելանք...

Ինչպես մեր մեծ բանաստեղծն է գրել.

Երբ չի լինում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար...

Ես սիրում էի, հիմա, աւելի քան երբեք, սիրում եմ Հայաստանը, իմ ժողովրդին, Ռաֆֆիին, Նժդեհին, եւ իհարկե՝ Արդարութիւնը: Արդարութիւնը, որ նոյնքան թանկ է, որքան Արժանապատուութիւնը, Ազատութիւնն ու Հայրենիքը: Մի անգամ էլ կրկնեմ՝ Արդարութիւնը վախկոտի համար չէ. եթէ զէնք չունես, կռուել չգիտես, թշնամին է քո երկրի, ժողովրդի, մշակոյթի ու քաղաքակրթութեան տէրը:

19-ը տարեկան էի, երբ ինձ ձերբակալեցին ու դատեցին, դատախազը շատ ճիգ, ջանք ներդրեց, որպէսզի ինձ մահապատժի ենթարկեն, բայց դատաւորները գտան, որ շատ ջահել ու... գեղեցիկ եմ, ուստի ցմահ բանտարկութեան դատապարտեցին:

Իմ կալանաւորման 25 տարիներին շատ բան է փոխուել: Ես հեռու եմ իմ Հայրենիքից, սակայն օր ու գիշեր ապրում եմ նրա տնտեսական ու քաղաքական յաջողութիւններով, մանաւանդ հայկական բանակի՝ Հայաստանի ապահովութեան երաշխիքի շարունակական հզօրացմամբ, մարտունակութեամբ ու խիզախութեամբ, անգամ արդիական զէնքերի հայթայթմամբ: Գիտեմ, 44 տարեկաններին չեն զօրակոչում, սակայն ես երազում եմ իմ ազգային բանակի շարքային, թէկուզ կամաւոր զինուորը դառնալ, իմ ուժերով, կարողութիւններով, հնարաւորութեան սահմաններում, յետագայ հզօրացմանը նպաստել:

Հայ զինուորներ, ես ձեզ հետ ուզում եմ անկեղծօրէն խօսել, առայժմ խօսել թղթի ու թանաքի միջոցով, ինչպէս տղամարդը տղամարդու հետ:

Աշխարհում միայն մի հայ ժողովուրդ գոյութիւն ունի, նրանք, ովքեր ուզում են պառակտում սերմանել, մեզ տարանջատել հայաստանցիների, արցախցիների ու արտերկրացիների, դաւաճաններ են:

Մեր սերունդը պիտի կտրականապէս պայքարի նման թրքամէտ մտայնութեան դէմ, որովհետեւ հայը չի կարող հային իր լիարժէք հայրենակիցը չհամարել, չսիրել, անգամ ատել այստեղ կամ այնտեղ ծնուած լինելու համար:

Հայերին միայն երկու մասի է հնարաւոր բաժանել՝ նրանց, ովքեր անկախ այն բանից՝ Հայաստանո՞ւմ են ծնուել, Արցախո՞ւմ, թէ՞ արտերկրում, սիրում են իրենց Հայրենիքը, ձգտում են ծառայել Հայաստանին ու հայ ժողովրդին, եւ նրանց, ովքեր իրենց Հայրենիքի համար օգտակար ոչինչ չեն անում, ընդհակառակը՝ պարտուողականութեան ու անելանելիութեան որոմն են սերմանում:

Ես վաղուց եմ համոզուած եղել, որ մեր սերունդը պիտի բուժի Հայաստանի վէրքերը, այդ համոզումով մենք պիտի ծառայենք մեր երկրին ու ժողովրդին:

Մէկ ազգ, մէկ Հայրենիք՝ սա պիտի լինի մեր կարգախօսը, քանի որ բոլորս էլ սիրում ենք Մաշտոցին, Մասիսն ու Սեւանը, Եռագոյնը, Նժդեհին, մասունք դարձած մեր ազգային սրբութիւնները:

Ինձ մտահոգող երկրորդ հիմնահարցը մեր բանակի օդուժն է, ես այդ բնագաւառում մասնագէտ չեմ, բայց երազում եմ, որ մեր զինուած ուժերը թէ՛ ցամաքում եւ թէ՛ օդում հզօր լինեն: Ու քանի որ պարբերաբար տեղեկանում եմ՝ Ադրբեջանը արդիական զէնքեր ձեռք բերելու համար Հայաստանից մի քանի անգամ աւելի է գումար ծախսում, Ռուսաստանից, Ուկրաինայից, Թուրքիայից եւ անգամ Պակիստանից բարձր վճարումով ռազմական



մասնագէտներ է հրաւիրում, կարծում եմ արտերկրի հայութիւնը պիտի իր հնարաւորութիւնները մէկտեղի, հայկական բանակին նաեւ նիւթապէս աջակցի:

Իմ զինուոր ընկեր, ես քեզնից հեռու, բայց մտքով միշտ քո կողքին եմ, հպարտ եմ քեզնով, քանի որ մեր այդքան երկար տառապած ժողովրդի արցունքները սրբել կարողացար: Հպարտ եմ նաեւ այն բանի համար, որ մեր անկախ պետութիւնը ազգային բանակը զօրացնելու, էլ աւելի մարտունակ դարձնելու համար միջոցներ չի խնայում: Գոհունակութեամբ եմ կարդում հայկական բանակի 15-րդ տարեդարձի կապակցութեամբ հրապարակուած այն բոլոր նիւթերը, որոնք այս կամ այն կերպ ստանում եմ:

Փառք ու պատիւ հայոց բանակին, փառք ու պատիւ քեզ, հայ զինուոր, քա՛ջ զինուոր...

Լսել եմ նաեւ այսպէս կոչուած «Եհովայի վկաների» մասին, որոնք չեն ուզում հայկական բանակում ծառայել, պաշտպանել մեր Հայրենիքը: Ես կրօնով շատ քիչ եմ հետաքրքրւում, բայց գիտեմ, որ քրիստոնէութիւնը վախկոտների կրօն չէ, աշխարհի ամենահզօր երկրները Քրիստոսին են դաւանում: Ծառայելով աշխարհում առաջին քրիստոնեայ պետութեանը, մենք ծառայում ենք Աստծուն, Աստծոյ ամենահաւատարիմ ազգին՝ հայ ազգին: Ուրեմն՝ այդ «Եհովայի վկաներն» իրենց վախկոտութիւնն ու ներքինութիւնը թող չփորձեն քօղարկել Աստծոյ անունը շահարկելով: Ամո՛թ նրանց, նրանք հայ չեն, հայ ժողովրդի հետ կապ, առնչութիւն չունեն: Իր կեանքը արժանապատիւ, տղամարդավայել ապրում է միայն նա, ով անմնացորդ է նուիրւում իր երկրին:

Ինքներդ ինձնից լաւ գիտէք, որ Հայաստանի հայութիւնն այժմ աւելի բարեկեցիկ է ապրում, քան տասը տարի առաջ, ուրեմն տասը տարի յետոյ անհամեմատ բարեկեցիկ կապրի:

Համբուրում եմ ձեր քաջ-հպարտ ճակատները, իմ զինուոր եղբայրներ, բոլորիդ սիրում, իւրաքանչիւրովդ հպարտանում եմ:

Ձեր զինուոր եղբայրը՝
Համբիկ Սասունեան



17.07.08

Սիրելի Գրիգոր Ջանիկեան

Նախ կը հարցնեմ անգին որպիսութիւննիդ եւ առողջութիւննիդ, յուսամ լաւ ու հանգիստ էք, նոյնպէս ալ ձեր սիրելի ընտանիքը:

Այս մի քանի տողերը կը գրեմ ձեզմէ խնդրելու, որ ինձ օգնէք: Պէտք ունիմ Ձեզ, Հայաստանի նոր իշխանութիւններին: Իմ պատմութեան մասին ծանօթ էք: Շարունակ մտածում եմ թէ ինչպէս կարող եմ հասնել Հայաստան: Այս նահանգը՝ Քալիֆորնիան, շարունակ աւելի խստացնում է իր օրէնքները, որ բանտարկեալները ազատ չարձակուին: Եթէ 100 «կեանք» ունեցող (ցմահ դատապարտուած- Գ. Ջ.) բանտարկեալներու կարող են ազատ արձակել, 99-ին մերժում են, 1-ին ազատ արձակում: Գիտնալով իմ հարցի յատուկ պայմանը, հա-

ւանաբար ինձ ազատ չեն արձակեր մի քանի տասնեակ տարիներ եւս: Երեք ամսից ընտրութիւններ կան, PROLE BOARD կոչուածները, որոնց խղճին ենք մնացել, փորձում են աւելի խստացնել օրէնքը, այժմ 1-ից մինչեւ 5 տարի մերժում են ազատ արձակուելը, այդ օրէնքն ուզում են խստացնել, դարձնել 1-ից մինչեւ 15 տարի մերժում... Այսինքն, երբ 2010-ին նրանց ներկայանամ եւ ինձ 10 կամ 15 տարիով մերժեն, մինչեւ 2020-2025 կը մնամ հոս:

Ազգ-Հայրենիքի համար բանտարկուիլ-մեռնիլը հարց մը չէ, եթէ 10 կեանք էլ ունենամ, բոլորը իմ ազգին է պատկանում: Հարցը այն է, որ ես հաւատում եմ թէ կարող եմ հոսկէ ազատ արձակուիլ, հասնիլ Հայաստան, հետեւաբար մտածում եմ՝ եթէ կարող եմ լողալ, ինչո՞ւ խեղդուեմ, ինչո՞ւ հակառակորդին տամ մի երիտասարդ կեանք բանտի մէջ մաշելու հաճոյքը, երբ ան Հայաստանում կարող է ծառայել իր ազգին:

Շուտով 27 տարի կը լինի, որ խուցում եմ, անցած օրը մտածում էի, թէ արդեօք Հրանդ Տինգի ոճրագործը քանի՞ տարի պիտի նստի: Հաւանաբար 8-10՝ շատ-շատ 12 տարի, եւ նա բանտում ինչ ուզի կունենայ, ոչնչից զրկուած կը լինի...

Թուրքերը ամէն բան անում են, որ հոսկէ դուրս չգամ: Իմ Հայրենիքը ինձ բացարձակապէս ոչինչ պարտական է, բայց ես նրան պէտք ունեմ, ես չեմ հոգնել եւ ուզում եմ ծառայել իմ ազգին: Նոյնը անձնական գետնի վրայ՝ կին ունեմ որ տառապում է ինձ հետ, ինձ համար, ուզում եմ հասնիլ մեր երկիրը, ընտանիք կազմել: Ես՝ 45, նա 41 տարեկան է, եւ զաւակ չունենք:



Թերթերի մէջ շարունակ կարդում եմ, թէ չգիտեմ այսքան կամ այնքան մարդ Հայաստանի քաղաքացի են ընդունուել, ես 10 տարի է մեռնում եմ, որ Հայաստանի քաղաքացի դառնամ, շարունակ մնում եմ յուսախաբ:

Վերջերս լսում եմ, թէ Հայաստան, հոս-հոն, աշխատանք են տանում այս հարցով, մի՞թէ ճիշտ է: Ես ալ նամակ եմ գրել Նախագահին, դիմել եմ քաղաքացիութեան եւ ինձ համար միջամտելու հարցով, տեսնանք թէ ո՞ւր կը հասնի:

Անճելա մայրիկը շարունակ ասել է որ ձեզմէ խնդրեմ ինձ օգնեք: Ես չեմ ուզել ձեզ խանգարել, միւս կողմից ալ չեմ իմանում թէ ո՞վ ինչ է անում իմ հարցով եւ չեմ ուզել խաչաձեւում ըլլայ, գիտնալով հանդերձ թէ շարունակ յուսախաբ եմ մնացել: Մի՞թէ աւելի լաւ է բոլոր ուժերին դիմել եւ յուսալ որ մէկը կը յաջողցնէ, քան մէկին վստահիլ եւ մնալ յուսախաբ:

Ինչ որ երկու շաբաթ առաջ 6-8 պատանիների կողմէ գրուած նամակ մը ստացայ (ստորեւ հրապարակվում է պատասխանը - Գ. Ջ.), նրանք գրել էին թէ իրենց խօսել էք իմ մասին, խանդավառել: Շնորհակալ եմ ձեզնից, ինձ արդէն շատ էք օգնել: Ձեր ու ձեր նման հայորդիների մէջ ես տեսնում եմ մեր ազգի լաւագոյնը, մեր ազգի մաքուր արիւնը, ազգանուէր ոգի'ն:

Քաղաքացիութեան դիմումնագիրը լեցրել եմ ու ճամբել Հայաստան, յուսամ շիտակ մարդոց ձեռքն է եւ ես շուտով հայաստանցի կըլլամ: Միշտ եղել եմ հայաստանցի, միայն պէտք է թուղթերը կարգի դնել:

Կրկին շնորհակալ եմ, Գրիգոր, իմ զինուոր ընկեր:

Իմ բարեւները հայոց բանակին, յուսամ շարունակ ինքնաթիռներ, ուղղաթիռներ հասնում եմ մեր երկիրը, մեր փրկիչներն են նրանք:

Սիրով՝
Համբիկ Սասունեան

27.6.08

Երեւանի Սիլվա Կապուտիկյանի անվան դպրոցի 9-րդ «բ» դասարանի աշակերտ-աշակերտուհիներին

Շատ սիրելի Դաւիթ, Ժաննա, Ալլա, Միքայէլ, Անի, Նարեկ, Լուսինէ,

Կարդալով նամակներդ շատ հպարտ զգացի, շատ հպարտ եմ ձեզմով: Ապրի՛ք:

Բոլորս ալ ծանօթ ենք Թումանեանի խօսքերին՝ «Ապրէք երեխեք, բայց մեզ պէս չապրէ՛ք»: Մեծ բանաստեղծը շատ լաւ խորհուրդ տուեր է մեզ, մեր բոլորին: Երկու օր առաջ կարդացի մեծ հայրենասէր Սօս Սարգսեանի տուած հարցազրոյցը, ուր ան հարց կուտայ, թէ մենք ինչո՞ւ 600 տարի անկախ չենք ապրել, թէ ինչո՞ւ մենք մեր Հայրենիքի մէջ թափառական ենք եղել, թէ ոնց հայ իշխանները իրար գլուխ էին ուտում, բոլորը ուզում էին թագաւոր լինել: Եւ այսօր ահա՛ նոյն բանը կրկնւում է: Մի փոքրիկ երկիր մը, ուր կան մի քանի տասնեակ քաղաքական կուսակցութիւններ, 3,3 միլիոն Հայաստանի համար 40-60 հատ կուսակցութիւններ, Միացեալ Նահանգներ, որ 304 միլիոն ժողովուրդ ունի, 7 քաղաքական կուսակցութիւն կայ միայն: Մի խօսք կայ՝ զօրավարները շատ են, չկայ զինուոր... Մեր հայրենիքը ամենից շատ 4 կուսակցութիւն պէտք է ունենայ, ոչ աւելի:

Մեր ազգի մեծ վէրքը Հայաստանցիի-Արցախցիի-Սփիւռքահայի միջեւ եղած տգէտ անհասկացողութիւնը, տգէտ ատելութիւնն է: Հայաստանում Արցախցուն «թուրք» են կոչում, սփիւռքահայերին՝ «դրսեցի», եւ Արցախում եւ Սփիւռքում ալ մարդիկ շատ բաներ են կոչում Հայաստանցիին: Ինչի՞ վրայ է հիմնուել այդ բոլորը: Մէկը միւսին ի՞նչ վատութիւն է արել: Պատասխանը այդ հարցերի բոլորովին ոչի՛նչ է: Իրար են հայհոյում բոլորովին առանց իմանալու թէ ինչո՞ւ:

Մեր գործը, իմ լաւ ընկերներ, այդ հիմար տգիտութիւնը վերջ դնելն է: Մենք մէկ ազգ ենք, թշնամիները մեր՝ մեզ բաժնած են իրարից, քանզի երբ մենք միասին ենք՝ հզօր ենք, շատ հզօր, եւ ոչ ոք չի կարող մեր ոտքի տակ առնել: Մենք պէտք է մեր առաւելագոյնը անենք, որ մեր ազգը միանայ, դառնայ բռունցք մը: Մենք բոլորս էլ Հայկի, Մաշտոցի ու Մամիկոնեանների զաւակներն ենք, բոլորս էլ սիրում ենք Ռաֆֆին, Թումանեանը, Սիամանթօն, Սեւակը, Նժդեհն ու Անդրանիկը, մենք պէտք է շարունակենք նրանց գործը, անենք մեր առաւելագոյնը՝ հայը, հայ ազգը վերադարձնենք իր պատմական փառքին, առաքելութեանը:

Մեր Հայաստանում կան վէրքեր, կայ չքաւորութիւն, կայ փտախտ, կայ կաշառակերութիւն, կան շատեր, որոնք իրենց պաշտօնները շահագործում են: Մարզերում կայ շատ անգործութիւն, չքաւորություն, եւ շատերը ուղղուած են դէպի Ռուսիա: Մենք այդ բոլորին գիտակից ենք եւ նաեւ հասկանում ենք, թէ լալկանութիւնը, հայհոյանքները, պոռալ-կանչելը եւ նման քայլերը բացարձակապէս ոչինչ կը փոխեն: Միայն պայքարն է, որ վէրք կը բուժէ, սիրելի ընկերներ:

Հայաստանը շարունակ ոտքի է կանգնում, զարգանում է, վէրքերը բուժւում են, բանակը հզօր-մարտունակ է, ամէն կողմ հինը անհետանում է: Նորը-գեղեցիկը տեղն է առնում հին-տգեղին: Եւ Երեւանի յաջողութիւնները շատ շուտով



կը հասնին Տաւուշ, Շիրակ, Վայոց ձոր եւ ողջ Հայաստանի բոլոր անկիւնները:

Կեանքի մէջ ոչինչ այնքան թանկագին է, որքան Արդարութիւնը եւ Ազատութիւնը: Երբ չկայ արդարութիւն եւ ազատութիւն, բացի դրանցից ինչ էլ որ կայ, ոչինչ չի արժեր:

Մեր Հայրենիքում եթէ չկայ մինչեւ օրս ազատ դատարան-դատաւորներ, արդար դատախազներ եւ միլիցիա, այդ բոլորը մենք կունենանք, 2 թէ՞ 12 տարի ետք, այդ ձեր եւ իմ պարտականութիւնն է: Արդարութիւնը ձրի չէ, պէտք է պայքարել դրա համար:

Իմ լաւ ընկերներ, ճիշտ է, որ ես 27 տարի է բանտարկուած եմ: Սակայն դուք ձեր պատանի հասակում շատ աւելի էք տառապել, քան ես: Ես շատ աւելի կը նախընտրեմ բանտում ապրել, քան Լեւոնի իշխանութեան տակ: Ես հոս ջուր, հաց, լոյս եւ բնական գազ ունեմ: Յուսամ թէ Լեւոնը այս բանտի վարիչը չեն նշանակեր...

Իմ լաւ ընկերներ՝ միշտ սիրեցէք ձեր Հայրենիքը, միշտ սիրեցէք ձեր Ազգը: Միշտ սիրեցէք Արդարութիւնը, Ազատութիւնը, միշտ եղէք բարոյական, լաւ մարդ: Կեանքում միայն մէկ բան կայ, որ պէտք է ատեք՝ դաւաճանները, նրանք, որոնք կիսում են մեր ազգը, մեզ իրարմէ բաժանում:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, ես սիրում եմ Արցախցուն, սիրում եմ Հայաստանցին, Սփիւռքահայը, ռուսահայը, մենք բոլորս պէտք է սիրենք իրար, մեզ ատողները արդէն իսկ շատ են, մեզ իրարմէ բաժնել ուզող դաւաճանները շատ են, հայրենասէր՝ նշանակում է սիրել իրար, միասին ծառայել Հայաստանին, հայ դատին, հայ մշակոյթին եւ միշտ լինել քաջ, բարոյական եւ պատուական:

Մենք չենք ապրելու մեր նախահայրերի նման, մենք բոլորս մէկ ձայնով պէտք է երդուենք, թէ տէր ենք կանգնելու մեր Հայրենիքին, թէ մենք այլեւս զոհ չենք լինելու մեր Հայրենիքի թշնամիներին, մեր Հայրենիքի Սահմանադրութիւնը պիտի հաւասար համարենք Սուրբ Գիրքին, միշտ լինենք հաւատարիմ զինուորները մեր պաշտելու արժանի Ազգին, եւ բոլորս միասին վճռենք բուժել վէրքը Հայաստանի: Մի րոպէ իսկ չի կասկածիք թէ մի այնպիսի բան կայ կեանքի մէջ, որ մեզմէ մեծ է, թէ անկարող ենք այդ բանն անելու, մենք ունենք ուժը, ամէն բան ալ անելու, որ ցանկանում ենք, միայն, սիրելիներս, պէտք է միանանք, ըմբռնենք, թէ ի՞նչ է նշանակում Ազգ՝ Հայ ազգ:

Ես համբուրում եմ ձեր հպարտ հայու ճակատները, հպարտ եմ ձեզմով եւ ձեզնից խնդրում եմ պատիւ բերէք ձեր ազգին, Հայաստանին:

Բոլորս միասին պիտի տանենք ցաւը Հայաստանի:

Միշտ ձեր՝
Համբիկ Սասունեան



ՏԵՂԱՏԻՈՒԹԻՒՆ

Հասարակական տրամադրութեան ալիքն իջաւ: Լաւատեսութեան ազատ թռիչքը տեղի է տալիս հետզհետէ սկեպտութեան ու դողացնող անորոշութեան: «Խաղաղ», «օրինական» հռչակուած Յեղափոխութիւնը վերապահո՞ւմ է արդեօք անցանկալի անակնկալներ... Այդ է, որ կարծես գալիս է հաստատելու դէպքերի զարգացումը Տաճկաստանում: Քաղաքական յեղաշրջումների մեծ պրոցէսը ամենուրեք ռիթմային է, ելեւէջող ու մրրկոտ, և յանցաւոր միամտութիւն էր ենթադրել, թէ թիւրքական յեղաշրջումը պիտի կազմէր բացառութիւն այդ օրէնքից...

Դեռ ստուար են անցեալի հլու երկրպագուների շարքերը, որոնց համար կատարուած փաստը մարմնացումն է «անօրինականութեան» և օսմանեան դրօշակի ու հայրենիքի «սրբապղծման»:

Բռնակալութեան հիդրան դեռ ջախջախուած չէ. Նրա գլուխը դեռ ողջ է և, թէպէտ զինաթափ՝ շարունակում է հեռազդեցութեամբ, telepathie-ով, իր օձային թովքը տարածել արքայապաշտ ոհմակների վրայ...

Զարմանալի ոչինչ չը կայ այդտեղ. բռնակալութեան թէ գլուխը և թէ ոտքերը հնազանդում են միայն իրենց շարժման ներքին օրէնքներին:

Զարմանքի ու զայրոյթի նիւթ կարող են լինել միայն Ազատութեան, Յեղափոխութեան ղեկավարները, որոնք անուղղակի քաջալերում են յետադիմական այդ ծրագիրները... Այո՛, զարմանքի ու համաշխարհային վրդովմունքի նիւթ կարող է լինել միայն այն, որ երէկուայ սուլթանատեաց պարագլուխները այն աստիճան ոտնահարում են յեղափոխականի արժանապատուութիւնը, որ գնում են ողջագուրուելու այն բորենու հետ, որ երեսուն տարուց ի վեր լակել է մահմեդական ու քրիստոնեայ ազատասէրների արիւնը... Դա մի իրողութիւն է, որին կարող են ծափահարել Gaulois-ները ու Figaro-ները, բայց որը կը մնայ իբրև բացառութիւն յեղափոխութիւնների պատմութեան մէջ...

Բարոյական պօստուլատներ կան, որ մի յեղափոխական կուսակցութիւն չի կարող խախ-

տել, առանց ինքնասպան լինելու: «Երիտասարդ Թիւրքիայի», կամ աւելի ճիշտ, նրա իշխող հատուածի զուտ արևելեան մակիավելիզմը կարևոր են ոչ միայն իբրև լոկ սկզբունքի զանցառութիւն, այլ և իբրև մի ծանր վրիպում, որ շարունակ յուսադրում է ռեակցիայի պարագլուխներին:

\Կիսամիջոցների ու վարանումների քաղաքականութիւնը երբէք չի օգնել յեղափոխական տագնապների ընթացքում: Վճռականութիւնը նման պարագաներում մեծագոյնն է առաքինութիւններից: Երբ նա չկայ, երբ իշխում է երկչոտ օպպորտունիզմը, հակառակորդը գալիս է իրեն համար նպաստաւոր եզրակացութեան և թև է առնում: Դրա արդիւնքն է մայրաքաղաքի վերջին արիւնահեղ ընդհարումը երկու հակառակ բանակների միջև... բայց դա ոչինչ է համեմատած այն ողբերգութեան հետ, որ կատարւում է հայկական վիլայէթներում, շնորհիւ նոյն անվճռական տակտիկի: Դերակատարները ծանօթ դէմքեր են – քիւրդ ասպատակողները, որոնց գազանային սխրագործութիւններին նախագահում է տեղական պաշտօնէութիւնը...

Եւ քանի դեռ նա կայ, մեր խեղճ ժողովուրդը պիտի գալարուի մարդասպանների, պրոֆէսիոնալ թալանչիների սարդոստայններում, և ազատութեան ու հաւասարութեան բոլոր ծանուցումները պիտի մնան արգահատելի պատրանքներ:

Հայկական ջարդերի հեղինակների ձեռքով չի կարելի բարեկարգել Հայաստանը – այս պէտք է խոր արձանագրուէր նոր ռէժիմի ռահվիրաների գիտակցութեան մէջ: Նոր մարդիկ են պէտք՝ նոր սկզբունքները կիրառելու համար:

Սրանք տարրական ճշմարտութիւններ են և սահմանադրական մի կառավարութեան համար ամենաառաջնակարգ պահանջներ, որ սակայն ահա չորս ամիս է, սպասում են գործադրութեան:

Դրա փոխարէն՝ թիւրք պաշտօնական շրջաններին հաճելի է տարածել ինչ որ այլանդակ անհեթեթութիւն, եթէ չ'ասենք ինսինուացիա... Իբր թէ Դաշնակցութիւնը դիտմամբ ծանրացնում է հայ գաւառների վիճակը, որպէսզի առիթ ունենայ պահպանել տալ դիւանագիտական սեղանի վրայ 61-րդ յօդուածը, որ սահմանադրական նոր կառավարութիւնը աճապարանքով ջնջել է ուզում:

Mauvaise foi-ի ու չարակամութեան մեծ դոզ է պէտք ամբաստանելու համար մի կազմակերպութիւն, որ համերաշխութեան պրոպագանդի առաջապահն է եղել միշտ...

Հ.Յ.Դաշնակցութիւնը ոչ մի շահ չունի գիտակցաբար գունաւորելու առանց այն էլ խիստ գունաւոր իրականութիւնը, և այն էլ... պահպանելու համար դիւանագիտական մի դոկումենտ, որ դրոշմած է արիւնագոյն տառերով հայկական հեկատօմբների բուրգերի վրայ: Դաշնակցութիւնը, ընդհակառակը, կուզէր «հրաժարիմք» ասել այդ դաւաճան յօդուածին, որ նոր ռէժիմը իր սահմանադրական ընթացքով դարձնէր այն իրօք աւելորդ, իրօք մի non sens. բայց նոր թիւրք կառավարութիւնը կարծես ամեն բան անում է – յուսով ենք, անգիտակցաբար – որպէսզի հայ ժողովրդի մարտիրոսութիւնը շարունակւի և այդ յօդուածն էլ մնայ անջնջելի...

Կենտրոնական կառավարութեան այդ ընթացքը այնքան էլ չէր մտատանջի մեզ, եթէ չը տեսնէինք նրա համառ ձգտումը՝ գործելու նոյն անխռով անտարբերութեամբ դէպի «հպատակ» ժողովուրդների իրաւունքները, չը տեսնէինք նրա սիստեմատիկ քայլերը դէպի ազգայնական ուժեղ, շեշտուած գերիշխանութիւն, քայլեր, որոնք հայ տարրի վերաբերմամբ բարեկամական ոչ մի բնոյթ չունին և հակասում են երէկւայ հանդիսաւոր ծանուցումներին:

Հազիւ քաղաքակիրթ ու դեմոկրատ մարդկութիւնը ուրախութեան բացականչութիւններով սկսել էր գովք կարդալ օսմանեան տարրի հերոսական սթափման առթիւ - և ահա ձգտում են, մի զարմանալի անգիտակցութեամբ, նորէն հիասթափեցնելու այդ մարդկութիւնը, նորէն ամրացնելու նրա մէջ այն տխուր համոզումը՝ թէ մահմեդական Արևելքը ինքն իրան չի վերածնւի...

Մենք հաւատում ենք, որ Թիւրքիայում կատարուած վերիվայրումը հասուն, գիտակից տարրերի գործ է և ոչ «ստրուկների յեղափոխութիւն», որոնք մի տիրոջ տապալելուց յետոյ, յօժարակամ մատնում են իրանց՝ ուրիշ տէրերի կամայականութեան...

Նորայր Աղալյան

Սև խառակուսի կարմիր անապատում

Երևան, 2008թ., 288 էջ

ԷԴԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Փրկության ափի որոնումները արևմտահայությանը տարան դեպի երկրագնդի չորս ծագերը: Այսօր աշխարհի ո՞ր անկյունում գոնե մի հայ չկա, որ իր պապերի կամ ծնողների պատմածով չի վերապրել դարասկզբի ողբերգությունը, չի անիծել այն ոճիրը, որ անասելի դաժանությամբ պատուհասեց մեր ժողովրդին: Այս հատիկ-հատիկ հայերն էլ իրենց հերթին են եկող սերունդներին պատմելու, եկող սերունդներն էլ՝ եկող սերունդներին, ու այսպես հյուսվելու է մեր պատմության հաջորդ, հաջորդ ... հաջորդ էջը՝ մեկը մյուսից փառավոր ու գունեղ, մեկը մյուսից տաղանդավոր ու ստեղծագործ, բայց նաև՝ մեկը մյուսին հար ու նման, մեկը մյուսին առինքնող: Այդ պատմության էջերի տողատակից անընդհատ վեր է բարձրանալու գաղթի ճանապարհների փոշին, մեզ են նայելու խոշտանգված հայերի տառապյալ աչքերը, առյուծ ֆիդայիների դաժան ու քաղցր դեմքերը և, որպես արդար հատուցման մարմնավորում, Սողոմոն Թեհլերյանի մտավորական դիմագիծը:

Գաղթի ճանապարհները տարբեր են եղել, բայց այդ ճանապարհներին հայորդյաց ճակատագրերը ջրի կաթիլների պես նման են իրար: Նույն տառապանքն է, մաքառումը, հույսը՝ ապրել, ապրել ... ապրել: Ահա թե ինչպես է Նորայր Աղալյանի վեպի հերոսը՝ Ներսես Ալթունյանը դիմում Երզնկայի Սուրբ Փրկչի եկեղեցու բակում ժողովված մարդկանց, ովքեր ծածուկ հավաքվել էին այնտեղ՝ աքլորականչի հետ ճանապարհ ընկնելու համար.

- Դժվար և տաժանելի է լինելու մեր ճամփան դեպի սուրբ լյառն Արարատ, բայց ավելի ծանր կլինի պատասխանատվության խաչը, որ ծանրացած է բոլորիս և ամեն մեկուս վրա: Մենք ողջ մնացած հայերն ենք, լավ գիտցեք, վերջինը, ամենավերջինը... Աշխարհում այլևս չկան հայեր մեզմե բացի, բոլորը մեռան, արդեն բոլորը նահատակ են... Մենք կարող ենք մոխրակույտից հարություն տալ մեր Էրգրին՝ եթե ապրենք, իսկ եթե մեռնենք՝ նրան գերեզման կդնենք վերջնականապես... Կարգելեմ մեռնել... Կարգելեմ մեռնել մանուկներին, նրանք են, որ ծնելու են նոր հայեր, խոսելու են հայերեն և պատմելու են աշխարհին համայն դժնի պատմությունը այս:

Վեպի հիմքում ընկած է 1918 թվականին Երզնկան լքած վերջին հայ ընտանիքներից կազմված գաղթի քարավանի պատմությունը՝ արդեն հիշատակված աքլորականչից մինչև Արաքսի գետանցումն ու հայրենի եզերքում ապաստանելը:

Ներսեսը չի տեսնում այդ երանելի պահը: Մգրոն՝ հայ քաջորդին է հետևում գետանցումին: Նրա տեսադաշտում են բոլոր ողջ մնացածները: Հաշվում է՝ թվով հիսուներեք մարդ, ինքը՝ հիսունչորսերորդն է: Ինքն ու հավատարիմ ձին:

-Երբ դուրս եկան Երզնկայից, 178 մարդ քայլում էր պատմության առջևից և ուզում էր փրկվել: Ապրել, ապրել: Շարունակվել... 178 մարդ ժողովուրդ էր: Ժողովուրդը թվով չէ, այլ էությամբ, արյունով, սրտով և ուղեղով, իր պատմու- թյան մատյանով:

Ճիշտ այդպես էլ մի ողջ ժողովուրդ էր 178-ից մնացած հիսուներեք հոգին: Ժողովուրդ էր իր ձիու հետ միայնակ մնացած Մգրոն:

Ձին քայլ է անում դեպի գետը, բայց Մգրոն զսպում է նրան: Մգրոն իր գործը Էրգրում ավարտած չի համարում.

-Ձին և Մգրոն շրջվեցին: Նրանց առջև գերված, բայց ոչ ստրուկ երկիրն էր: Մգրոն խթանեց նժույգ ձին և սլացավ դեպի անսկիզբ, հար ու հավիտյան երեկվա օրը:

Երզնկացիների՝ յաթաղանից փրկված բեկորները հասան Երևան՝ հայրենիք բերելով Հայոց Մեծ եղեռնի պատմության իրենց բաժին հասած պատառիկը: Այդ քարավանի մեջ էր նաև Մարտիրոս տղան, ով Երզնկայի հայոց գերեզմանատան մեջ սրախողխող արված ծնողների ողջ մնացած միակ զավակն էր: Հենց նա էլ, տարիներ անց կամուսնանա ու կշարունակի Աղալյանների տոհմագրությունը, որպեսզի իր և իր բախտակիցների պատմությունը կամրջի սեփական զավակների ժամանակին: Սրանք էլ իրենց սերունդներին են պատմելու: Այս գրքով, փաստորեն, Նորայր Աղալյանը՝ Մարտիրոսի տղան, իր պարտքը կատարած կարող է համարել:

Գրքի գեղարվեստական արժանիքները գնահատելու շնորհակալ գործը թողնելով ընթերցողին ու գրաքննադատներին՝ մի դիտարկում այնուամենայնիվ կփորձենք կատարել, ավելի ճիշտ մի զուգահեռ անցկացնել հայ մեծ վիպասքի հերոսների՝ Արտավազդի, Փոքր Միհրի ու Նորայր Աղալյանի Ոսկե ձիու վերջին հանգրվանների միջև: Կանաչ երկրի կարոտը ձիուն ստիպում է փախչել Երևանի փոշոտ ու ծուռմեջք փողոցներից և անցնել Արաքսը: Ահա նա արդեն Արարատի հավերժական ձյունե գագաթին է, որտեղից երևում է կանաչ երկիրը: Նա զմայլված նայում է հեռաստաններին: Հանկարծ իր կորուստն ըմբռնելով՝ ցավից վրնջում ու այդ դիրքում քարանում է, դառնում լուսափայլ մի արձան:

- Ասում են՝ նա մինչև հիմա էլ այնտեղ է՝ հայրենիքի բաժան ափերի միջև, և խրխնջում է հսկա զանգի ձայնով. ելեք, զենք-զրահ հագեք, զենք-զրահ, զենք-զրահ, զենք-զրահ...

Ես հավատում եմ:

Մենք էլ հավատանք: Ժողովրդի իմաստությունը չի կարող դավաճանել: Բացառված չէ, որ հենց Մասիսի հավերժական ձյուների մեջ է թաղված մեր ժողովրդի կրած տառապանքներին վերջապես որպես հեռավոր անցյալի մի տխուր դրվագի նայելու և առաջ գնալու խնդրի բանալին:



Սերգեյ Նարազյան

Գոյություն ունի ուժ, գոյություն ունի մեղմու-թյուն, սակայն Սերգեյ Նարազյանի մոտ ուժը և մեղմու-թյունը միահյուսված են, ճիշտ այնպես, ինչպես իր ծագերին ե-րախով տեղափոխող էգ առյուծի մեջ է միահյուսված: Դեմքերը, որ արվեստագետը բացահայտում է մեզ համար, խախտում են ձևի սահմանները, ընդգրկելով ողջ անց-յալ կենսական ուղին՝ լոկ մի ժպիտի մեջ, ժպիտ՝ որն առանձնանում է կնճիռների հողմա-պտույտից:

Սա պահի բերկրանքի է, որ պատճենված է հիշողության մեջ: Սա ամենի սկիզբն է: Այստեղ արդեն իր սլացքն է սկսում արտահայտչականությունը, պատկերելով ակնթարթ տևող զգացմունքները, որոնց գաղտնարանը դեմքի խոր ակոսներն են՝ որպես անցյալի կնիք: Անցյալն է, որ կռում է մարդուն, իսկ միտքը նկատում և վերծանում է անցյալը: Ինչպես արդեն ըմբռնեցինք, Սերգեյ Նարազ-յանը արտահայտչականությանը մեծ տուրք տվող նկարիչ է:

Նա կարողանում է ըմբռնել և կտավի վրա ամփոփել տվյալ գոյության բոլոր փու-լերը և, չբավարարվելով հասնում է քնքշության՝ գործածելով պաստել. այստեղից էլ մեծամասնությամբ ծնունդ է առնում հայրենաբաղձությունը, ինչպես և աշնանային ե-րեկոյի գույներով ներծծված հիշողու-թյունը: Հենց կյանքի աշունն է, որ ոգեշնչում է արվեստագետին, այդ աշունն է, որ մսե և ոսկրե ժայռաբեկորից առանձնացնում է տարիների շնչից կոպտացած, բայց և միաժամանակ քնքշացած այդ դեմքը:

Սերգեյ Նարազյանը մի արվեստագետ է, որն իր զգայունակությամբ կարողա-նում է միաժամանակ պատկերել ձևերի հզորությունը, նրանց ներուժը, նրանց քնքշանքը՝ պարփակված գեղա-նկարչական լեզվի վիրտուոզու-թյան մեջ, հաճախ՝ սիմվոլիստական դրսեվորումներով, արյան հևքով, ինչը կենսական մեծ ուժ է հա-ղորդում այս մեծ նկարչին, որը ստեղծագործում է Հայաստան աշխարհում:

Քրիստիան Ժերմակ
Փարիզ

Բ.Պաստերնակի «Դոկտոր Ժիվագո» վեպի համար իլյուստրացիաներից

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ

ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ Պատօնական թերթ